



Ա Պ Ր Ի Ն 1981

digitised by A.R.A.R.@



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Վ. ՕՇԱԿԱՆ	Փոխստակամը
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Ականեալ ձայների արեան յիշողութենէն
Մ. ՊԶԱՔՃԵԱՆ	«L'Imprévu»
Փ. ՃԵՐԱՆՆԵԱՆ	Սողոմ քաղաքի մէջ
»	Արցունքներ
Ժ. Խ. ԺՊՐԱՆ	Մարգարէն
	Թարգմ. Եր. Տ. Գարանեան
* * *	Վերստին յանելուած
ՀՐ. ՄԱԹԵՒՈՍԵԱՆ	Իր երկրի գաւակը
Մ. ԳԱԼՇՈՅԵԱՆ	Սկզբունքի եւ ելակէտ
ՍՏ. ԹՈՓԶԵԱՆ	Կապույտ աշխարհ
Վ. ԲԱԼԱՅԵԱՆ	Ջաբթի՛ր, լաօ, մըռնիմ քնդի
Շ. ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ	Զապէլ Եսայեանի «Արդեօք»
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Գրքի վերադարձը
* * *	Նշումներ

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ


Ի. ՕՍԲԻ. ԹԻԻ Դ Ա. ՊԻԻԼ 1981 ԳԵՐԳԻՐ

Վ. ՕՇԱԿԱՆ

Փ Ա Ւ Ս Տ Ա Կ Ա Ն Ը

Ամէն տեղում, որ Չատուկայ կամ ամբան արձակուրդին Միջերկրա-
կանեան երկիր մը, Յունաստան կամ Կիպրոս երթար, կը խախտէր տնտես-
կանութեան կեդրոնը, անմատչելի բան մը կը դառնար, ինքն իր կրկներե-
ւոյթը, գրեթէ: Սեւ պայուսակը ամուր բռնած, կոկիկ, զգոյշ՝ կը կորսուէր
մարդկութեան անգիմադրելի իրաւութեան մէջ: Նազիկը դուրս ինկած, ծուռ
գլխարկով, կարճ ու նիւար տեւէ առաւ-իւրաւ կը խարէր զինք օդակայանի
մը գրան, չէր համարձակէր շփեօրներու աչքերուն նայելու, ամէն էգ տալ-
նապի մը առիթ կ'ըլլար ու երկու գրուշ չարժող, օքոպիւսի այդ կիւտը, տե-
ղերական ու հասարակ, յանկարծ մտերմացեր էր արդէն իր իսկ քովը նըս-
տած, լուռ, անհասանելի ու ինքնանպատակ կնկտն հեա, մինչ ինք հետեւին-
ներ կամ տեսարան նայելով գրադած էր, առանց բան մ'իսկ տեսնելու: Քիչ
առաջ, օրինակ, պանդոկի խնդուն սրահը նստած ոչ ոք նշմարեր էր զինք,
յետին անձ մը կամ կարասիի պէս բան մը եղեր էր, նոյնիսկ երբ աճապար-
ած կառավ մը կեցուցեր էր ու Պոսթընի անթերի շեշտով քնէ մը ապսպրեր
էր: Ամէն բան փորձեր էր — ամերիկեան սուղնոց զգեստ, օոկի հրահանը,
զոր արագ, վարժ կ'երկարեր ծնր կամ երիտասարդ տեւէ մէկուն, հոխ ճա-
շերը, զորս կ'ուտէր կատարեալ կենցաղագիտութեամբ սեղանին գլուխը միշտ
նստած, կառուցներուն տուած առատածէտն փութպուարները, փարիզեան
սուղնոց փողկապները, ամերիկեան հնչումը պանդոկի օայնի հեռաձայ-
նէն...: Մէկ օրէն միւսը քոյր տկարութիւնները, զորս այնքան խնամքով
կը ծածկէր Պէյրուս՝ մէջտեղ կ'ելլէին — քիթը յանկարծ մեծ կը թուէր,
փորը աւելի կը ցցուէր, ամշկոտութիւնը, անփորձութիւնը, ինքնապատահու-

166-2000



20294-187

digitised by

Թեան հսկայ պտրապը, նոյնիսկ կծծիութիւնը, որ զինքը ակամայ կը զնէր օթոպիւսին սպասող հասարակ բաղձութեան շարքին՝ երեւան կու գային։ Ու կը դառնար ծայր աստիճան զգայուն, խոցելի, մորթազերծ։ Էջը համարձակէր վերելակին հայելին մէջ ինքզինքին նայելու, երբ մարդ ըլլար մէջը։ ամէն մարդու ճամբուն վրայ ինքզինքը արդեւ կը զգար ու այս առտու փոնգտալէն ետք, անզգալարար փարորմ մի ըսեք էր պարտապ անենակին...։ Կեանքի խուճապահար հեղեղին մէկ շնչին ոլորտպտոյտին մէջ բռնուած ճիւղի մը նման ինքն իր շուրջը կը թափառէր։ Միայն Եռաշէն էր, որ մուտք գործէր էր այս պատրանքին մէջ։ «Պիպլոս» ճամբորդական ընկերութեան զործակալը կողմին մէջ, որուն ափը 25 ոսկի գրեթէ էր, հասկցնելէ ետք, թէ ով էր ինք, եւ թէ՛ լաւ կ'ընէր ան, եթէ հետը միայն անզգիւրէն խօսէր։ Իր միանկութեան պաղ լոռութեան մէջ բանտարկուած, արգիլուած, անհպելի ուժերէ հրմշտկուած ու մեկուսացուած կեանքի ու մարդոց շունչի սահմաններուն՝ Յովհաննէս յուսահատօրէն կը ապասէր, որ վերջնաւոր տաք օրուայ պատրու ու ետ դառնար իր դրասենեակի պատկառելի, ապահով մտերմութեան, զիրքերու լուս զգուանքին, համալսարանի յաջող, ամուրի ու բարեկեցիկ փոփեւօճիւրի իր անձնաւորութեան։

Հոթէլ Փալատի լորրորդ յարկի պատշգամբէն դուրսը քննեց։

Հեռուէն, վրայէ վրայ դիզուած լուցկիի տուփերու սլէս բնակարաններէն անդին, ծովու կողմէն՝ ժանճրոյթի ու անձկութեան մէջ բռնուած մարդկութեան մը աղմուկը, տարածուն ու յամառ՝ մինչեւ ջովը կը հասնէր ու կը մեռնէր։ Տաք, խոնաւ լոյս մը կը ցոլար երկնքին մէջ, քարափէ երկայնքին ցանուած անթիւ սրճարաններէն, ուր հիմա պաղ երկրորդնու գաւակները, փախած ծերութեան վախէն՝ եկեր հազարներով թառեր էին, քիչ մը ջերմութիւն, երեւակայութիւն ու, հաւանաբար, արկածախնդրութիւն զանաւոր յոյսով։ Շուրջը բան մը կ'եռար, կը փրփրէր։ Նորէն նայեցաւ կարճրած երկնքին։ Կլիֆտ կնկայ ժայիտիմ պէտ, մտածեց, կռնակէն ոտքի մայաներ, նոր ու թաց ծեփի հոս մը շուրջը ու ամէն կողմ հով, հով։ Յովհաննէս զգաց, թէ տէրն էր իր կեանքին, զոնչ այս զիչեր։

Իրեն ճիշդ տակը, երբորդ յարկի պատշգամբին՝ կին մը, երկարած շէգլոնկին՝ խալթառ կը լուծէր։ Գերմանացի, անկասկած, ու ներսը ռենտակը յաղթանդամ չէկ կիսատուած մը ըլլալու էր, որուն թեւէն քիչ ետք ան պիտի կախուէր, առանց խօսելու, ահաւոր ինքնաբաւութեամբը, կատարելութեամբը օտարներու, մահաւանդ քարիւղներու ու ինք պիտի կոթնէր տեղ մը ու ետեւէն նայէր, միտքը խճողուած հազար ճղճիմ ու հիւանդոտ մտածումներով։ Ուժեղ հովը խենթեցուցեր էր ծառերը ու հիմա ճերմակ գրօսանաւ մը, մանկութեան յիշատակի մը պէտ՝ վերադառնալով շրջակայքի կէտերական կողմներէն, կը մտնէր նաւահանդիստ։ Լոյծ, կլոր, ծփուն տաքութիւն մը։ Կանգնութիւն մը կար մարմնին մէջ, հաճելի յոգնութիւն մը, որ խառնուելով կէտօրէ ետքուայ քունի մնացորդին, թոյլ հրճուանք մը տուէր էր իրեն։ Այս էր իր սիրած պահը — բնութեան բուռն հակասութիւնները՝ հեռուէն, մեղրի պէս մայրամուտ մը ու ինք կայնէր տեղ մը, սիկարը ձեռքին, անջառ ու տարտամօրէն սպասուն անորոշ երջանկութեան մը զալուն, կրկնելով մտքէն. ես եմ աւ... իմէ աղուար է կեանքը, նայելով մարդոց կիսազնէին ու կիներու լանջին, նայելով՝ առանց տեսնուելու անոնցմէ, հեռուէն հետեւելով անոնց շարժումներուն, լսելով կէս բառեր ու նայուածքներ ու զապտնի հանոյք մըն ալ առնելով, դա՛ ու ամբողջ։

Վար նայեցաւ կրկին։ Կինը կը շտկուէր տեղէն զփուարութեամբ, ոտքի

կ'ելլէր: Կամայք մը ինք ետ քաշուեցաւ. նաւը չէր տեսնուեր այլեւս, օթոպիւս մը սողաց փարը փողոցէն, մէկ քայլ կրկին առաջ գնաց ու տեսաւ, որ կ'ինք յդի էր: Արադ, սղտոր ուրախութիւն մը զգաց. զոմէ աս մեղրալուսնի չէ ելած, մտածեց ու ամէն բան նորէն կարելի էր օրը չլմեցած ու անտեսանելի ձեռքեր զինք չհաւաքած ու շինարարած ետ անցեալի գործը, ուր դեռ կը սպասէր իրեն իր կեանքի ամբողջ շարժումը, անսահման ու զաղտնի երանում-թիւնը, մօրաբոյն սեւ գոգնոցին մէծ զրպանը, Նաւի իրենց տնակին անծնփ պատէն կախ, հին օրերուն...

Քաղեց, դոցեց պատշգամբին ապակի դուռը՝ հանդարտ ու սահուն շարժումով, նորէն լուսեթեան մէջ կայնեցաւ խոշոր հայելիին դիմաց ու ծանր կոպերուն տակէն նայուածքը փակաւ իր միակ ծանօթ պատկերին, հսկայ, որք կերպարանքը, իր քառասուն տարիներու պարապ ծանրութեան տակ ճրգմունքով, սեղմելով ու մօտեցնելով երկու կերպարանքները իրարու, անփոխարինելի այգ մտերմութեան տուած հրճուանքին մէջ դտնելով դերագոյն հազարականութիւնը իրմէ՝ իր պատկերին:

Երբ կը լարէր զիւղացի հօրմէն ժառանգ ոսկի ժամացոյցը, Թելեֆոնը դարկաւ: Մեցուեցաւ, ինչպէս միշտ, բայց դանդաղօրէն նստաւ բազկաթոռին, հին սովորութեամբ վերցուց ընկալուչը, նետեց ոտքը ստեղին, բերան մը քաշեց սիկարէն, մտաբերեց յդի կնկան ծիծերը ու տակէ ետք միայն խօսեցաւ, նայուածքը առատատղին:

✱

Արադ, անհամբեր ճաշեց ու մտաբերեց: Հաստ շրթունքներով, տգոյն, մարած աչքերով լիբանանցիներու աղմկոտ խումբ մը կար քովի սեղանը: Քանի մը անդամ նայեցաւ, բայց ոչ ոք ճանչցաւ զինքը: Անպարտաւորէն մէջ մոտցեր էր սիկար առնելու հետը ու հիմա երբ պահը եկաւ ծխելու, փորի ծանրութեան տակ կոթնելու, դանդաղ շնչելով, վայելելով տեսարանը օտար սա մարդոց անմիասն, չկաշկանդող ու մտերմ ներկայութեան՝ ինքզինքը բոլորովին մեկուռացուած զգաց: Սիկարը միշտ հաղորդակցութիւն ստեղծած էր, մանաւանդ ճաշարանի հասարակաց, կուլտ գահու նախկին մէջ: Բան մը կար հոս, որ կ'անհանգստացնէր — քիչ անդին տրտում, ազեղ աղջնակ մը սալաւ կը բաժնէր Փինյանտաղիներուն ու կարճ փէշին տակէն միամիտ, խակ ու գրեթէ հում սրունքները զրգռիչ էին, ալիք՝ հնդիկ զոյգին երեսաները քարացած՝ թշնամական ստուած աչքերով գինք կը դիտէին նորէն, հեռուն անգամալոյծ մը բերեր էին ու ծերացած կինը կը կերակրէր զայն խօսելով, կատակելով, մինչ մարդը, մռայլ ու կարծր, զամեր էր նայուածքը հեռու սեղ մը: Լիբանանցիները բոլորը մէկ խնդացին. անկուրծք, անկոնք, հրեշտակի պէս աղջիկ մը կը մտնէր, ամէն օրուայ բաղմունքներ խանձուած մորթով, սառն աչքերով, գերմարդերու իրենց զաղտնի մտածումներով, արձակուրդի ամբողջ հոգեբանութիւնը իրենց սուղ մարմիններուն մէջ խառնուած, իրեն ոչինչ ձգած, ոչինչ...: Յովհաննէս ելլելու շարժում մը ըրաւ, կարելի չէր այլեւս մնալ, բայց դեռ լեփ-լեցուն էր ճաշարանը: Ծաւալաւ, ժամացոյցին նայեցաւ. դեռ ատեն կայ, մտածեց ու հիմա անհանգստացընող մտածում մը սպրդեց էր, մտահոգ էր. այս գիշեր պիտի գիտնայ, միւսքը ձէճ, ըսեր էր իւզոտ մագերով, թուխ, մսեղէն ժպիտով, հանած-փառած Երուսաղէմ: Ու ինք անոր մեղսակից արտայայտութեան պատասխաններ էր հին աղուէսի մը պէս, դրամը շխրտացուցեր էր գրպանին մէջ, լեցուն ու

զօրաւոր կայնած սալոնին կեդրոնը, կոնակը հաստ սիւնին, մինչ անիմաստ բազմութիւնը, կոյր ճիւղի նման կը շարժէր, կ'աղմկէր շուրջը՝ այս գիշեր պիտի գիտնամ, ի վերջոյ, մտածեց Հիմա, երեւակայնով մութ պարտէզին մէջ իր մարմինը տարածուն, ամէն ինչ ծածկած, իւրացուցած, կին, մարդ ու ծառ զրկած, թեթեւ ու ազատ միջին երկինք ու մինչեւ գլխուն կեդրոնը։

Պատուհանին քովի խուճրդ ոտքի ելեր էր ու կը շարժէր գէպի դուռ, Հիմա ինքն ալ ոտքի էր, կը քաշէր անոնց հոնէն, ալ-ձախ կը ծրէր, մէկու մը պիտի զարնուէր. փարտոն, մուտաց ու փողոցն էր արդէն։



Հեւիհեւ հասաւ պանդոկ։ Գրեթէ պարապ էր սալոնը։ Տարեքով կին մը, գլուխը ծուկը՝ լոյսի մը տակ բան մը կը գրէր. Ժաքս պէտք է զրկեմ, մտածեց՝ առանց ոեւէ մէկու դէմքը յիշելու, շուրջը քննեց մեքենաբար։ Այլին՝ երկու թուրիթներ լուս կը ծխէին. անցաւ քովէն, սիւնի մը ետին բազկաթոռ մը գտաւ, նսրէն նայեցաւ, Հեռուէն պատմէին միասնականի գէշ յղկուած մարմարէ գէմքը իր կողմ դարձեր էր ու շեղ նստած բարակ աղջկայ մը հետ կը խօսէր. ուր եմ եմ՝ հիմա կու գամ, մտածեց ու նստաւ։

Ատեն մը ետք, սիկար վը բլլար, անցաւ մտքէն, բայց սիրտ չունէր տեղէն ելլելու։ Ճաշէ ետք, թմրութիւն մը թուլցուցեր էր մարմինը, քանի մը անգամ անուշ յորանջեց՝ ձեռքը բերին, յետոյ փորձեց կրկին երեւակայնել իր գիտնովութիւնը. կեանքիս մէջ առանցիմ անգամ մտածելով, սակայն ոչ մէկ յստակ պատկեր եկաւ, միայն իրմէ ծածուկ, ցերեցան սա մարդերէն հաւաքուած անձկութեան մը զգայնութիւնը, որ կը հարուածէր քունքերն ու ծունկերը։ Շուէտացի ալացիկ, օղային երկու աղջիկներ մօտեցան փողոցէն ու գետնի տնիքի մարմարի վրայէն քնալըճիկներու նման սահեցան-ապրին ետին, քունը կու գար. ո՛րք մնաց սա մարդը, կրկին կը բարձր, գաղտնի, յուսարով, որ չէր գար ու կը շարունակուէր ամէն ինչ այսպէս, կեանքը կամաց-կամաց լեցուելով շուրջը, մէջը ու ինք դառնալով նորէն տիեզերքի կեդրոնը։ Աչքերը կը գոցուէին...

— Միտքըր ձէք։

Շնորհեցաւ։ Լիբանանցին քովը կայնէր էր, ձեռքը երկարեր, ամբողջ ակռայ ու ձայն ու դէմք, որ կը պատուէր անվերջ իր մորթին վրայ։

— Հա, եկա՛ր, Եռանք։

— Պատրաստ էք... կը մեկնինք հինգ վայրկեանէն։

Մարդուն թաթը ուտին էր, ի՞նչ ընել այս անանձնական մտերմութիւնը սա մարդուն, որ ռակայն արդէն կը հեռանար ամէն ուղղութեամբ՝ թուրիթներու առկախ, անիրական աշխարհին մէջ տարիներու վարժութեամբ հոս-հոն բարեւ ու դէմք ու անօթի ձեռքի շարժում ցանկելով, նոյնիսկ երբ մէկը չկար։ Ի՞նչ ապահովութեամբ կը տեղաւորուէր ան կեանքի մէջ, մինչ ինք դուրս կը մտար, օտար ու առանձին։ Ե՛րբ լեցուեր էր սրահը երկխաներու ջրայնացնող իրարանցումով. տասը հոգի, քսան հոգի արդէն բազմած կամ կայնելով՝ բայց մնալով ոտքի մատներուն ծայրը, աթոռին ծայրը, արեւատական ու անորոշ հզորքներու վրայ ու ստեղծելով նորէն տիեզերական պատրանքի մը պատրանքը, հասնելով մինչեւ իր աչքը ու անկէ ներս, ուր ինք զարանակալ կը դառնար անոնց շուրջ, կը խնդար, կը խօսէր անոնց հետ, անոնց մէջէն, միտմիտակ։

Կոնկուսած, անմատոճում, բարի ու տարտամ արտայայտութեամբ մը իր վրայ տոնելով շուրջի ետուզեող, Յովհաննէս քաջից դէպի պառ, վայրկեան մը-երկու տնտնաց, աթոռակներուն թառած, կէս-նստած, անհոգ, մեքենա-բար խօսող ու խնդացող գերմանացիներուն կոնակները քննեց. քալարը մէկ գրպանն կը դնէմ ասոնց խելքը, անցաւ ժողէն, կարմրահեր, ճիւղիւղի, անուշ շիկ աղջիկը իրեն նայեցաւ, մէկդի շարժեցաւ, որ արգելք չըլլայ, ու սպասեց, անտէր, շինծու, հաւաքական գոհունակութեան մթնոլորտը վայելելով, ուղիւղով, որ մարդիկ դպնան իրեն, գոնէ ջստին, կեանքի իրենց անհասանաժ պաշարէն բան մը անցընեն իրենց այդ հպումով ձեռքի, աչքի ու ձայնի. յետոյ տեղ բանան իրենց մտերմութեան շարքին ու ինքր զգայ իր տուննունութեան լեցուիլը, ու դուրս յորդիւր բանի մը, որ իր մէջ տոնէր բոլորն ալ՝ իրենց խորհրդաւոր աշխարհով ու հակայ շարժումը կեանքին, որուն հետաւոր կեդրոնը ինքն էր, ինքը միայն, իր ծանր, դանդաղ, նախապատմական մարմինով ու անսահման անորոշութեան մէջ լքուած, կոտուացող գիտակցութեամբ:

Տեղ մը պարպուեր էր ու առաջ անցաւ, դրաւ արմուկը տախտակին, յետոյ իր կէսը կրցաւ գետնի վրայ աթոռակին, ձախէն ուս մը դպաւ իրեն. բան մը չէր հասկնար խօսուած լեզուներէն, բայց այլեւս մարդկային պզտիկ անկիւնը որդեգրած էր զինք իր մտերմութեան մէջ: Կեանքի արեւէն խանձուած այսեր, մազոտ թեւեր, ուժեղ կիսադէմեր, արու, թաւ խնդուք ու չէզոք, անպատկանելի կիներ — Յովհաննէս տեղաւորուեցաւ իր ամբողջ էութեամբ մարդկութեան արտին. բարձրաձայն լիմոնատ մը ուղեց ջրանած պատճէնէն. միւսքը ձէ՛ք, կը պոռար Նուսէֆ տեղէ մը, սակայն կարեւորութեան շտուառ ու արդէն խօսքի բռնուեր էր ալ կողմի անձին հետ:

— Սթանլիօն օդ կ'ընէ կոյր, դիտէ՞ք:

— Այո, քիչ մը հով կար այսօր սակայն:

— Հոգ չէ, միայն ծովը հանգարտ մնայ:

— Այո:

Հագիւ կրցեր էր զսպել անպարանջը բառերը թափելու կնկան շուրջ, վախճալով, որ աղմկուս լուսթիւնը կրնար կրկին մեկուսացնել զինք: Կինը խօսեր էր՝ առանց իրեն նայելու: Հայելիէն տեսաւ, որ ինք կը ժպտէր: Կինը կախեր էր գլուխը:

— Առաջին անգամն է մոտոս կու գաք:

— Այո:

— Լաւ պանդուկ է, ես գոհ եմ, գրեթէ եւրոպական հով մը ունի, ես...

— Ինչքան աղմուկ կայ սակայն, մա՛նաւանդ շուկաները:

Յնդաց, ամբողջ իրանը ցնցելով. ահագին բան յայտնած էր իր մասին — ամերիկեան շեշտը, Եւրոպան, խօսելու բնականութիւնը, մա՛նաւանդ այդ կարճ, արու խնդուքը:

— Քիչ մը շատ խնդուն է, դուք ամերիկացիներդ հանդարտութիւնը կը սիրէք, դիտեմ, վերջին անգամ Նիւ Եորք էի...

— Օ ո՛ւ, ո՛ւ, տաքուկ բան մը կայ այս իրարանցումին մէջ, ես կը սիրեմ, վարժ եմ:

— Այո, ճիշդ է:

Կինը իրմէ անդին բանի մը կը նայէր, ուսը դպաւ իրեն ու ինք կ'ուզէր, որ ան հարցնէր իր մասին, ո՛ւր ուսած էր, սիրա՞ծ էր Ամերիկան — սակայն ժամանակ չունեցաւ: Ձեռք մը նստաւ ուսին, Նուսէֆին ձայնը. կինը սիկարէթը հանեց, բարձր խօսակցութիւն մը փրթաւ տեղէ մը. զիմացէն

դոյնդոյն շինելը կը փափայային, ասոնց հախճախէն էր ու քերթը, ու ճակատին քրտինք կար, աջ յետոյքը կը ցաւէր:

— Պատրա՞ստ էք:

Տարօրինակ ուրախութիւն մը կար Հիմա պզտիկ սրտին մէջ, այդ ձեռքը դեռ ուսին՝ ծանր ու համամարդկային, պատմէնք իրեն կը խօսէր ամէն ժարգու պէս:

— Այո, սիկար ունի՞ք:

— Հարկաւ. Սթալինոս, միսթըր ձէքին սիկար մը. ի՞նչ տեսակ կ'ուզէք, միսթըր ձէք:

— Հաւանա ունի՞ք:

— Միսիգ Ռոզ, պատրա՞ստ էք:

— Այո:

Յանկարծ նշմարելով, որ կինը յղի էր ու օգնելով անոր, որ վար իջնայ թառէն, իր մարմինը աւելորդ ու ամէն տեղ.

— Դո՛ւք ալ ուրեմն Ռոսինի պիտի հրթաք... միտքին կ'ըլլանք:

Թեթեւ ծանրութեամբ ու ճոճուն՝ քալեց բազմութեան մէջէն, խօսելով, գլուխը շարժելով, տեղ-տեղ ժպտելով անհետացող գէմքերու, հոլանի ուսերու, ամէն կողմ շուէտացիներ ձուկի աչքերով, ինքը կնկայ մը կողքին քաշելով իր մարմինը ետեւէն, մինչեւ վերելակին դուռը:

— Երթամ ժիլէ մը բերեմ:

Պատշաճ կինն էր, անկասկած. Ամուսինը տեղ մը զօրակայանի մէջ ըլլալու էր ու կինը հոս արձակուրդի, դուրս ինկած ակոսներով, ճղճիմ կուրճերը ծիծաղելիօրէն բարձր թառած, մարմինն վրայ, խօշոր փորր, ուրուն չէր համարձակել նայիլ, ոչ ալ կապոյտ ապակիէ աչքերուն ու Հիմա, պատին կոթնելով, փորձելով Էրեւակայի զիրենք դուրսը, մայթին, ամբարկացի մէջընդմիջ յղի կինը հայ մարդու մը հետ, որուն ի՞նչ կրնայ ըսել, որպէսզի կեանքը յանկարծ բոլորովին փոխուի, դուրս ելլէ պահուած Յովհաննէս ու ապրի ի վերջոյ: Կը դիտէր շուրջը, հայերու այդ խիտ, յամառ, գիտակցական ճնշումով ու պահ մը իրեն այնպէս թուեցաւ, տեսնելով վերացական, թեւանցուկ թուրքութեան եռուզեւը, անոնց ակամայ, գրեթէ անգիտակից ներկայութիւնը, թէ կը սահէր-կ'երթար կեանքի վերաւոր, ճակատագրական կտաւին վրայէն՝ առանց դպնալու, իրեն թուեցաւ, որ այդ պատրանքին, շուրջը այդ խաղին մէջ ինքն էր միակ իրականը, ինքը միայն կ'ապրէր, ինք միայն գիտէր, թէ կեանքի մէջ բոլորն ալ թուրքութեան պէս արուեստական էականը էին: Աս մարդը, օրինակի ետեւ, ըսաւ մտքէն, գիտելով աթոռի մը ինկած, սրունքները բաց, դեղին-դեղին մազերով մարդու մը կերպարանքը: Ֆիզիանոսացի է, մտածեց, Էրեւակայի մը սանդուխներու, ազմկոտ պէտքերաններու տոջեւ անոր յուսահատ հրմշտուկը, եկեղեցիին դրան անոր պաղ սպասումը, կին շինելու անոր դանդաղ, չփոթ շարժումները, ճաշի լուսթիւնը, ծիծաղելի ծրարները կեանքը զոդնալու, միայն իրեն պահելու. բայց կամաց-կամաց մաշելով՝ առանց ժամանակ ունենալու, որ հասկնար, թէ ինչ կ'ըլլայ կոր իրեն, իր ժամանակի բաժնին, իր գոյութեան դորը, խարխուլ շշուկին, որ վազանի ճեղքուածքէ մը կը հոսէր, կը հատնէր-կ'երթար. եղբոր կնկան հետ գաղտնի գործ ունի հաւանաբար, մտածելով, բայց կեանքը նորէն պիտի փախէր...

— Հա, հո՞ս էք:

Կինն էր, կոկոսած, կարմիր ժիլէին մէջ կծկուած:

— Ո՞ւր է պարոն Յուսէֆը:

— Ձեմ գիտեմ:

Պատասխանեց անսպասելի առարկայականութեամբ, յանկարծ շիտակ նայելով անոր դուարթ աչքերուն, փորին, ոսկի ապարանջանին, մոտենելով, որ այդ խեղճ կինն ալ ուրուական մըն էր, ծպտուած ուրուական մը, որ կը կարծէր, թէ աշխարհի զաղանիքը իր փորին մէջն էր, մինչդեռ եթէ կայ իրաւ բան մը տիեզերքի տարածքին այս վայրկեանին, այդ ալ ինքն էր, Յովհաննէսը։ Ճիշդանապէս շտկուէր էր տթոփն մէջ, առանց սրեւէ պատճառի։ Կենդանիի պէտ, մտածեց։ Գերմանացի զոյգ մը լուռ, աննպատակ կոյներ էր քոյր ու դուռնէն դուրս, հովէն տարուբերող գիշերը թանձր, անմիջական հպում մը ունէր գիտակցութեան վրայ։ Սկսաւ քայել կնկան քովէն։ Գերմանական հոկայ օթնպիւս մը, միջնադարեան վիշապի մը անդիմադրելի ուժով՝ կանգ առաւ մայթին ու դիտէր, որ կէս ժամէն վաթսուն մոլորած, անպակի, ողորմելի մարդիկ պիտի լեցուէին մէջը ու կորսուէին հովերուն հետ, ետին ձգելով տասը շուարած մարդիկ սալոնին մէջ ցիրուցան, որոնք ձանձրոյթի ժամերուն տակ պիտի թմրէին, տարածուելով իրարու վրայ, միանալով ջուրի ափերու պէս, կամաց-կամաց լուելով ու կարօտնալով, սպասելով թելեֆոնի մը զարկի ձայնին, վերելակի բացուելուն, պատահական մէկու մը մուտքին, անոր շապիկի գոյնին, ծիծերու ծաւալին, մինչեւ որ ժամը տասնմէկի ժօտերը, հուսաբերով կեանքէն մնացած, աւելցած ու չտարուած քանի մը բաւ ու հոտ՝ տարուէին իրենց յարկը, նրբանցքը, անոր զաղտնապահ, խորհրդաւոր մենութեան հետ քալին դէպի իրենց գուռը ու հատնէին անհակի կոյր, անարժագանգ, նրեթեղէն մտերմութեան մէջ։ Գիտէր այս բոլորը Յովհաննէս, գիտէր փորձառութեամբ ու ասիկա առաջին գիշերն էր, որ երեք օրէ ի վեր, մաս պիտի չկապէր այդ աւելցածին, դուրս պիտի ելլէր անոնց առաձգական կեանքէն։

— Միթէր մէջ։

— Այո։

— Միտի՞ր Ռոզ։

— Այո, հոս եմ։

— Միթէր վերադարձա՞ւ միտի՞ր վերադարձ։

Նայեցաւ զոյգին։ Գլուխնին շարժեցին։ Եւսէֆ թեւերը տարածեց իր ու ամերկուհիին ուսերուն։

— Աս է ձեր խումբը։ Ռոտինիի արկածախնդիրները։ Միս Ժէռմէնն ալ պիտի գայ։

— Դո՛ւք, պարոն Եւսէֆ։

Ռոզն էր, անշուշտ, կիներու այդ ջղայնացնող հետաքրքրականութեամբ, գործնականութեամբ։ Եւսէֆ առջեւ ծռած կը ժպտէր քիթին տակէն, թաց ու կաշու, լիքանանցիներու յատուկ կմիկմիւրքեամբ։ Աւելի ջրղայնացաւ, պղտորեւ էր ներքին խաղաղութիւնը ու անդէ մը կը պարպուէր քիչ առաջուայ դուարթ բովանդակութիւնը։ Կը զգար, թէ նորէն հոս-հոն պիտի տարուէր, մարդոց ձեռքը պիտի իյնար, տասնկ մարդեր ամէն անկիւն իրեն կը սպասէին, պիտի գիշերէին իրեն ու տարտամ նախազգացումը ունեցաւ, որ ճակատագրական բան մը պիտի պատահէր այս դիւր, որ կապ չունէր գիշերութեան հետ։

— Ես առանձին կու գամ, միտի՞ր Ռոզ, տեղ չկայ թաքսիին մէջ։

Վերադարձներու դէմքը մութին մէջ էր, բայց գիւղացիի պէս կարծր, անհաշտ մարդերու տպաւորութիւնը առաւ նայելով անոնց, չորս ուղիով կայ-նած, կարճ գլուխներ ու վիզեր, անշարժ, անխօս։ Դուրս ելան։

Միս Ժէռմէն անունով խորհրդաւոր անձը արդէն նստեւ էր թաքսիին մէջ։

— Երթա՞նք :

— Հա, հա, դացէք : Գինին մեզի կը սպասէ :

Վախը սրտին, նստաւ ամերիկուհին քով :



Ռոտինիի պարտէզը քաղաքի սահմաններուն ծառախիտ, բնդարձակ վայր մըն է, բլուրի մը մեղմ էջքին փռուած, ուր Ռոտոսի քաղաքապետարանը պիտի փառատուն կը սարքէ ամբան ամիսներուն՝ Ներսիսյի այն թուրքիստներուն համար, որոնք, առատուայ ժամը իննէն մինչեւ երեկոյեան հինգը մեքէ, արեւուն տակ անշարժ, երջանիկ ու անխօս եփուելէ ետք ծովափի երկայնքին՝ դեռ խանդ ու երեւակայութիւն կը դաննեն գիշերային վայելքներու ու արկածախնդրութիւններու : Բայց ամէն ինչ պզտիկ, խեղճ ժողովուրդ կը հոտի — բարձրախօսով շարտուած համատարած երաժշտութիւնը, մեծակառոյց, պոռոտ պարասրահը, արդիական, արուեստական ճաշարանը, զէչ ներկուած խաւաքարտէ շինուած այլանդակ, հսկայական արձանները գինով կիսասուածներու, բունի քաշուածքներու հին յունական դիցաբանութենէն՝ շատախօս, աչքը բաց պաշտօնեայի մը կողմէ, որպապտոյտ կիսախաւար արահետները ու միւր բաշխուող դիմիտ տակառներու քով սլքտացող դարանակալ շուքերը : Ամբողջը յարդարուած՝ տալու համար հոն մոլորած միամիտ հոգիներուն թէ՛ իրականութիւնը եւ թէ՛ ալ իրականութեան պատրանքը միեւնոյն ժամանակ, մարդիկը նետելու մէկէն միւսը, այն օտո ու անպոթ յոյսով, որ դրոշմուած էր մուտքին կայնած քաղաքավար, մահացու պաշտօնեաներուն գէմքին, որ Արեւմուտքի հզօր, չէկ անպետները տնիրական գինովութեան մը վայելքն ալ կ'ապրէին՝ իրենց քաղաքակրթութեան անկումին մէջն իսկ :

Յովհաննէս միշտ խուսափեր էր ասոր նման լարուած որոգայթներու մէջ ինչպէս նոյնիսկ ու, մա'նաւանդ՝ երբ բացառիկ հաճոյք կը խոստանային : Կենքի տարօրինակ մէկ խաղով մը, այսպիսի շինծու վայրերու մէջ էր, որ ստացեր էր էն դաժան հարուածները իրականութեան : Փոքթէյլներու, քէրմէսներու, սալոնի խաղերու ու Փորէնհակի քողանցներու ձգած վէրքերը ո՛չ կը բռնուէին, ոչ ալ բան մը սորվեցուցած էին իրեն : Ասոր համար էր նաեւ, որ այդ տեղերը քաշողական արտակարգ ուժ մը ունէին, կը կլանէին զինք իրենց պատրանքի հմայքով, ինք՝ որ կենքին հետ միշտ խաղացած էր, լուրջի չէր առած մա'նաւանդ մարդիկ ու պաշտպանուած էր ասոր ետին : Ու բուն լուրջ խաղին աւրելէ էր, որ անճրկած էր միշտ : Հոգ էր, որ իր իրաւ էութիւնը միշտ երեւան եկած էր ու ան ապրած էր կեանքը իր ամբողջ կարճ, քացխող, վիթրայի իրաւութեամբ :

Զգոյշ քայլերով մօտեցաւ կիշէին : Տիտը, շուարած աղջիկ մը, հարցական, կը սպասէր :

— Երկու տոմսակ :

Մարաց միայն, առանց անդիմաշրիյի խնդրանքին, ձեռքի անորոշ շարժումով մը Ռոտինի կողմը, որ յունական դեղձուկ պարի ոստոստուն եղանակին հետ կ'երեւոյնէր արդէն իր այլանդակ մարմինը. պարտէզի բարձր, լուսաւոր մուտքի ճակատին տակ ծիծաղելի հտպիտ մը, անքնական ու ապարդիւն, մա'նաւանդ աննշան՝ չորս թթեւ-կայնած պաշտօնեաներուն պողպատէ, հեռու նայուածքին մէջ : Շուարած դիտեց քանի մը վայրկեան ու նորէն բռնուեցաւ իրականութեան անիմաստութեան զգացումով : Անհեթեթի հը-

պուժ մը եկաւ ու անցաւ : Մտելու չափ մինակ դդաց ինքզինքը յանկարծ : Ինչպէ՞ս պիտի խաղար Հոս : Կիներ մօտեցեր էր արդէն, բայց կը թուէր զինք ըստ լորտոյին անտեսել :

— Միտթըր ձէք, ինչո՞ւ տոմսակ տուիք :

— Հա, դո՞ւք էք, պարոն Եռանգ՝ :

— Ինչո՞ւ տոմսակ գնեցիք, ինչո՞ւ... Բնկերութիւնը ոտած էր արդէն, սկիզբէն վճարուած է... : Ետ տուէք, միտթըր ձէք :

— Հոգ չէ :

Վճարական, ղլխու շարժումով, համայնարանի փրօֆեսէօրի իր վարժ մայնով. ու Հիմա կը քալէր իր մանդէն, ծալք-ծալք ժպիտով, որով սովոր էր զրկել կիները, զոցել անոնցմէ իր ինքնութիւնը, որով իր խաղին մէջ կը մտնէր :

— Հոգ չէ, — կրկնեց, — դրամը ինչ կ'արժէ որ :

Կատակ էր ու լուրջ նոյն ատեն ու երկուքն ալ զոհունակութիւն կու տային իրեն, զրկելէ կը սրբէին ամէն դժուարութիւն իր առջեւէն. նոյնիսկ Հիմա, կնկան քով հասնելով ու արդէն թեւը անցած՝ սկսած էր շարժել ոտքերը քիչ մը ալ ու ձախ, երաժշտութեան կշռոյթին հետ, շարունակելով կատակը, խաղը, կնկան ոտքերու ճարտար շարժումին հետեւելով, սպասելով հանգիստին, որ քիչ ետք կու գար. ու անշարժ մարդիկը, խենթ հոլը, կնկան մարմինը ու եղանակին թափը իրարու խառնուած՝ առին-տարին, ինչպէ՞ս միշտ, ու չանդրադարձաւ, որ շունչը պիտի կտրուէր քիչ յետոյ ու զանդուածը մարմնին արդէն կը տքնէր, ոսկորները կը ճաթրտէին... :

Երբ կենը դադրեցուց պարը առանց որեւէ պատճառի, ինքն ալ անշարժացաւ, փորձելով զսպել պզտիկ հեւքը, փրփրուն, շուար տրամադրութիւնը :

— Պարել չէք գիտեր :

— Խալ էր ըրածս, կատակ էր :

— Պարել չէք գիտեր, պէտք չէ պարէք :

— Օ՛հ, Հիմա զուարճանալու եկած ենք... պիտի խաղանք :

— Բայց ես չէի խաղար :

Գունաւոր լոյսին տակ կնկան զէմքը մէկէն մօտեցած, խաղացած էր, զէպի ծառերը դարձած՝ խօսելով իրմէ անդին, ոչ իսկ պատասխան սպասելով իրմէ : Երկվայրկեան մը Յովհաննէսին աշպէս թուեցաւ, որ ամէն կողմէ կեանքի թելերը պրկուեցան, ո՛չ կատակ էր, ոչ ալ ժամանցի պահ օտարի մը հետ, այլ՝ անտարապելի, բիրտ, ստիպողական ներկայութիւնը ուրիշ բանի մը, որ միշտ խռատփեր էր իրմէ, որ կը պահուէր ուրիշներու լռութեան ու ցաւին ետին. տեսակ մը հրաւէր, օգնութեան կոչ մը՝ ուղղուած իրեն միայն ու կը բաւէր, որ մէկ անգամ մը ինք ապաստուէր իր անծի զգայ-նութենէն, իր շունչին ձայնէն, իր մարմինէն, իր խարխուլ, անթափանց էութենէն, որպէսզի դռնէր գաղտնիքը, հասնէր ո՛ւր, ո՞ւր սա կնկան մէջ... ամէն բան շաւրուած, նորէն : Կիներ քալէր էր զէպի մուտքը, «Եռանգ՝Ֆ», կը պոռար, միւս զոյգը ներս անցեր էր, քով քովի, մետաղեայ արձաններու պէս : Ինքը ետ իր վոյց արանձնութեան մէջ կ'իյնար արդէն, բայց ուրախ տրամադրութիւնը դեռ կը յամենար մակերեսին. Էէֆ ընելու Կիւսիմ, կրկնեց միտքէն. «Ես փեռմէն ըլլալու է, մտածեց, նայելով պզտիկ քիթով, կարճուակ, լեցունկէկ, խնդումներէս էգիւն, որ Եռանգին թեւը անցեր էր. արեւ-ւելքի մտաւ, ինչ պիտի ըլլայ, նայելով Հիմա աղջկան խոշոր յետոյքին ու ծիծերուն. ասանկ կիմ մը պէտք է շինեմ, սրիկայ Եռանգ, ու ներս մտեր էր

արդէն, նայելով համազգեստին, քեկով ձեռքը դրան մօտ գտնէ արձանի ուսին, մինչ ասարտած երկիւղ մը նորէն կը խլրտար հեռաւոր տեղ մը, ուրկէ կը հոսէր հսկայ, ծփուն ալիքը սեւ աղմուկին ու գունաւոր լսատեսքին, որոնք վիշապի մը հազար աչքերուն պէս կը ճոճէին աչքին մէջ։ Մովածաւալ կարօտ մը կը տխրեցնէր կեանքի պղտիկ սիրտը, բայց չէր կրնար պայթեցնենալ։ Վախը, վախը... որուն կառչեր էր ինքնութեան գիտակցութիւնը, այս մարդիկը իր ուժովը կը անանէին հիմա, իր ժայնով իրեն կը խօսէին։ Ուր է կինը, Եռուէ՛Ֆը։

— «Պիպլոս Թուրքի անգամներ, վայրկեան մը հոս եկէք, խնդրեմ։ Յովհաննէս դեռ չէր կրցեր յստակ մտածել ու մօտեցաւ լիբանանցիին, ժէռմէնին քով կայնելով։

— Հո՞ն էք ամէնքդ։

— Եղած չեղածը չինդ հողի ենք, պարոն Եռուէ՛Ֆ։

— Կրնաք արդէն պակասած ըլլալ, չէ՞։

Կէս մը դարձած իրեն, հասկցնելու համար իր ծուռ միտքը.

— Ինձի նայեցէք։

Ու մինչ ան կը բացատրէր, Յովհաննէս կ'անդրադառնար, որ յդի կինը արդէն կը խուսափէր իրմէ։ Քննեց հիմա քովէն, երեսայական կիսադէժը, երկայն, կեանքոտ մազերը, անհեթեթ ծիծերը, փորը, որ մութին այնքան ալ մեծ չէր երեւար. մարդիկ մութին մէջ միայն իրական եմ մտածելով, ամբողջ անձը օտարացած ու իրական, թշնամանալով գրեթէ, ուշադրութիւնը դարձուցած հոռուի թուրիսթներուն, զինք բոլորովին անտեսելով։ Անդի-տակից ուրախութիւն մը դգաց։ Անդին, քարէ գոյգը, որ մեծ կեդրոնացումով մտիկ կ'ընէր, ժէռմէն քիչ մը իրեն կը դպնար։ Ու պղտոր սպաննայիքը կառողած գիշերուան, որու պարապութենէն մտիկ ըրաւ հիմա։

— ...Քիչ մը գինովնալու եկած ենք, հա, չմոռնաք։

Յովհաննէս չհասկցաւ ինչպէ՞ս մէկէն թեթեւ տրամադրութիւն մը լեցուցեր էր զինք, ո՛չ վստանդաւոր, ոչ ալ բոլորովին մեկուսացուած, այլ այսպէս, մարդոց քովէն, ամէն վայրկեան շուրջի մթութեան մէջ ապաստանելու կարող, զինին ու երեւակայութիւնը ձեռքը բռնած, կամ մօտենալու այսպէս, նայուելով, դպնալով. ոչ, չնմ գիծովնար այս գիշեր, մտածելով։

— Բարի վայելում, միսթըր ձե՛ք։

— Բարի վայելում, բարի վայելում...։

Քննեց շուրջը։

Մնայլ իւֆալիքքաճերով շրջապատուած, ձուածեւ տեղ մըն էր, ուրկէ երկու քարոտ ծառուղիներ կը բացուէին, մէկը կ'երթար չիտակ առաջ ու յանկարծ վար կը ծռէր ու ետ կու գար, կրկին կը փախէր դիմաց ու կ'անհետանար վարի պուրակին մէջ, ուրկէ լոյսի ցուլք մը կը սաւառնէր երկինքին վրան։ Միւս ճամբան ուղղակի վար կը վազէր խորտուրորտ, կը սենար ու կը կորսուէր։ Չախին խորհրդաւոր, անիմաստ չէնք մը։

Հովիւ սաստկացեր էր ու պարին եղանակը կը բզկտուէր ճիւղերու թափահարումին մէջ։ Թեթեւ քրտինք մը՝ ճակտին։ Ափերը բաճկոնին վրայ քրտնեց։ Մարդկային ձայնի եկան անծանօթ վայրէ մը, դերման գոյգը հասեր էր ճաշարանի դրան մօտ։ Կեանքը նորէն կը փախէր իրմէ, ո՛չ վախ, ո՛չ բարկութիւն, ոչ իսկ սէր կրնային շուրջի ամայութիւնը լեցնել ու մարդիկ անդործ գերասաններու պէս կը թափառէին հոս-հոն, սպասելով, որ ինք իրենց գոյութիւն ու իմաստ տար։ Ինք, Յովհաննէս, համալսարանի դասախօս, Հարվըրտէն շրջանաւարտ, հարուստ, կարեւոր, ուժով, ինքը միայն իրաւ

էր աշխարհի մէջ, ամէն ինչ քովէն կը սահէր—կ'երթար տնօրէն, տնէն, կ'անցէր էն մեծ տառապանքն անդամ չէր հասներ իր մորթին. ամէն ինչ ուրիշներուն կը պատահէր, մտածեց, ինք վեր էր բարձրէն, ուրիշ էր: Տասը քայլ անդին յդի կ'ընէր կայներ ինչի՞ կը սպասէր, որ ի՞նքն էր, թէ ինքը չէր: Անտրամաբանական անձկութիւն մը դպաւ սրտին, անցքէն մարդ մը երգելով կը մօտենար, պարման աղջիկներու գրգռիչ խնդուքը ուրկէ՞ թափեցաւ, կիներ կը քալէր դէպի անգին ու Յովհաննէս, անհասկնալի մղումէ մը տարուած, քայլեց հետէն, երկնցող շուքը դիտելով, հովը տաք այտին. ի՞նչ պիտի լսեմ:

— Հէյո:

— Հէյո:

— Աս ի՞նչ հով է... գինին մէկ կողմէն, հովը միւս կողմէն:

— Այո, այո... այսքան բնութիւն ի՞նչ պիտի լսեմ, ո՛ւր պիտի գնեմ, ինչպե՞ս կ'ընէմ: Խնայեց կիներ, ինքն ալ, առանց հասկնալու, քիչ մը հեռանալով, աննպատակ քաշելով անձկագին երջանկութեամբ, ինչպէս կը քալէր մօրաքրոջ քովէն պզտիկութեան, ազատով, անկայն երկշոտ, ուղիւով դպնալ անոր խոշոր ծիծերուն, երկայն մազերուն, ինչպէս հիմա, յանկարծ անդադարաւնալով, որ քովինը իրեն չէր, որ խօսեր էր, այլ գաղտնի ներսերէն բան մը լսուածակեր էր, ինքը հոն երեխայի պէս, պարզ պատրուակ, ռեւէ մէկը պիշներուայ տարածութեան մէջ ու միեւնոյն ժամանակ միջազգային ակադեմական շրջանակներու կարեւոր անհատականութիւն, ոչինչ մը ու ամէն բան նոյն տոտն: Հասարակ մէյնքերի մը տափակ, ուսած կնիկը, կիներ ու ոչ կիներ նոյն տոտն, ու ինքը — այնքան ապահով զգաց ինքզինք, որ կրնար ժամերով քայլել, խօսիլ, նոյնիսկ գինովնալ այս կնկան հետ՝ իր բնական գերին մէջ մը — տած նորէն, ոչ մէկ պահանջ կտր իր վրայ դրուած ու բոլոր վայելքները ծառուղիին ծայրը կը սպասէին, մտիկ ընելով հիմա իր հին ձայնը:

— ...Այս ծառերու կատաղութիւնը ինծի Պեթհովէնը կը յիշեցնէ... բնութեան հոգին հոն ճիշդերուն մէջ...: Երբեմն մեծ գիշերներ, փոթորիկի ժամանակ ծովուն հղերքը կը նստիմ...: Իմ դործն այնքան իմացական է, որ ներքին անձս փրկելու համար կը փախիմ քաղաքէն, միտքէն ու մարդերէն: Տակաւ կը գտնէր իր ինքնազատահոգութիւնը, քիչ մը զանկով ինքզինքէն, կը մտնէր իր ամէնօրեայ կեղծ իրականութեան մէջ ու կը բուէր, որ կ'ընէր կէս-ականջ մտիկ ընէր, անդին նայելով ու գիտնալով նոյնիսկ, թէ խաղ էր ըրածը, բայց յայտնի չընելով ասիկա իրեն, ու ինք շարունակէր իր մասին այդ կէս-սուտերը, մինչեւ որ տաքնար կնկան սիրտը, մութին մէջէն յայտնէր իր հիացումը, գուրգուրանքը, կարծես թէ ինք նորէն տղայ մըն էր, նիւար, կծկուած, արգիլուած, բոլոր կողմերէն, կարծես թէ ժամանակը չէր տնցած վրայէն, բան մը չէ փոխուած պատանութեան աշխարհէն — ...այնպէս որ ամէն քայլը Պատմութեան մէջ կը կոխենք, այո տեղը Աղեքսանդր Մեծէն մինչեւ տափակ քիթով, հակա կզակով հոովմէացի սեմքիւրիսմները ու տակաւին մայթացի գունազեղ թռչախառաւոր տապանները, նոյն հովը, նոյն ամպերը, ես, դուք...

Յովհաննէսի ձեռքերը կը շարժէին լայն, կշռութաւոր, կը վախճար լուելէ ու եթէ շարունակուէր, հաւանաբար անկեղծ, անմիջական տաքութեան մը պահը վառէր ներսէն, այսպէս քաշելով դէպի մթութիւնը, ուր կարմիր ծուռ լապտեր մը կը ճռնէր, միակ յստակ իրականութիւնը ամբողջ կացութեան մէջ, ուր ինկեր էր առանց ուղեւուն, առանց գիտնալու հիմա, թէ ի՞նչ կ'ուզէ ընել, ի՞նչ... ո՛ւր կ'երթայ կոր կնկան հետ փոքր շալկած, անհոգ, անկամ, ու եթէ աս ասանկ շարունակուի քիչ մը գիմի ալ խմեմ մտածելով

ու երեւակայնիով յունական պարի շարժումներուն մէջ կրնն ալ քովէն խընդալով ձէ՛ք ըսելով իրեն, բոլոր կրննորու ծիծերը ու փէշերը վեր-վեր ցատկելով, մարդոց երկաթէ ափերը բռնելով ու կրննորու կոնքերուն զպնալով. ա՛ճ, սեւակ խնձոր-քիւն կրնամ ընել, մտածելով չիմա, բայց չհաւատալով անշուշտ, տակաւին, անծանօթ տեղ մը անծանօթի հետ կատակի պէս մութին մէջ մինչեւ դար անծանօթ ապրումը, միայն թէ՛ խելքը գլուխը մնար, չվախնար վերջին վայրկեանին, խուճապի չգար, ծածուկ անձը մէջտեղ չեւըէր յանկարծ, ինչպէս Վարչաւորյ մէջ կրթական նախարարին կակուղ ձեռքը իր ձախ ծունկին վրայ սեղանին տակէն. ի՞նչ կ'ըլլայ կոր, ծօ, խելայեղ մտածումին շուտումը մինչեւ կէս գիշեր, երբ պանդոկին իր դուռը զարկեր էին ու միայն աղջնակ մըն էր... Ներս առած էր՝ խորունկ շունչ մը քաշելով, որ նախարարը չէր, այլ՝ տխուր սարսափած աղջիկ մը, զոր քանի՛ անգամ որոշեր էր շինել այդ գիշեր, բայց խնայեր էր խեղճին անմեղութիւնը, անխորժութիւնը... հարկաւ:

— Ի՞նչ է առ վարը:

Կնկան ձայնը այնքան տաքուկ, մայրական եկաւ, որ ուզեց մէկէն ձեռքը անոր ուտին գնել:

— Ո՛ւր:

— Վարը, հոն, մեծ ծառին ետին... մարդե՛ր կան, տնա՛կ է, ինչ է: Հարցումները այնքան մերկ, անվնաս, միայն իրեն ուղղուած. այնպէս որ՝ կարեցին իր տրամադրութեան թափը ու մօտեցաւ կնկան, ուսերը դպան...

— Կարծեմ... կարծեմ:

— Գինիի տակառները բլլալու են... այո... չորս հաւ... Էս հոն կ'երթամ կոր:

— Ես ալ:

Արագացրին քայլերը. ախտի խմբով, մտածելով ու կրկին պիտի առանձնանար, գիտէր, մարդոց աննախատեսելի ներկայութեան մէջ, վախը ետ պիտի դար, բայց զոնէ կեանքը կարելի է նոր առիթ մը կու տար իրեն, մինչեւ հասնէր ժամանակը այս գիշեր ու մինչեւ մահ խաղէն դուրս գալու եւ ցոյց տալու, թէ ինչ ինչ բացառիկ անձ մըն է, ցոյց տալու նոյնիսկ գինովութեան մէջ ու կարելի է, որ կրնը հասկնար իր այդ ծածուկ, անզուգահեւ որակը ու կարելի է նոյնիսկ, որ մտերմանային ու սէրը, սէրը գրկէր գիւրեմք միասին, կամ միայն գինքը, գինքը:

Հասեր էին. ճերմակ ու կարմիր գինիի քով քովի դրուած, տակառները հաշուեց վեց հաւ. կծու, դոց հոտ մը կը շրջէր շուրջը: Բարձրերէն օրօրուող մերկ, խեղճ լոյսի մը տակ հինգ շուէտացիներ, որոնց մազերը կը փայլէին, կը խաղային հովին մէջ, ձեռքերին կուժ ու գաւաթ, այնքան ինքնու-մտաւ, իրերէ թէ իրենց օֆիսը սուրճի պահուն բլլար, պոչ բռնած, ցած, միավանկերով խօսակցելով: Տեսարանը հոն դրուած իրական մարդերու, իրենց ենթակայութեամբ իր վրայ պարտադրուած՝ ջղայնացնող բան մը ունէր. ինք, որ պիտի նետուէր, հաւանաբար, աննախընթաց պահերու ապրում մին մէջ, պիտի գինովնար... ու սա աւելորդ, իրական թէ անիրական մարդիկ, որոնք սակայն կը խօսէին Ռոզին հետ, հիմա բոլորը մէկ դուռը խընդալով գինք կրկին անջատելով ու բաժակները բերան տանելով արդէն... Անդին դարձաւ:

— Գիտէ՞ք ինչ:

Շուէտացիք կը հեռանային, կնկան քիթը ու աչքերը այնքան մօտէն,

դիրակի պէս կորսնցուցած արտայայտութիւնը, ձայնը արդէն անանձնակոտն.

— Վերէն, մուտքին քովէն, դաւաթ ու կուժ պէտք է առնենք, այլապէս չենք կրնար խմել հոս:

— Իսկ երբեք չէր բերեմ:

— Ձէ, պէտք չկայ:

— Հիմա կու գամ, մէկ վայրկեան չ'առնեմ:

Անհասկնալի ուրախութիւն մը կար մէջը: Արագ քայլերը, խիճերուն չար, սուր աղմուկը կօշիկին տակէն, հոգի, հոգի մէկէն նոր դտածի պէս ամէն կողմէն իրեն հետ օտարներէն փախելով, ազատուելով լոյսի ալքէն ու դարանակալ գինիի հոտէն, սպառնալիքէն — մեծ թափով քայլեց վեր՝ դէպի մուտքի դուռը: Մօտ հարիւր մեթր զառիվէր կար, ուրբուն ու ցից. ե՞րբ ծալիցիմք այսքան մաքրայ, մտածեց, սկսելով քիչ մը հեռալ վերջին դարձը — ւածքին, երբ նշմարեց վեց-հօթը աղջիկներու խումբ մը, որ դէպի իր կողմը կու գար, մինչ պարի եղանակը ծայր կու տար միեւնոյն-վարէն ու ինք մարմինը չարկած ո՞ւր կ'երթար. տեղեկութիւն ուսուցանող մէջ սեւ, յիմար մըջին մը ու այն ատեն յանկարծ անդադարձաւ, թէ իրական չէր այս ամբողջը, թէ՛ ամէն վայրկեան կրնար ինք վերջ տալ այս խաղին, ինքը հոս շունչը կարած ու մուժ ճամբուն երազի մը պէս ու կրնար շիտակ քալել դէպի դուռը ու դուռն ելլել: Եղիմ իր փոխաւի աշխարհէն, մտածեց:

— Հէլո:

Աղջիկը ժպտելով անցաւ քովէն:

— Հէլո:

Շատ բարձր ելած էր ձայնը, անբնական, ինչպէս պարապ օնենակի մը մէջ միւս-միւսակ: Կանգ առաւ, նայեցաւ ետեւէն, արեւց քրտինքը, նորէն նայեցաւ, յուսալով, որ դուռն մը ետ կը դառնար, մէկը բան մը կը պոռար իրեն. հոգին մէջ ինչո կրկնեց շատ ցած ու յիշեց համալսարանի քարտուղարուհին, կըր, պղտիկ բերանը, ծուռ, հաստ սրունքները, կենդանիի աչքերը իրեն դարձած սպասելով. հետո Ռոստո կու գա՞ւ. սիկարի ծուխին մէջէն՝ Օ, փրփրեւոր, ինչպէ՞ս գամ, մազերու ծալքածալը կուտակուածին տակէն վանդակաւ ու քալող նոյն ատեն, մեծ, կախ ծիծերը երբեք չալիմք ալիմք առաջիկան պարապ կենտրոն ամբողջ քրտինքի հոտ ու արիւնոտ միւս, որուն մէջ ուզած էր կորսուիլ ատուան երկուքին, կանակին վրայ մերկ պառկած պանդուխտ, աչքը դարձն՝ Նոտիոս շինելով կպնուն մութին, առնանդամբ բռնելով:

Հասեր էր կրպակին քով: Գիրուկ, թուի կին մը, քունը դուռնը, անուր ուշ տեղ մը կը նայէր: Ձարթեցաւ մէկ-երկու բոպէ, վայելելու համար պահէր, կինը հոն, ինքը՝ հոս, նեղ, երկայն սեղանով իրարմէ բաժնուած, առանձին, սակայն միասին: Մէկը եկաւ ու քովը կայնեցաւ, թեթեւ, բնական: Ինք խօսիլ սկսաւ, անհոգ, զուարթ շեշտ մը փորձելով դնել ձայնին մէջ: Կինը խօսքը ակոսներով կը խօսէր, մարդը քովէն լեցուն անձիկ ներկայութեամբ. Յովհաննէս նորէն կը մանէր, սկսածայ ճակատագրականութեամբ մը, իր հին խաղին մէջ: Մարդը կատակ մը ըրած ըլլալու էր, աղտոտ կատակ մը անշուշտ, ու խնդացին, ինքն ալ միացաւ, փորին ճարպերը մեղմ ցնցուելով, գլուխը մօտեցուցած մարդուն կարճ, խոնաւ նայուածքին, պիտի զինի չտար ու խնդուքը կնկան կլուսկ կսկորդին մէջէն. եկուր որ գիմովմամբ, ըսած էր քարտուղարուհին, ան ալ ատու պէս խնդացեր էր, հիմա մարդուն դառնալով, ամբողջ մօտա դէմք: Ձգիտցաւ ինչու ձեռքը մարդուն ուսին տարաւ, զայն ալ անհետ, հաւանաբար, այդ մարդկային հաստալակաց մտերմութեան, մօտեցումի հզօտութեան մէջ, որ երբեք չէր կըր-

ցիւր պատել սեռականութեան ապրումէն: Կինը երկու դուստր ու կուս մը կ'երկարէր իրեն:

Առած առնէ մատները անոր մատներուն դպան, սեղմեց կամաց մը ու ձեռքը անմիջապէս քաշեց ու քայեց, մոռնալով մարդուն ներկայութիւնը, պատանիի մը շափ փրփրուն, պատկերացնելով միւսը, որ վարը իրեն կը սպասէր, զինքը կ'երեւակայէր անհամբեր, շրթունքները կրծելով, հաւանաբար իր անունը տալով միտքէն: Ու նոյն անպատեխութեամբ կանգ առաւ ծառուղիին եզրքը, հովին աղմուկին հետ տարածուն ու խառնակ, երեւա-կայելով նորէն, առջին կուտակուող թաւուքէն անդին թաւաղ կեանքի հոկայ պահետը, զոր կը խմէին հիմա ալլանդակ շիւղիւններ, կը սեղմէին թեւերուն, ծունկերուն մէջ, աչքերը դոց, անտեսանելի սիրահարներ, որ կ'այլեր անսանձ պարողներու, երգողներու ծարաւ, փայլուն շրթունքներուն ու հեւացող, քրտնած կուրծքերուն վրայ, ամբողջ կողոպուտը թափած հոն, վարը, նետուած գողերու առջեւ, մինչ ինքը հոս, պարապ շիւղ, դաւաթները գրկած, կայնած, իր հազար անգամ մոխուած առանձնութեան ծայրը հասած կրկին. եթէ այս առիթն ալ փայցնեմ, ով գիտէ երբ սեղան մըն ալ կը հաւ-դիպիմ ամօր, մտածեց՝ առանց յատակ գիտնալու, թէ ինչի մասին էր մտա-ծուած:

Առջին ոտը գտնիթափն էր. կարճ ճամբայ մը առնելու եմ հասկէ, ան-ցաւ մաքէն, նայելով գէպի հոն՝ ուր գինիի կառանները ըլլալու էին, մոտա-ւորապէս, հոն՝ ուր Ռոզը կայնած էր անշուշտ, անհրապոյր բայց ցանկալի, խորհրդաւոր կերպով մը պատկանելի: Այս, ըսաւ մեղծ ձայնով մը, վերջին անգամ մըն ալ մտարերելով կնկան շրթունքները ու առաջ նետուեցաւ ճիւղ-երու, սաղարթներու զանգուածին վրայ, գրեթէ հրճուելով, աննախընթաց հանդիպումի մը նախազգացումով, տեսակ մը ակամայ անձկութեամբ, ինչ-պէս միշտ եղեր էր կեանքին մէջ, առանց իր ուզելուն, սեւ, սմայի վախով մը, որուն մէջ կ'ապաստանէր երբ փախէր մարդոցմէ:

Էջը սուր էր մինչեւ գաման թուփերու զանգուածը, բայց հասաւ, ծանր մարմնի թափէն տարուած, հաստ, սպիտակ, անբիծ, անմաղ ոտքերը արդէն հասկէն քաշելով գրեթէ: Մէկէն զարնուեցաւ ծառի մը՝ աչքերս պաշտ-պանեմ, մտածեց հազիւ հազ ու արդէն իրանը աջ շրջուեցաւ իրմէ դուրս ու-ծի մը տակ, ձախ թեւը գրկեց ծառին բունը ու մարմինը ամբողջ ծանրու-թեամբ ինկաւ թուփի մը վրան, գլտորեցաւ կողին, դարձաւ ինքն իր վրայ երկու անգամ ու անշարժացաւ ուրիշ ծառի մը քով. աս ինչ եղաւ վառ ինկալ մտածելով աչքերը դեռ չբանալով, խոնաւ տերեւները փակած դէմքին, մէկ ոտքը տակը ճմլուած հոն՝ ուր սարսափած ցաւեր կը պրկէին մութ աշխարհը մարթէն ներս:

Առնէ մը չլարժեցաւ: Մուր ցաւ մը կար գլխուն ո՞ր կողմը. հագնաւտ-նիրս ի՞նչ եղան, անցաւ մաքէն ու այդ վայրկեանին զգաց, թէ ինչպէս իր ամբողջ մարմնով շատ զանգագորէն կը տեղաւորուէր, կը հանդէժը գետնին վրայ, ճիշդ ինչպէս գէր, մեռնող կովու մը զանգուածը աւազի երեսին: Ու մնաց փորին վրայ, մանկութենէն ի վեր մեծցող, ուռող յոգնութիւնը, սըխ-րութեան մը պէս մակուկներուն տարածուելով, վերածուելով հիմա խեղճ, անճարակ, վրիպած մարդու մը աննշան ողբերգութեան, հոս՝ թուփերու մէջ նորէն նետուած ազտոտ լաթի մը պէս, բոլորովին անօգուտ, անիմաստ. փտող տերեւներուն հոտը այնքան ուժգին էր, որ ա՛յ չկրցաւ մտածել, միայն անորոշ կերպով կարծեց յիշել, թէ ինչպէս կակուղ քաղկաթոտներու ընկող-

մանած, կէս-բուն, մտացիւ աղջիկներու կը խօսէր բնութեան գաղտնի, էգրոյրի մասին... շիրի մը կը ցուցնէր այտը. շակեց դէմքը ու կրկին անշարժացաւ, պարտուած:

Որքա՞ն մնաց. անկարող դուրս քաշելու ինքզինքը մարմնի անսահման ճնշումէն, տէր կանգնելու այդ ճարպոտ, ածել ներկայութեան, որ հիմա օտարի մը շափ վանողական ու սպառնալի փռուելը էր գիտակցութեան լուսանցքին թէ վրան, որ կը ճգմէր գիտակցութիւնն իսկ:

Երբ կրկին ոտքի ուզեց ելլել, նախ՝ արմուկներուն կոթնելով, ոտկորները շաթլաթելով, ձեռքերը միշտ կառչած գաւաթներուն ու կուժին՝ հոգին աղմուկը իջելու էր. միայն պարին եղանակը, յամառ, միօրինակ ցաւի մը պէս, գինքը բռնի շարժելու ամէն կողմէ: Ի վերջոյ կայնեցաւ, ցաւերու ու ճիւղերուն մէջ երեւալով, ուսը տուաւ ծառին, զարմանալով, որ անկումը չէր կրտարած թափը, իբրեւ թէ մարմինը կապ չունէր մտքին հետ: Նոյնիսկ վախը, որ կը թուէր փարատած ըլլալ այլեւս. անհամբեր ուրախութեան պէս բան մըն ալ կար մէջը, տեսնել մը քաղութիւն որեւէ վտանգի առջեւ նետելու պիտէր: Նայեցաւ ձեռքի առարկաներուն, մեղմ խնդուք մը նոյնիսկ. կատա՛կ էր եղածը, թէ լուրջ էր:

Ու մինչեւ յաջորդ անկումը, կզակը կզպած, աչքերը կէս-խուփ, լուծալը բռնելով՝ վար վազեց ճիւղեր, ոտներ կտրտելով, բարակ ծառեր ցնցելով, սայթաքելով կակուղ, սահուն, սեւ մակերեսներու վրայ, երեսը, վիզը սկզբ-թելով մէկ մի քայլի, բայց բոլորովին անտեսելով, տեսակ մը հերոսութեամբ, մէկ ձեռքը ծառի կուրծքին պաշտպանելու գաւաթները, կուժը, անտարտու՛յ, անդիտակից գրեթէ, կրկնելով՝ պիտի հասնիմ, պիտի հասնիմ, տեսնելով փրանքներու պէս կնկան մազերը, փոթին պարոյրը ու սկսելով պզտիկ հաճոյք մըն ալ առնել փուշերու խածերէն, քարերու հարուածներէն, երբ յանկարծ ոտքը պարապին մէջ ինկաւ ու վար գլորեցաւ:

Այս անգամ շուտ դաւա ինքզինքը: Վիզը սաստիկ կը ցաւէր, կոթներ էր ծառի մը կոնդին ու մարմինը այլանդակ փռուելը առջին. Ի՞նչ գործ ունիմ գետինը, խորհելով ու չհասկնալով տակաւին, երբ մարդու ձայնը հասան վարէն. մօտ եմ ասմբում, մտածեց, մէկը մթութեան ականջէն բան մը պոռաց ու ինք կարծեց, թէ իրեն էր, ծընկի եկաւ խոտերուն մէջ, հեւալով տակաւին, անկարող կայնելու, միայն գիտնար, թէ ի՞նչ պիտի ընէր հիմա, ո՛ւր դնէր սա մարմինը իր խութերով, հաղուստները տակնուվրայ, նստած փոսին մէջ ծալուած ինքն իր վրայ կրտած խաղալիքի պէս, մինչ նայուածքին տակէն կենդանական, ախուր, դոց ու հալածական վախ մը նորէն ծանր տեղաւորուելը, փաթթուելը թեւերուն, որոնք գրկէր էին կոտուացող ծունկերը, միայն թէ՛ դուրս ելլէր մթութեան մարմինէն, վերջ գտնէր աւիկա, որ կատակ չէր այլեւս, դուրս ելլէր, որ գիտովնար վարը մարդոց հետ, կընկան հետ, որ իրեն կը սպասէր, խմէին միասին յդի ամերիկացի չէկ ծիծերով պիտի ք... վրան հեծնար, ք... իրեն կը սպասէր, ի վերջոյ ամէն ինչ կը լըջանայ՝ առանց վտանգի. կիսաքր եկաւ, Եկաւ, Յովհաննէս, վարն է, ա՛լ կատակ-մատակ չկայ, փախիլ չկայ, ասկէ վար տասը քայլ ու ամէն բան կարելի է մինչեւ ծայրը, ծայրէն ալ անդին, միայն թէ՛ աղատուիմ տոտեղէն, հասնիմ էն ծայրը դառիթափին ու շարշարանքին:

Առաջին անգամ ըլլալով, վախցաւ ինքզինքէն, իր անասունի զանգաւածէն ու մտքին խեղճ իրարանցումէն: Կը զգար, որ որեւէ բան կրնար ընել հիմա, եթէ վախը շարունակուէր. ինքզինքն մեղացնել, անցաւ մաքէն, սակայն գիտէր, թէ քիչ ետք գիտին այդ առիթը կու տար արդէն: Մեղացնել

լՄՅՈւՅ, մտածեց երկվայրկեան մը ու մոռցաւ անմիջապէս, կառչեցաւ գրեթէ վերեւ ճիւղի մը ու մեծ դժուարութեամբ վեր քաշեց իրանը՝ ազատիմ հասկէ մտածելով ու կրկին առաջ նետուեցաւ խիտ ծառերու մէջ, զարնուելով զարնելով, խնդալով, տեղ-տեղ ցաւի ճիւղերով, անկարող զսպելու վայրի թափելով։

Վայրկենի մը պէս, որ յանկարծ քաղաքի մը պարապ հրապարակը կը գտնէ ինքզինքը՝ Յովհաննէս կայնեցաւ ճամբուն մէջտեղը, ապուշ ժպիտ մը երեսին, դողացող ձեռքերը ծալած, դաւաճեցաւ վրայ, պատահապատահ զգեստներով, ճաթրտող ու բզկտող ցաւերով գիշերուան տարածութիւնը լեցրնելով մինչեւ աղմուկները, պլպլացող լոյսերը ու տարուբերուող ծառերը բոլորը, բոլորը իր մէջ, ինքը, որ կը քալէ ազատուած, ուժովցած, անդիմադրելի... Գէպի մարդերու աղաթիկ խումբը, հոն։

Մինչեւ հասնիլ, ծանր քաշկրտուն քայլերով, զանգաղ հեռով օրորւելով՝ խումբը հեռացեր էր։ Կառասներուն քով նիւար, վախկոտ երիտասարդ մը կար, արող աչքերով, յունական ամէնէն սովորական տիպարը, զոր հազիւ նշմարեց։

— Ո՞ւր է ամերիկացի կինը։

Հարցուց անպիտան, մայնը պահելով օտար, հեռու այդ հասարակ մարդէն։

— Ո՞վ։

— Կինը, ամերիկացի կինը։

Ձայնը բարձրացեր էր. բառը բերնին մէջ ու մարմինը փուշ-փուշ, բայց չկրնալով երեւակայիլ զայն։ Ծարժեց գլուխը ու կը պրկուէր կրկին-ամէն ինչ անծանօթ բանին դէմ։ Լայտին նայեցաւ, այնքան մօտիկ կը թուէր։ Մարդը կը խօսէր։ Կլոր, գիրուկ տակառները, յգի կովերու նման քով քովի. ո՞ւր է ամէն ինչ։ Հովին ձեռքը մաղերուն մէջ, իրեւ թէ մէկը ըլլար։ Նուագը կատաղի, յամառ, ջգայնացնող, անհամբեր. ո՞ւր է Կինը, բարկութեամբ, ուժի զգացումով, ա՛յնքան իրական, որ երկարեց թիւր։

— Լեցո՛ւր։

Հիմա ալ ազատել չէր ըլլար։ Գինիին բարակ, հանդարտ թեւը խաղաց աչքին մէջ. մարդը բան մը կ'ըսէր, մտահոգ, հարցական։

— Շո՛ւտ։

Մարդուն խենթեցնող դանդաղութենէն անդին՝ տմրդի պարապ գիշերը, որ պիտի լեցուի, անդիմադրող, անծայր, կոտորացող յողնութեան մը պէս։

Խիստ երկու լեցուն զաւաթ, յետոյ կուժն ալ պարպեց մինչեւ յատակը, նայելով աղուն, որ հիմա տնտարներ տրտալատութեամբ կը հետեւէր շարժումներուն ու նորէն սկսու խօսիլ իր ծարախին, թէ պատած բաճկոնին մասին. կարեւոր չէ, եւէ կարեւոր չէ. ու լեցուց նորէն կուժը, եւէ կարեւոր չէ, մտածելով, խնդալը եկաւ, տեսնելով անիմաստ երիտասարդը հովին մէջ անշարժ, խեղդուած ձուկի պէս, մտածելով, լոյսին խաղը երեսին։ Այդ պահուն հովը բերաւ անպիտան, ալիքն, անդիւն, ճամբու ծայրէն ուժգին ալիք մը նուագի, պոռացող ձայներ, ծափ-ծափ ճիւղ ցատկոտող կեանքին. հոն է Կինը, մտածեց։ Ձայնի մէջ է, անցաւ մտքէն ու մէկ ոտքը վերցուց, լեցուն կուժը թռնող թեւն ալ վերցուց. կը պարեմ կտր, անցաւ մտքէն ու քիչ մնաց, որ գետին իյնար. ամէն բան կրճամ ընել կրկնելով, սեղմելով կուժը, մարմնին մկանները պրկելով ուզեց, որ առանձին ըլլար, հիմա, որ այս մարդուն վրայ չվատնուէր իր անոսածման անձը։

Երկու կիներ զգուշութեամբ մօտեցեր էին ու կը քննէին զինք. ուրկէ՞
բռնանալ ասոնք, մտածեց ու տեսաւ, որ կը խնդային պզտիկ, սեւ մարմին-
ները, բարակ որունքները: Փորձեց ժպտիլ, բան մը ըսել, բայց միտքը պտ-
րապէս ու ալն ոտնն պարի կողմէն հսկայ պոռչառուք մը թափելով եկաւ, ու
ճամբէն վար, ձայնին ուղղութեամբ շարժեցաւ Յովհաննէսի մարմինը, ինք-
նիրեն:

Առաջին հաստատուն ծառին քով հասեր էր, երբ գիշերն ու անտառը
սկսան դառնալ գլխուն շուրջ: Կոթնեցաւ ծառին, կէս մը գոցելով աչքերը,
բայց տեսնելով երեւացող ծառուղին, լոյսերու սլաքները, մինչ մարմինը կը
սկսէր արդէն մօտ կազմել ետ ու առաջ ընդհանուր շարժումին, կը թեթեւ-
նար ու կը թռչէր հեռանալ իրմէ: Ի՞նչ կ'ըլլամ կոր, ու մէկ ձեռքը բռնէին՝
կառչեցաւ ու միւսը կուժով առնէին հրեց ու տեսաւ, որ ան ալ կը դառնար-
կը գիծով մամ կոր, մտածեց ու մտթին մէջ միւս-մինակ մտածումը տակուած
նման սլլուեցաւ ու տակաւ շուրջի կլոր-կլոր շարժումը աստիճանաւ ու այն-
քան տարօրինակ զգայնութիւն մըն էր, որ վախը մէկէն հեռու տեղ մը,
գուրբը, լոյսերու, ծառերու խաղին մէջ մտաւ ու իր մէջ միայն ազատ, ան-
կաշկանդ ըլլալու գիտակցութիւն մը մնաց: Այնքան յանկարծական էր, որ
չկրցաւ հասկնալ, թէ ինչպէ՞ս ինքն իր ներկայութեան հալածող ճնշումէն
կրնար ազատուիլ այդպէս դիւրութեամբ: Աս էր կատարեալ վիճակը, որ միշտ
ուղիք էր ապրել: Ու մինչ գլխուն շուրջի պտտում կ'արագներ ու կ'աւելարէ՝
ան տարտամօրէն զգաց, թէ հիմակ էր միակ ատենը ամբողջութեամբ, ամէն
ինչով աէր ըսուածը ունենալու ու մէջը հալելու: Ինքզինքը բոլորովին անա-
նուն, անիմաստ անձ մը զգաց. ոչ ոք եմ հիմա, ու չկար նաեւ աշխարհը մար-
դերու, օֆիսներու, մարմիններու, խօսքերու: Աւելն ինչ կրնամ ըլլալ, մտա-
ծեց ու թէ մէկը, կոշիկ մը, կին մը, սին մը, որեւէ բան ըլլար իր անձի
մօտիկութեամբ պիտի բաւէր, որ իր կեանքի մեծ վայրկեանը ապրէր, ինչ
ուզեմ ցէ՝ պիտի ըմբմ, մտածելով հազիւ հազ:

Որքա՞ն տեսց, թեւերը փաթթած կուժին շուրջ, խելայեղ ու տարա-
ղուն: Բայց ատեն մը ետք սիրունիւր պահանջը այնքան ուժեղցեր էր, որ տե-
սակ մը տխրութիւն համակեց զինքը ու գիտէր, որ կրնար լալ կամ խնդալ,
պոռալ ու երգել յուզումի առատութենէն՝ նոյն բանն էր, միայն թէ՝ գետին
չիյնար, միայն թէ՝ դադրէր սեւ ձեւերու, լոյսի նիւզակներու անվերջ վազը
ամէն կողմէն: Ի՞նչ կ'ըլլամ կոր կրկնելով, մինչ կը թեթեւնար շուրջի ձա-
յներուն պէս, օգին ու լոյսին պէս ու գէր մարմինը ո՞ւր էր, որ զինք տանէր
անդ մը նստեցնէր, գերմանուհիին թէ ամերիկուհիին քով... այնքան լեցուն
էր բարութեամբ, կը յորդէր երջանկութեան բովանդակ անշահեղով, մարդկա-
յին մօտ-մօտ շունչի սէրով, որ երբեք այնքան առանձին, անմատուած չէր
զգացած ինքզինքը կեանքի մէջ, այնքան, որ կրնար ամբողջ տիեզերքը դըր-
կել, ամէն ինչի փաթթուիլ ու տակաւին պիտի չբաւէր:

Եւ եմ, անցաւ մաքէն, գիծովցեր եմ, հարկաւ ու տարաւ բերնին. գի-
նին չոր, նոյնիսկ լեղի համ մը ունէր, հովին մէջէն երգերուն պէս իր մա-
սին ամէն կողմէն կը դարձնէր զինքը, կզակին թաց զգայնութիւն մը կար,
լոյսերը, լոյսերը, միայն թէ՝ կենային տեղերնին, գլուխը, մարմինը իրար-
մէ անմատուած, բոլորովին անկախ, խառնուած աշխարհին, ուժովցած, տա-
րածուն, ծփալով, դառնալով դէպի ո՞ւր, ո՞ւր, ամէն ուղղութեամբ, միայն
թէ՝ վար դնէր ձեռքի գաւաթը: Սակայն սեզմեց կուժը ուժգին, միակ տո-
կուն բանը այս ամբողջին մէջ, միայն թէ՝ վախը, շուարումը չըլլային,
միայն թէ՝ լուրջ չըլլար ամէն բան, որ ո՞ւր է հիմա, Աստուած իմ:

Ծառերը խնայեալ խենթութեան մէջէն ու հովին վայոցը ալիք-ալիք սեւ թմրուկի հարուածներով, ուղին բոլորովին ամայի, որուն մէջէն թեւերը ալ, ձախ նետելով, ոտքերը ետ ու առաջ պարապութեան յինելով, ծալուելով, տակէն քաշուելով, Ծ՛ւր Է... Ծ՛ւր Է կրկնուելով՝ ան գնաց տառ ու քայլ, տառնըհինգ քայլ, ամբողջ խառնակ, քանդուող էութիւնը հրուելով զէպի գուրս, զէպի անձկագին պոթկում մը, որպէսզի գոհացնէր անհեթեթ պահանջը մէկ, մէկ, մէկ, անձի մը ինչի՞ն, ի վերջոյ անցնելու համար բոլոր ցաւերէն, վախերէն ու շուարումէն անգին, մարդ ըլլալու անկարելիութենէն անգին՝ մինչեւ կեանք բոսւած պղտոր խաղաղութիւնը։

Ճամբու նորի թուփերուն ետին պղտիկ, բաց, կտրակ վայրեր կային, քարէ նստարանով մը, ծածուկ խորշ, սիրահարներու եւ միայնակ, յոգնած ծերունիներու համար։ Անդպարար հոն դացին ոտքերը. Ծ՛ւր կ'ընթամ կոր ծօ... Վար պիտի իյնամ, խօսեցաւ բարձրաձայն. բայց չի՛նկաւ, կրեցաւ իրանը, գոցեց աչքերը, որ չտեսնէ դիտուն պտոյտը. Ծ՛ւր ալ խաղ Է, կրցաւ մտածել ու մտածումը գնաց, եկաւ ու կորաւ, մինչեւ հասաւ բացուածքին մուտքին։

Հոն կանգ առաւ, հագիւ հազ։ Գիմացը մարդկայի՞ն, թէ ինչ կերպարանք մը կար։ Փորձեց ժպտիլ, ձեռքով օգին մէջ անորոշ շարժում մը դժեց, հէլօ, կանչեց նստած մարդուն, որ ետ-առաջ կը ծփար, ճիգ մը ըրաւ զայն բռնելու ու տեսաւ կուտը ձեռքին մէջ։ Գիմի բերի, մուտաց հայերէն, ա՛ն, պոռաց մէկէն ու միւս ձեռքն ալ երկարեց ու մղումը գինքը առաջ տարաւ բոլորակէն ներս ու չկրցաւ հաւատարակութիւնը պահել, սայթաքեցաւ, կիներ ոտքի ելաւ ու իրեն այնպէս թուեցաւ, որ չէկ մազերու ամբողջ առատ ծփանքը հովին խենթ թափով իր կողմ շարժեցաւ. դուռն եւ, սիտի ըսէր պոթթ-կալու պատրաստ, երբ ծունկը ուժգին նստարանին եղբիքին զարնուեցաւ ու ցաւի սուր նիզակ մը նետուեցաւ ուսին ու խրեցաւ գանկին ետին։ Ամբողջ ծանրութեամբ վար ինկաւ, սուր ա՛յ մը փրթաւ բերնէն ու տարածուեցաւ կոնակին, ալ ծունկը վեր։

Մշուշի մը մէջէն յետոյ լսեց կնկան ձայնը, որ քովը եկեր էր. վար ինկալ, խօսեցաւ ինքնիրեն ու մեծ ճիգով մը փորձեց շտկել մարմինը, որ օտարի մը պէս գետնին էր, քովը. միայն քէ՛ կիմը չեքթայ... մի երթա՛ր, մորլ-տալով բերնին շուրջերը, մինչ տքալով կէս մը ոտքի հրեր էր մարմինը արդէն, հրեր զէպի խոշոր կտոր մարդկութիւնը, հոն հասնելու ու հասնելու մէկ անգամ ընդմիջաւ. եկալ, եկալ, ցած խօսելով, խարխափելով գրեթէ կայնած հիմա կէս լեցուն կուտը գեռ սեղմելով շուարած կնկան դիմաց, որ ի՞նչ լեզուով գեռ կը խօսէր հովին մէջէն. ես եւ, Յովիսննէսը, խօսեցաւ հայերէն. ինչո՞ւ բռն չես գար կոր, հէ՛, լիտաւելով բառերը ու՛ քայլ մըն ալ զէպի առաջ ծունկի ցաւին հազիւ դիմանալով։ Եկալ, կրկնեց՝ առանց շարժելու. քովնտի ծոցեցաւ, ետ եկաւ, առաջ գնաց, ոտքը շարժեց. սիրէ ինձի, սիրէ, հազիւ շինելով անդրեքն բառերը, սպասելով պատասխանին ու գեռ կը կայնէր հոն, անծանօթ բանի մը յոյսով, եթէ կիներ չփորձէր քովէն փախիլ-երթալ։

Բռնեց, թեւէն, սեղմելով երկաթէ մատներով ու լսեց անոր ճիւղ լարս կողմէն կտր-կտր, բայց չուզեց հաւատալ, որովհետեւ այս էր հաճոյքը, այս ազատ, նշանակութենէ գուրկ ու մարդկայինէն անդին մօտեկութիւնը, երբ բիրտ շարժումով մը քաշեց զայն զէպի իր մարմինը, յետոյ զգալով հազար մանրամասնութիւններու տարտամ ամբողջութեան մէջէն ինչպէս գրք-կած էր զայն, ճգմելով-ճգմելով իր մարմնին վրայ, իր մուկ, հակալ կար-

տը փորձելով դուրս գալ իրմէ ու անցնել տնոր թափահարող թեւերուն մէջ, կենտրի ժամանակը չհասած, ամէն ինչ վերջնականապէս չքայքայուած, հաճութեամբ խենթի պէս ինչ որ հասնէր չոր շրթունքներուն, վիզը, ալիքը, մազը... ինչպէ՞ս կը պոռայ կոր, մտածելով. ինչպէ՞ս կը գարնէ կոր... քան մը պիտի չընեմ որ... օխ, ինչ երջանկաւորիմ. ու եթէ աշխարհ ժամանակ տար իրեն, հաւանաբար քակուէր, ի վերջոյ, հին անձկութեան ու վախի կծիկը ու ան հասած առանձնութեան, թէ առանձնութեան պատրանքին վերջին պահը՝ քակէր թեւերու շղթան ու ընտանի, բարե՛ պատկէր կակուղ կոնակին վրայ, խաղաղութեան հասած, միտ-մինակ:

Այնպէս որ՝ երբ միտքը ինքն իր վրան կը փակուէր, կորսնցուց հաւատարակչութիւնը ու միտքին տապալիցան ալին, ցած թուփերու շրջապատին վրայ, իշխանով ամբողջ Ծանրութեամբ իր կողին երկայնքին: Ա՛յ, պոռաց Յովհաննէս ներսէն-դուրսէն, գլուխը փուշերուն մէջ խուճապահար ու կուժէն դինին թափեցաւ դէմքին ու աչքերը ալքեցան, մինչ կէնը կը տապալուէր վրան, բռնուած դեռ իր թեւի օղակին մէջ: Հոգի խլեց-տարաւ կնկան կոկորդէն անմարդկային ցաւի մը ազդեցիկը: Սակայն վրան ուժ չկար շարժելու, մինչ թոյլ հարուածները ինկան երեսին, քիթին, կուրծքին ու սկտաւ պոռալ հիմա, տնդօր հրելով իր դանդաղածը: Տակաւ կ'աւելնար վախը, շրթնաթանքը, հոգի համ մը կար բերին ու հազիւ կրնար շունչ քաշել: Մտքի մը հետեւ ճիւղերուն թափահարումին մէջէն նշմարեց ճոճկուած արտա-յայտութիւնը, որ կը հեռանա՛ր, պիտի փախէ՞ր երթա՛ր. ո՛չ, ո՛չ, պայթեցաւ դանկին մէջ ու ծախ թեւով յուսահատորէն փորձեց սեղմել կնկան իրանը, բայց ան իր փորին յենելով՝ արդէն վեր կը հրէր ինքզինքը ու եթէ փախէր, կորսուէր մութի աղմուկին մէջ, այլեւս ոչինչ կը մնար աշխարհէն. ոչինչ, ոչինչ, կրկնեց ներսէն իր ծայրը:

Այն ատեն ուղեց շտկուիլ, փախիլ վախէն ու ցաւերէն. չկրցաւ: Ուղեց կառնիլ նորէն թեւին ու իր երկար, պարապ կնանքին ամբողջ անդործ ծածկել, օթեկ ցանկութիւնը ուղեց անձայն անհասկացողութեան խորերէն դէպի կին մը ծուռ տաքող լացի մէջ պոռացող, աշխարհի մէջ իրեն մնացած միակ էակին, որ գլխուն ջով հիմա ծուռկի կը զալարուէր, ձեւքերով փորը գրկած, ու երերուն:

Մի երթար, շնջուց հայերէն՝ քարացած ակռաներուն մէջէն ու ձեռքը երկարեցաւ կտր-կտր դարձող կերպարանքին, որ ոտքի կ'ելլէր, կը շարժէր դէպի նստարանը ու ծանր, կոտորացող, անդուծ ցաւերուն մէջէն նորէն ծընուէր իր անբուժելի կարօտը այրուելու մարդկային անկարելի հպումէն ու առանց զիտնալու, ձեռքը զոյգուեցաւ կնկան ոտքին ու այնպիսի՛ աւժով մը զայն քաշեց դէպի իրեն, որ կէնը սուր, ողբադին աղաղակ մը արձակելով՝ փլոււ իր վրայ նորէն, արժուկը խրելով իր փորին մէջ ու կտրելով յանկարծ շունչը, մինչ տաք ու թաց գլուխը ու մազերուն ալիքը կ'իշխային իր վրայ, գոցելով դէմքը ու գրեթէ խեղդելով գինջ: Ու այդ երկվայրկեանին, իր անսանձելի հրճուանքէն ու շնչահատ խուճապէն բոլորովին անզսպելի՝ թեւերը փաթթուեցան տնոր բարակ վզին շուրջ ու սարսափելի օղակը սեղմեց, սեղմեց, սեղմեց, մութին մէջէն աչքերը ուժգին դոցած, մարմինը պրկելով գերազանց ճիւղով մը. մի երթար, մի երթար, ճշտով գանկին մէջէն տեղէ մը, մինչ տակաւ կը զաղրէին կնկան տկար ցնցումները, կը թուլնար մարմինը ու իրանը. կամաց մը, կը դառնար իր կողքին ու կ'անշարժանար ջուփի ի վեր, գլուխը հանգչած իր վզին:

Հոգին ոռնոցը, ծառերը հոն էին դեռ ու մութը շատ աւելի մութ:

Քակուեցան թեւերը ու հիմա կնկան գլուխը սահեցաւ վար, մազերը քառեցան երեսին, աշտին. կակուղ մորթը կը յամենար իր դէմքին վրայ: Փոփս է, կրցաւ մտածել, բայց աշխարհը դեռ խելայեղ վազքին մէջ էր. քոփս է, կըրկնեց ու սպասեց, որ հանդարտէր, մութին մէջէն հեռանար վախը:

Յետոյ փորձեց շտկուիլ, կնկան վրայ հակելով, արժուկին կոթնելով՝ ոտքերը վեր քաշեր էր քիչ մը, ելած էր տեղէն, երբ յանկարծ կոկորդին մէջ զգաց ճնշում մը, որ մէկէն բարձրացաւ, բարձրացաւ, փորձեց զսպել. ցլիտի փսխեմ. ուղեց հեռանալ, բայց չկրցաւ ու հիմա ամէն բան խցուելով, սեղմուելով, հրուելով դուրս, դուրս՝ մինչեւ որ հասաւ քերանը ու պոռթկաց կնկան երեսին: Ետ ինկաւ ինք, իր տեղը:

Երբ քիչ մը մեղմացան թռքերուն ճնշումը ու կծկումները, գտաւ թաւկինակը եւ ուղեց արեւ ահոր վիզը, դէմքը, գոց աչքերը, մազերը, դողդողուն գուրգուրանքով խօսելով ահոր հետ, ներողութիւն խնդրելով բարի, պղտոր պատկերէն, առանց մտածումի որեւէ ճիշդ ընելու, վրան այդպէս ծռած, առանց գանելու փսխունքէն, հոտէն ու հպումէն մատներուն միջեւ, առանց յիշատակի ու բառի: Յետոյ, երբ բաւական մը մաքրեր էր, երկար նայեցաւ ահոր անդիմադրող, անփասեղ մարմինն ու խորունկ-խորունկ շունչ մը քաշեց: Հոյ՛ր գնաց-եկաւ, մէկը հեռուէն սուշելով անցաւ-գնաց, պոպ էր յանկարծ ու ծանր, սպառած յոգնութիւն մը կը տեղաւորուէր արունքներուն ու թեւերուն մէջ: Բայց կիներ չէր խօսեր, չէր շարժեր. քնացած է, մտածեց, ելմա կ'արթննայ:

Բռնեց մէկ ձեռքը, զգուշութեամբ շոյեց: Ռոզ, շնջաց անուշ վախով մը ու համատարած փափանքին մէջէն իրեն այնպէս թուեցաւ, որ անոր շըթթունքները շարժեցան մեղմօրէն, լոկեց փափուկ ձայնը, ու մազերը կը խաղային նորէն հովին մէջ: Փորձեց կեդրոնացնել նայուածքը աչքերուն վրայ — պիտի բանար...: Ոչ, չբացուեցան. քոզ քնացայ, անցաւ մտածումը, ետին թողնելով պարապութիւն մը, բացակայութիւն մը, գոր այնքան լուր կը ճանշնար, որուն սահմաններուն անցուցեր էր իր ամբողջ կեանքը խաղ ու լուրջ, ու հիմա զգաց, թէ ինչպէս առանձնութիւնը կամաց-կամաց կը գոցուէր նորէն չորս կողմէն, դող մը անցաւ վրայէն ու խորերուն մէջը կորսուեցաւ:

Մոեցաւ վար, գրկեց երկու թեւերով կնկան ուտերը ու գերազոյն կարօտի մը անձկութիւնը արտին, մոռցած ամէն ինչ ու անկարող մտածումի, դպցուց շրթունքները անոր աշտին ու յետոյ, մեծ զգուշութեամբ՝ որ չարթնցնէ՝ դուռ իր գլուխը անոր թուշին տակը, վզին աղտոտութիւններուն մէջ ու երկար, երկար համբուրեց: Ու ատկէ վերջ այդպէս մնաց, վերջին յոյսին մէջ անշարժացած:

Վ. ՕՇԼԿԱՆ

Ս. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Ե Ա Ն

**Ա Կ Ա Ն Ե Ա Լ Զ Ա Յ Ն Ե Ր
Ա Ր Ե Ա Ն Յ Ի Թ Ո Ղ Ո Ւ Թ Ե Ն Է Ն**

I

Մարդը ելաւ
մայր ցաւի ճապաղիքէն առաջին
եւ զգեստն իր ներաշխարհին
— անդոհանքի գոլորշի —
յոյզերն անծէս տարտղնեց
մենութեան կոյր վիհերու անբովանդակ ալքերուն՝
իբրեւ արեան անձրեւներ եւ քերթուածներ բեղմնալի:

Մարդը ելաւ
կոյս ցաւի ճապաղիքէն առաջին
եւ զգեստն իր մտաշխարհին
— տառապանքի հայելի —
գիծերն արու սերմանեց
ամայութեան բորբոսած կարկամներուն մէջ արթուն՝
իբրեւ սերմեր խոտացեալ ապագայի, անցեալի:

Մարդը ելաւ
եւ ինքն իր մէջ կրեցաւ:

II

:Ոտքերդ անուժ կ'առաջնորդեն քեզ դէպի ո՛ւր.
ճամբան քար էր, իսկ ծառերը՝ լուռ լապտերներ:

Ել եւ փնտռէ ոտքերն իմ
ու կը գտնես զիս իբրեւ լինելութեան ըմբոստ նաւ,
իսկ անորոշ այս ուղին՝ թէ՛ ջուր, թէ՛ հուր...

Չայներ եկան գիշերներուն անձաներէն
եւ բառերը կայմեր դարձան:

Կայծակները — հրեշտակներ զեհենի — արձակուեցան այ-
լութեան գիշերներէն ու տարածոյթն այդ աղօտ կամաց-կամաց
լիացաւ անձրեւներու փսփսուքով: Կոյր թմբկահարը խափշիկ, այ-
լափոխուած սեւ ամպի, ատելութեան մատներով իր թմբկահարեց
նախերգանքը «Համանուազ № 0» վասն ճրդ օրուան արարման»
անհեղինակ արարչութեան:

Եպարդոսներն երազներու անջրպետին մէջ թեւ ածող խա-
ղեր դարձան անիշխան, իսկ կէս ձայնը քառորդ ձայնին հետ
զիրկընդխառն կախուեցաւ թաւ ջութակին լոյծ ու խոնաւ լարերէն:

— ՉԱՅՆ № 0 —

...Եկէ՛ք ինձ հետ: Եկէ՛ք քալենք թաւ ջութակին տեսիլնե-
րուն՝ թաւ թմբուկին ուղիներով անապահով եւ կը հասնինք մենք
միասին նախարարման պահէն առաջ, մութէն առաջ, լոյսէն ա-
ռաջ ծաւալած լինեցութեան սաղմերուն —

նախադիթմի,
նախաձայնի,
նախաբանի,
նախալեզուի անդրաստուածեան առեղծուածին:

Չայնն էր ծանօթ: Կարծեց, թէ ձայնն է իր ձայնին կորուս-
եալ կամ արձագանգը մութին: Դիտեց չորսդին: Անջրպետն էր սեւ
մշուշ եւ մետաղեայ ժամանակի աղիքներուն խլրտող առօրեայի
վոհմաններուն բառարանը կազմակերպ:

Լքեց ինքզինք՝ իր մարմնին մէջ
եւ հովերուն համար մութին
նախալեզուն արեան ճամբայ հռչակեց:

...Եւ հեռացաւ:

Եւ առաւել մօտեցաւ իր էութեան մէզերուն,
դարձաւ ուղի, դարձաւ նաւ,
դարձաւ երազ, դարձաւ կաւ,

դարձաւ ամպրոպ, բոց անբաւ
եւ ինքն իր մէջ կորսուեցաւ...:

III

Երկիրը չէր խօսեր,
երկինքը անապատ էր,
մինչ ինք իր մահը կ'արարէր:

Կանգնեցաւ կասկածներու ծայրամասին: Դիտեց չորսդին:
Անջրպետն էր լոյս, մշուշ եւ սաղմնային ժամանակին հրաքար-
բառ երակներուն պղպջող անդրաշխարհեան ձայներու պատա-
րագն էր անկազմակերպ:

Կողերն ի վար կոտտացող ողնածուծեայ աշխուժին մահ-
ւան լարերն արթնացան: Դիտեց չորսդին — ոչի՛նչ, ոչի՛նչ, եւ
մագնիսներն կապիճներուն ուղղեց դժգոհ անջրպետի կայաննե-
րուն գունաւոր՝ խափշիկ խաւերն անիշխան մագնիսելու, գերելու:

Անջրպետը
յուզարկաւորութիւնն է երազներուն,
խսկ թոփչքը՝
անյոյս փախուստը քուրմերուն:

...եւ մօտեցաւ:

IV

Սեւ ադամանդն արդ կ'արձակէր հապար երանգ, ձայնա-
նշոյլ՝ իր հասցէին սպառնալիք. «Իուն լուացուէ իմ գոյներով, իմ
թոյներով, լուտանքներուս աւետարներ անձրեւներով, օրհներգնե-
րով»...

Գնչու դոփիւնն իր էութեան պոռթկաց յանկարծ քար դա-
րերու, լոյս դարերու երազոգի դիերուն սառցամոխիր անդունդնե-
րէն՝ Մարքի Սատի աճիւններուն մառախուղները կարմիր, զո-
հերն ուրախ պարեցին շաչիւնները մտրակին, մինչ քուն կեղծող

հանդիսատես արձանները փորձեցին զիջերուան նենգ պնդաններուն կապանքել լռութիւնները զեղին:

— ՉՍՅՆ № 1 —

...Եկէ՛ք ինձ հետ: Եկէք մեկնինք իմ արիւնին, ձեր անունին՝ անկումներու ուղիներով ապահով եւ կը հասնինք մենք միասին՝ նախարարման պահէն առաջ, մութնամութիւն լոյսէն առաջ եւ լոյսէն ետք յար ծաւալող լինելութեան նախասաղմին —

նախառիթմի,
նախաձայնի,
նախաբանի,
նախալեզուի հրահեղուկ կորիզին:

...Եկէ՛ք, եկէ՛ք կորիզներու առեղծուածին, առեղծուածին մայր կորիզին, արիւնին՝ անցնելէ ետք յապաղիչ ականներու օղակէն, ուր արեւներ կ'արթննան խոշտանգուած մարմիններու շարժումէն:

Եկէք, այսօր, անդոհանքին թաքստոցէն դուրս արձակուած մարմիններու խելացնոր աղմուկներով՝ իբրեւ մահուան համանուագ պղնձաձայն — որ ձեր հպօր, վերջին ձայնն է եւ ձեր արեան զիջերներէն միշտ սպասուած չաստուածներու պատուիրակն է — կամ հովերուն ելից մատեան:

Եկէք բոցին լայն ուղիէն, արձակեցէք եղէգներու մառաններէն շղթայակապ հնչիւնները արեգակի եւ եղեգան թող ելանէ բոց ու արիւն, սերմ ու լուտանք, որովհետեւ մահն է միակ թթիւմորը մեր գոյութեան, պտղաւորման...

Չայներն ըսին, ծառերն ըսին ծառերուն, կոճղերն՝ անխօս քարերուն, հովը հարցուց քամիին եւ քամիներն՝ երկնքի քերթուածագոյն ամպերուն, ամպն իր կարգին հարցուց հողին, ջուրին, շողին, խոտին, ծաղկին ու երկրածին մեծ հարցական մարդածառին, որ փսփսաց ինքզինքին՝ «զուցէ ես եմ նախապատճառն ու լուծումները բոլոր հարցումներու ծնունդին»...

Սուրհանդակներն առեղծուածին
կանաչ բառեր շարադրեցին, բանադրեցին
անկումն արեան զիջերներուն եւ գուշակներն անջրպետի
իրարու քով եկան կրկին:

Հողը լռեց: Ծառը, քարը, ծովը, քամին, ջուրը, շողը եւ էութիւնն իր որոնող թնձուկահար մարդածառը դարձան օդակ-օդակ հարցում, անդրերկրային հիր հարցախոյզ՝ ծովուն ուղղուած, որ կասկածները մէկ առ մէկ կարդաց, խոկաց, յափշտակեց շարժումներն իր անդունդ լեզուին կոհակ-կոհակ, շարափ-շարափ միաձուլուեց ոստրէներու բառերն անգամ եւ գումարած լոյսը մութին՝ եղաւ, եղա՛ւ գիրն աքսորեալ յիշողութեան նախամարդուն ու հաստատեց.

կ'ըլլամ շարժում,
կ'ըլլամ գիշեր, ցերեկ կ'ըլլամ
եւ բեւեռներն ընդդիմադիր միաձուլող,
յար բորբոքող ականն արեան,
խօսքը վաղուան:

Ռդջո՛յն արեան ականներուն
եւ բի՛ւր ողջոյն նոր արիւնին տարերային...

Վ

Զերօ գոյն.
անդիմագիծ դէմքերու խաւար ձայները լափող
հանդարտութիւն անորոշ, բացուող, փակուող,
բա՛ց...
անհունօրէն տխուր ու թաց,
անհունօրէն տխուր ու թաց լռութեան
պատրանաթափ հորիզոնները անխօս:

Այսպէս է աշխարհ —
մութ ու լուսաշող պարտեալ կայսրութիւն,
այսպէս ենք եւ մենք —
մութ ու լուսաշող պարտեալ կայսրութիւն՝
նման առաջին, մայր առեղծուածին,
անքուն, մեկուսի կոպեր յաւերժի
եւ անդրադարձի:

Գիշերն է ի՞նչ խտացում
կառոյցներու, ձայներու եւ գոյներու մշտարթուն:

Գիշերն ենք մենք գիշերներու գիշերին
 եւ արշալոյսն առեղծուածին...

VI

— ՄՕՏԵՑՈՒՄ՝ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԲԵԿՈՐՆԵՐՈՒՆ —

Կը շալկեմ գիշերը Պէյրուսի
 եւ կը գոռամ ցաւագին:
 Կը ցօղուեմ գիշերը ցնորքին
 եւ կը դողամ ես կրկին:

Ո՞վ կրնայ ծածկել հոգեվարքը արեւին յիշողութեան դաշ-
 տերուն եւ վայրել դէմքը ծովուն՝ գեհենային դիմակներու քառսին
 մէջ այլամերժ: Ո՞վ կրնայ կերտել անկումը կիսախանձ կառոյց-
 ներուն եւ լսել ճապաղիքը արեան՝ կմախացած մարմիններու աղ-
 մուկին մէջ անժամանակ:

Ո՞վ կրնայ ունկնդրել աքսորեալ կարօտը մանուկներուն եւ
 վարել մահազոռ երգչախումբը մետաղներու խուճապին, ուր թի-
 թեռներ կը հալին՝ ինչպէս բոցերն ցատումին եւ անորոշ հորիզո-
 ներ կը բանան փապուղիներն արեան կարմիր գիշերին:

Արեան, ռումբի բեկորներու, աղբակոյտերու մենութենէն
 կը գնեմ մահուան հունձքը օտարացող քաղաքին եւ արշաւող հրե-
 դէն նժոյգներու կապիճներէն կը քաղեմ ստուերները սարսափա-
 հար կանչերուն:

Փապուղի իմ ականեալ, քայլ մը անդին եւ կը պայթին մո-
 խիրներէն արշաւող ժամանակին մոռացեալ գիշերները գիշատիչ:
 Քայլ մը անդին եւ արիւնիս յիշողութեան ծիւերն արդէն կը մա-
 րին ճապաղիքին մէջ մահուան, իսկ կոյր անգղեր կը շանթեն մար-
 միններու բեկորներուն շուրջ ամէն:

Գնե՞նք դիմակները քաղաքին եւ դառնանք ապաստանա-
 րան մարմիններու խուճապին: Լքե՞նք արշալոյսը գիշերին եւ
 գգուենք այրեցեալ եղանակները վառօդին, որ դժոխքի փականք-
 ներով սպաննեց ուղիները մշտաբերուն անջրպետին այս անքուն:

Կը թաղեմ՝ գիշերը ցնորքին
 եւ կը դողամ ես կրկին:
 Կը շանթեմ գիշերը արիւնին
 եւ կը գոռամ ցաւագին:

Ո՞վ պիտի ծածկէ հոգեվարքը գիշերուան յիշողութեան դաշ-
 տերուն եւ կոփէ դէմքը քաղաքին՝ զեհենային դիմակներու այս
 փախուստէն մահածին: Ո՞վ պիտի պողպատէ անկումը կիսախանձ
 կառոյցներուն եւ լռէ սպառնալիքը արեան՝ կմախացած ժամերու
 աղմուկին մէջ անմարմին:

Ռումբեր հարցումներ կը տեղան քաղաքի կիսալուր խրամ-
 ներուն եւ աւապապարկերը կ'արձագանգեն համբերութեան պա-
 ճիւղներուն: Ո՛չ մէկ շարժում: Փողոցներուն ուրուականներ կան
 կանգուն եւ մահերգակ կատուներ՝ խոշտանգուած մարմիններու
 աղերսանքը թարգմանող բաց աչքերուն դէմ անքուն:

Նեխած արիւն:

Աստղերը մահուան աչքերն են անջրպետին, իսկ երկին-
 քը՝ յարափոփոխ գերեզմանատունը զալիք օրերուն: Ո՛չ մէկ շար-
 ժում: Կը փնտռես ասուպ-անունըդ բացակայ եւ մենուքեան տիղ-
 մերուն ժամանակի խեցիները կ'օրօրես: Ո՛չ մէկ խոստում: Կը
 մաղես անձրեւները հոգեհանգիստներուն եւ սնդիկ-սնդիկ հրդեհ-
 ներով կը սերմանես մարմնիդ դաշտերը բորոտ:

...Եւ կ'արձակուիս մահամերձ մարմնիդ կապար անջրպե-
 տէն եւ կը քանդես լուսապսակը մութին, որ փոշիներ կը տեղայ
 մահով, թոյնով բնակուած խուճապին մէջ քառսին եւ գիշերուան
 անդունդներուն մթաւմայ ալքերուն:

Հրադադարն է դժուար, նեխած արիւն զալիքի:

Գիշերն է ի՞նչ սպառում
 կառոյցներու, ձայներու եւ գոյներու անկայուն:

VII

Երբ դիակներն անձկութեան հօտերն իրենց արձակեցին
 ժամանակի ականներէն յապաղիչ՝ հորիզոններ բացուեցան ար-

զանդին մէջ մանկութեան: Հանթեր ծնած կախարդական նախա-
լեզուին մայր շարժումէն անիշխան եւ սգաւոր ծառերն երկնի կը-
քեցան արմատներու օտարումէն:

Օրն էր օրուան ծիածան:

Երբ ծծկերներն այլութեան ձայներն իրենց արձակեցին լի-
նելութեան կարասներէն իմաստուն՝ անջրպետներ ծաղկեցան գի-
շերուան մէջ անսահման: Երգեր ծնան կաւաքոյր նախալեզուին
շարժումներէն մոգական եւ արմատներն երկրի հրդեհ, լաւայա-
խօս կաճառներուն մեկնեցան՝ յաւերժութեան մատեաններուն
խորհուրդները գերելու:

Լքեց տունն էր
կիսակործան պատերուն մէջ անցեալի
եւ հովերուն համար լոյսին
մարմինը իր իբրեւ ուղի յարդարեց:

...Եւ լիացաւ:

Ետին չկար քաղաք ու մութ: Աչքերուն դէմ մշուշներէն յառ-
նող երթեր կը շողային միջոցն արեան եւ դիմագիծն իր կորուսեալ
ծիածանի եթեր իբրեւ՝ ալիք-ալիք կու գար, կ'երթար, կ'ելլէր, յե-
տոյ իր մարմնին մէջ յանկարծ կ'իյնար՝ աւազն ինչպէս ժամա-
նակի եւ օրերու անապատին միրածն ինչպէս՝ կ'ատրուշանուէր,
կ'անհունանար:

Գինով օդով, արշալոյսով, գալիքով,
աւազներու հրդեհներէն քաղեց խոյանքը կեանքին
եւ ետ դարձող ալիքներուն հետ մէկ առ մէկ
աղեղուելով, ձգուելով՝
գոռաց պոռթկումն իր մարմնին.
— աւելի հեռաւորութիւն, ո՞վ ծով,
աւելի հեռաւորութիւն...

Ծովը պատմեց ճամբորդութիւնն անպատմելի
եւ ինք դարձաւ ուղիներուն կողմնացոյց:

Հաստատուած էր ծովուն մէջ նախալեզուին, միջեւ բառին
ու բառին, ուր մարմնին իր այբուբենին կ'այրէր, կ'աճէր, կ'ըն-

դարձակուէր հապար-հապար կաթիլներու եւ սկիզբին մէջ արեան կ'աղաղակէր ծիածանը հակախօս:

Մատեաններուն բոցարծարծ ալբոլներն են լռութեան: Ինչ-պէ՞ս զրեւ լռութիւնն այս այլախօս՝ ծովափի թաց էջերուն, ուր երկինքէն գահավէժ առկայծ երգեր կը շարժին եւ կը շարժեն աղօթքներն իր մարմինին:

Գիրն էր գիրին ծիածան:

Ինչպէ՛ս լռել բառը բառին օտարող, երբ ձայներն իսկ իր վարմինն լռութիւնն են անհատնում այլակերպման ծովերուն մէջ անդադրում: Ծնիլ մերժումը բառին՝ աքսորական իր լեզուին եւ կամ լռել՝ աղմուկները քառսին՝ քառսէն դուրս, խօսքէն անդին, նախալեզուին շարժումներուն անջրպետէն ալ անդին:

Իւրաքանչիւր ստուերէ ետք ստուեր մը կայ,
իւրաքանչիւր սահմանէ ետք սահման մը կայ,
իւրաքանչիւր հորիզոնի հորիզոնէն ետք միմիայն
գոյ է հաստատ եւ անսահման հորիզոնը ընդհանրական...

Անայցելուն՝
յաւերժական բացակայ
շրեգակի ճաթած շուրթին
եւ բոլոր ժամանակներու մառախլապատ
բայց մշտագոյ ներկայութիւն:

Այս է շարժումն առաջին,
այս է շարժումն առաջին,
այս է շարժումն առաջին
եւ առաջին կաւ շարժումին
քարացումն է, լիացումն է նախալեզին

...Որ կը խօսի լռութիւնը արիւնին:

Ս. ԿՐԻԱՆՈՍԵԱՆ

Մ. Պ Զ Ա Ք Ժ Ն Ա Ն

« L' I M P R E V U »

— Նոր Հասած Կոմիտեի ունիւնք, — յայտնեց սպասեակը, արձանագրեց պատուէրը ու, խոնարհիւ ձեռացնելով՝ հեռացաւ:

Նոյն ճաշարանն էին, «Աննախատե-սելի» նոյն հացատունը: Գիմացի կնոջ հետ բառերը կ'ենթարկուէին յատուկ դիպոցներին, վայրէի տնունը ամէն անգամ ալ կը ստանար մասնաւոր ուշադրութիւն: «Լիմփրէվու...» Միծաղելի էր պարզապէս: Ի՞նչ անդի կ'ունենար հոն, որ կարենար դուրս նկատուիլ սո-վորականի հանգամանքէն: Նոյն յաճախորդներն էին, նոյն ճաշացուցակը, նոյն համեմները: Ի՞նչն էր ներշնչման ակը անուանակոչումի անոր հեղինակին: Քիչ անդին, Կաթի բաժնին մէջ, նոյն շիշե-րը, շարուած Սէն Տընիի մայթաղիմնե-րուն պէս, մէջքով մէջ կ'իջնէին, կը պո-հացնէին դաւաթներ ու, քիչ մը թեթե-ացած՝ կը վերադառնային իրենց գիրքե-րուն, նոր յաճախորդներ սպասելով: Ձա-նազան ու գոյնգոյն այդ հեղուկները, ինչպէս ամէն տեղ, պերճադիմներու նը-ման, կը գործածուէին մէկ նպատակի: «Աննախատեսելի...»: Հեռաւոր, շատ հեռաւոր տեղ մը, աննշան փողոցի մը մէկ խուլ անկիւնը, հնակարկատ մը իր խանութը էլիզէ կոչած էր: Երկու հաս-տատութիւնները, առանց սչինչ կորսնցը-նելու, կրնային փոխանակել իրենց ա-նունները ու ոչինչ պիտի փոխուէր: Ո՛չ առաջինին պիտի գիմէին մարդիկ իրենց մաշած կօշիկներուն համար, ոչ ալ երկ-րորդին՝ սոված երախ զոհացնելու:

— Եթէ կարելի է, սառնարանէն չըր-լայ քամովնդ:

Առաջին հանդիպումէն բաւական ժա-մանակ անցած էր, շուրջ մէկ յդութեան ժամանակաշրջանի մը երկարութեամբ: Ոմանք բերք հասցուցած էին, ուրիշներ՝ պատրաստուած զպրոցական քննութիւն-ներու: Ոչինչ փոխուած էր աշխարհի հա-ւատարմակութիւնէն: Կը շարունակէր թաւալիլ անիկա անտարբեր ու ուշադիր մարդոց թուր քայլերուն: Իսկ «Աննա-խատեսելին» վերածուելով հանդերձ հա-սարակ տեղիքի, հանդիպման սովորա-կան վայրի, երբեմն խորհրդածելու կը մղէր սա յաճախորդը:

Բայց ի՞նչ դարձ ունէին իրարու հետ կիներն ու երիտասարդը: Աղուոր համով հեղուկը սկսած էր շիշտել գոյներու տար-բերութիւնը: Երկրորդ սափորը հասած էր կէտին, իսկ քանակութեան մեծ մասը իջած էր կնոջ կողմը: Մեթորոյին մէջ ծանօթացած էին: Ծնորհիւ կաթիլ մը ջուրի: Գիպուածն էր ճարտարապետը հանդիպումին: Թացիկ առաստաղէն նոր-տարանի մը վրայ իջնող կաթիլը պիտի արտատուէր անծանօթ կնոջ սպիտակ զգեստը, երբ շնորհիւ երիտասարդի դի-պուկ միջամտութեան, փորձանքը չէր պատահած ու փրկուած էր կնոջ հանդեր-ձանքը: Ժպտով դեղեցկացած շնորհա-կալութեան՝ երիտասարդը պատասխանած էր ուրուագծային խնդուքով մը: Բայց պատահականութիւնը կրկին կը շրջէր մայթերուն վրայ, երբ կը հանդիպէին զարձեռալ: Այս անգամ կրնային խօսիլ

Հին ծանօթներու որէս, յիշել անցեալի կաթիլ մը ջուրը, քառ փոխանակել տեղալիք անձրեւներուն մասին: Պաշտօնականութիւնը, սակայն, յաղթական կը հռչակուէր ու տեղացիներ նոք հրահանգ չէր ստանար: Սակայն երբորդ օտիթ մը իր մէջ կը պարփակէր մօտեցման արտաբերութիւնը ու նոյնիսկ կը պարտադրէր արդ մօտեցմանը մը: Գաւաթ մը սուրճ խմելու ժամանակը բաւարար կ'ըլլար կենդանի՝ ճաշարան ու թատրոն հրաւիրելու երիտասարդը: Այսպէս, եկուր քովս նստէ ըսելու, կատակելու համարձակօրէն: Անոջին իսկ առիթին դիտած էին երեք Վիլհելմ, մէկը միւսին ետեւէն, զաղարնէրով: Թատրոն-ընթրիք, թատրոն-սուրճ, թատրոն-գարեջուր: Մէկը քանաստեղծութիւններ արտասանած էր, երիտասարդը չէր կրցած զնահատել զանոնք, կիներ դիտած էր կեդրոնացած, վերացած նոյնիսկ ու հետադաշին տասը անգամ վրկնած, թէ շատ սիրած էր: Մէկ հոգի չէր, երեք հոգի էին: Լուսաբանակը կանգ կ'առնէր մէկուն վրայ ու ան կ'արտասանէր: Երկրորդ փեմսը երկուքին ալ անտեսութիւն ենթարկուելէ ետք, երրորդը խաղցուած էր մէկ գերակատարով, խռնայողութեամբ: Հրեայի մը մասին էր, ծերունկ ու լքուած: Առաւել խանդավառուած էր կիներ, բայց երիտասարդին ճամարտակէլը տեսնելով՝ յուսախաբ եղած, գոչած էր.

— Թաղորդ անգամ տուիլի զգուշութեամբ կ'ընտրենք կտորները:

Յաջորդ անգամ, յաջորդ անգամներ ալ պիտի ըլլային: Անշուշտ:

— Փամամպիւս մըն ալ կարելի՞ է:

Ո՛ր կակուզ էր, ոչ ալ չափազանց կարծր քամամպիւսը:

— Առանձին հմ...

Քանի մը ուսպով զիներն իջած էր իրեն վերադաշնուած տեղը, վերածուած զգայնութեան, վերածուած մտածութի, պարադաշին ու կացութեան եւ եկած դուրս, հարուստ բառի մը ծպտումով: Սակայն երիտասարդը անկարող կը զգար մեկնաբանելու բառին իսկական արամադրութիւնը: Կը փորձէր մտնել յայտարարութեան հետեւող լռութեան լարութեան մէջ, կը

բարութեան հետեւող լռութեան լարութեան լինթոսին մէջ, կը մնար հոն պահ մը, պահեր, բայց դուրս կու գար առաւել խառնշտկուած մաղերով: Կիներ դիտէր, որ գլխացի երիտասարդը ամուսնալուծուած էր, կ'ապրէր առանձին, չըջուէր վաճառորդ էր Հանրապետարանի: Կիներ գիտէր այս բոլորը առաջին իսկ հանդիպումին, մինչ չորրորդ կամ հինգերորդ հանդիպումին է, որ երեսան եկած էր կնոջ ամուսնացած ըլլալը, ճաշարանապետ ամուսին ունենալը:

— Ձե՞ հարցնեմ, թէ ուր կ'երթաս...

— Ո՛ր:

— Ամուսինդ...

— Ոչ:

— Որու հետ կ'երթաս...

— Վստահութիւն ունի վրաս:

Իսկ ի՞նչ կը նշանակէր առանձնութեան մասին սա հառաչանքը: Ի՞նչ լուել կ'ուզէր կիներ, որուն հիմա տղին նստած էր, ուրիշ օր ծախին, ուրիշ անգամներ ալ գիտացը:

«Առանձին հմ...»:

Յուրտ էր: Կնոջ մուշտակին մէջ միտնելով բազուկը եբբ աւելի մօտեցաւ երիտասարդը, ստան շեշտով մը.

— Կը վախճաս, որ փախցնե՞ն դիտ,

— Գոչեց:

Օ՛ր, անշուշտ որ չէր վախճար: Ձե՞ որ միտսին ճաշած էին քանի մը անգամ, թատրոն դացած, փնճած, մտերմացած: Ուրեմն՝ անիմաստ էին այս բոլորը: Կտակ: Բայց նոյնիսկ եթէ փախցնէին, ու չինչ կրնային բնել, որովհետեւ մերկութիւն յունեցող կին մըն էր ան: Ոչ ոք կրցած էր սիրել, ոչ ոք կրնար սիրել: Մտահոգի է եղած էին կնոջ խօսքերը: Հապտ տմուսի՞նը, հապտ մանչո՞ւկը: Հապտ Ռիլքէի բանաստեղծութիւններն ու հրեան...: Ուրեմն՝ երիտասարդն ալ ոչ ոք էր, ամուսինն ալ ոչ ոք էր, շնիկն ալ ոչ ոք էր:

Ու հիմա «Առանձին հմ»՝ «Աննախատեսելի» ճաշարանի կարմիր ծածկեղջով մէկ սեղանին վկայութեամբ:

Ժամանակը կը մօտենար առօրեայ սպասումին, ցուրտը սաստկութիւն կը

փոխէր, երիտասարդը բազուկը կ'ազատազրէր կամաւոր թակարդէն ու կ'արտմէր:

— Թաքսի՛... —

Այր մարդու մը նման, ձեռքը ճոճելով օդին մէջ, կառք մը կոնչած էր կիներ: Լաւ ուր կանգ կ'առնէր վարորդը, զբաղած չէր ու կը հեռացնէր դայն: Եւ լիկտոնիկ խաղալիքի մը առջեւ անճրկած մանուկի մը նման, երիտասարդը չէր գիտեր ինչ ընել՝ կիներ-խաղալիք այդ բարդութեան դիմաց: Թող թաքսին առնէր յատուկ առաքելութիւն ու հեռացնէր յաճախորդը գէպի անգտանելի թաքստոց մը:

Նոր հրաւերի մը առջեւ վայրկեան մը իսկ տատամած չէր երիտասարդը: Ուրիշ մը, սակայն, վերջնական էր: Ոչ մէկ քայլ պիտի առնէր: Ո՛չ ճաշարանը, ո՛չ թատրոնը, ո՛չ իսկ սինեման: Ո՛չ լոյսը պիտի շահագործէր, ո՛չ մութը: Թատրոնը շատ բան չէր բերէր, բայց չէր յաջողէր նաեւ ինքզինք ազատել կնոջ համարէր: Քաջողակնութիւն: Բոլորն ալ անոր անցքովն է, որ կը հետաքրքրուէին, վերջը միայն նայուածք մըն ալ շնորհելով իրեն, պարզապէս հասկնալու համար, թէ ով էր վիճակահանութեան բախտաւորը: Ու պարզապէս կ'ուտէին, ինք երկու հատ կ'ուտէր, կինը հիացած զինք կը դիտէր, երբորդ մըն ալ կ'առաջարկէր, կը մերժուէր սակայն, Պոպուրկ կը մտնէին, մերկ արձաններ կը դիտէին, անձնունի արձաններու դիմաց կ'ընէր կը կենար պահ մը, պահեր, կը քայլէր առաջ, կը վերադառնար, կրկին կը նայէր պատասխանելուն, ապա կ'երթային թատրոնը փնտռելու: Ազատութեան մասին էր այն անգամ ներկայացումը: Չայն բռնաբարողներուն դէմ: Կրկին շատ մարդ չկար բեմին վրայ: Երկու հոգի, վերջը երեք, զրոյ մը, զարեջուրի գործարանի մը տեսուչը: Անգուպական զարեջուր խմող էր տեսուչը: Ամէն ոք ազատ էր ուզած անձին հետ տեսակցելու, անշուշտ ազատ էր: Այսպէս կը խօսէր տեսուչը ու բանուորի վերածուած զրոյը ազատ

էր խօսելու ուզածին հետ: Բայց ո՛վ էր այդ Գոհուղը...: Անշուշտ որ ամէն ոք ազատ էր ուզած անհատին հետ յարաբերելու, բայց այդ Գոհուղը, ո՛ր, այդ Գոհուղին հետ պէտք չէ խօսէր...: Անշուշտ որ ազատ էր ուզածին հետ տեսակցելու... —

— Ես քու հապտիւկ եմ, — բոսա վերջապէս երիտասարդը ջղադրգիւ, երբ քանի մը յաւելնալ հանդիպումէ ետք, ոչինչ պատահեցաւ երկուքին միջեւ:

— Ո՛չ, դուն հապտիւկ չես:

Ի՞նչն էր հապտ: Եթէ հապտիւկ չէր, խաղալիքն էր ուրեմն: Եթէ խաղալիքը չէր, ուրիշ բան էր, հազար տեսակ բան էր, բայց ոչ բնականը:

— Ի՞նչն է հապա... —

— Ձե՛ս հաւատար այր-կնոջ բարեկամութեան: Դուն իմ բարեկամս ես:

— Անշուշտ, անշուշտ... այր ու կնոջն ու բարեկամութիւնը, այր ու կնոջ բարեկամութիւնը... այր-կնոջ բարեկամութիւնը աշխարհի ամէնէն բնական բանն էր կը նկատեմ...

Ու հանդիպեցան կրկին: Ժաշարան գացին միասին, Լիմֆրէվիլ գացին միասին, Սէն Ժերմէնի Ֆլոր սրճարանը նըստեցան միասին: Բիճճա կերան Քարթիէ Լաթէն, ԲԱՄԲԱՄՈՒ Ֆորթի Պերտերի մօտ: Կինը միշտ ալ ընտրեց ակնառու սեղաններն ու դիտեցրը: Ու, վերջապէս, երիտասարդը կրցաւ հասկնալ, թէ կը շահագործուէր պարզապէս: Կանխամտածուած ծրագիր մը ունէր կինը: Անոր փնտռածը պայթակղութիւնն էր:

— Եթէ մեզ միասին տեսնեն, դուն կրնաս ամուսին մը կորսնցնել, ես... —

— Եթէ միասին տեսնեն մեզ, դուն կորսնցնելիք ոչինչ ունիս, իսկ Ժան-Փիեռը շատոնց զազրած է ամուսինս ըլլալէ:

— Բայց շուարումի կը մատնես դիս... —

— Ինչո՞ւ: Որովհետեւ ճաշարան կ'երթամ հետդ, սինեմա՞ կ'երթամ հետդ, թանկարան՞ կ'երթամ հետդ... Կ'ստան եմ չես հաւատար նման բարեկամութեան: Արդէն ծամածուութիւն ըրի՛ր այդ օր, երբ...

— Եթէ այդպէս է, ինչո՞ւ ամուսինդ ալ չ'ընկերանար մեզի:

— Ըսի որ շարունակ զբաղած է, բայց եթէ շատ կը փափաքի...

— Այո, ինչո՞ւ չէ...

Ձէր բերած սակաւն: Անշուշտ որ պիտի չբերէր: Կիները միշտ ալ ուրաջումներ կը սիրեն ընել իրենց իսկական ցանկութիւններուն մասին: Այլապէս ինչո՞ւ ուղղակի աչքերուն մէջ նայելով յայտնեց, թէ առանձին կը զգար ինքզինք: Մա՛նաւանդ ինչո՞ւ ըսաւ, թէ ամուսինը զաղբած էր ամուսինը ըլլալէ...: Ինչո՞ւ շարունակ նոր առաջարկներ կը բերէր: Ինչո՞ւ այս բարեկամութիւնը չէր իրագործէր ունէ անձի հետ: Միլիոնաւոր մարդոցմով կը վխտար փապուղին: Վա՛յելուէ՛ երիտասարդներ կոչին հոն: Բայց իրա՞ւ է, թէ չէր կրնար սիրել: Միծաղելի էր սակայն բարեկամութեան գաղափարը: Ձէր կրնար հաւատալ նման բարեկամութեան մը: Օր մը անպայման պիտի փոխորկէր անոր ներաշխարհը: Ամէ՛նէն ճարպիկ գողն իսկ օր մը անպայման պիտի իյնար ոստիկանի մը ձեռքը: Ու ա՛սիկա պիտի ըլլար ալքոյի մեղսակցութեամբ կամ առանց անոր մասնակցութեան: Ձէր կրնար ըլլալ, որ զգացումներ չխայտային այդ աչքերուն ետին, այդ կուրծքերուն տակ: Զգացումէ պարպրած մէկը չէր կրնար նման կենսայորդ ինզուէ ունենալ: Հաւանաբար ոչ ոք կրցած էր զգայնութիւններ պեղել աւնոր էութեան մէջ: Արդէն վերջին հանգիստին կը խուսափէր ուղղակի աչքերուն մէջ նայելէ: Երիտասարդը պտճ մը կը կարծէր, որ կինը ունէր իր տարփածուն: Ուրեմն՝ կ'որոշէր խզուիլ: Որեւէ պատրուակով: Առանց պատրուակի նոյնիսկ: Երկու յայտագիր իրարմէ անջատող երաժշտութիւն չէր ինք: Արդէն ի՞նչ կրնար ըլլալ մեթրոյի պէս հասարակ վայրի մը ներկայացուցած պատեհութիւնը: Խաւարէն լոյս սպասելու միամբտութիւնը անհեթեթ պիտի ըլլար: Եթէ օր մը Հանրապետական ծախելու համար զարկած ըլլար անոր զուռը, հրտաւիրուէր ներս, նստէին ջով ջովի, ըս-

տեղծուէր պահը ու իրենք...: Իսկ մեթրոյի առաստաղէն կաթող մզլոտած ջուրը, որ դիրենք հունած էր իրարու դէմ, չէր կրնար անելէն աւելի ելք մը ցոյց տալ: Այր ու կնոջ բարեկամութեան ալ հաւատալու պատրաստութիւն չունէր: Բարեկամութիւնը կ'ըլլար երկու այրերու միջեւ, կ'ըլլար միջեւ իսկ շուն ու կատուի միջեւ, չէր ըլլար նոյնիսկ երկու կիններու միջեւ:

Պէտք էր գործնական ըլլար այլեւս: Դրական կամ ժխտական: Կա՛մ կը խորանար կապը, կամ ալ...: Տեղեւորի ճանճացումը անտանիկ սկսած էր ըլլալ: Արդէն պիտի չկարենար աւելի երկար աղբիլ առանց սիրոյ: Նման մտածում մըն ալ իմացած էր կնոջմէն: Երբ ոչ ոք կարենալ սիրելու յայտարարութիւն կ'ընէր հանդիպումի մը ու յաջորդին կը խօսէր սիրոյ կարեւորութեան մասին, ինչպէ՞ս կը յաջողէր ան այս երկուստեան մէջ: Ինչպէ՞ս հասկցած էր, թէ առանց սիրոյ կարելի չէր ապրիլ, երբ ինք զրկուած էր այդ կարողութենէն: Գիրքերէ՞ն սորված էր, թէ թատրոնէն: Բայց համոզիչ էր նաեւ անոր շեշտը, երբ կը խօսէր տարրական զգացումներու մասին: Այս բոլորին ետին հանելուկ մը պահուած կը մընար:

— Հետաքրքրական շին ճեղքեր:

Վերջին հանդիպումին էր: Անգամ մը ամուսնալուծուած, բազմաթիւ սէրեր ապրած, համոզելը իր արհեստը բրած երիտասարդը չէր յաջողած անցնելու կնոջ բարձրացուցած պատուարը: Երբ ուզած էր անոր ամբ շոյիլ՝ զուշակութիւն ընելու պատրուակով, հանդիպած էր անոր անանդիտալիութեան:

— Գիտե՛ս ինչպիսի յիմար մըն ես...

Կինը պատասխանած չէր ու նայւածքը զարմացած զեղին մոխրամանին: Զափազանցութիւն մը կար այս բոլորին մէջ: Կինը կրնար մէկ խօսքով վերջ տալ այս բոլորին: Կատակերգութեան վերածուած էր ամէն ինչ: Կ'ուզէր պահել բարեկամութիւնը, պահպանել զայն, բայց սղան կ'ուզէր խզուիլ, դիւրին էր:

— Այո, յիմար մըն եմ...

— Իսկ դիտե՞մ նաեւ երգը, որ կ'ըսէ. «Յիմա՛ր, կը սիրես քեզ...»:

Երիտասարդը անմիջապէս ապաստանկը կը կանչէր: Ոչ մէկ ցուք կար կնոջ գէթ քին վրայ: Անտարբերութիւնը պաշարման վիճակ հաստատած էր հոն: Հաւանաբար այլեւս կինը անսենէլ չուզէր զինք:

Բայց կը հանդիպէին կրկին: Իսկ երիտասարդը տակաւ կը կորսնցնէր հոգիին անդորրը: Ինք ոչինչ ունեցած էր խորհրդաւոր: Ունէ աղջկայ հետ: Միշտ ալ պարզ եղած էին իր կապերը: Արդէն խաղ մըն էր սէրը, իսկ մէկը միւսին՝ խաղալիք: Մարի-Փանին հետ ալ կրնար ամբողջ կեանք մը բոլորել, եթէ զուակ մը ունենային առօրեայի տաղանդները անյայտացնող: Բայց ու ծանօթութիւնը կը խուսափէր բոլոր վերլուծումներէն: Բացառութիւն մը փնտռէ՞ր Հանրադիտարանի քսաներկու հատորներուն մէջ: Ո՛չ, ըսած էր քանի մը անգամ ու յուսացած հանդարտիլ: Խնդրած էր անգամ մըն ալ չհեռաձայնել: Բայց դիպուածը կրկին անգամ զիրենք դէմ յանդիման բերած էր մեթրոյի մայրին վրայ: Անմեկնելի հոս՝ անկրանք մը կար բոլոր երեւոյթներուն ետին: Ունէ աղջկայ հետ երիտասարդը այսքան ուսեղ թրթռացումներ ունեցած չէր: Ինք ալ թերեւս կնոջ պէս էր: Ինք ալ թերեւս մինչ այդ սիրած չէր: Մակերեսային եղած էին բոլոր կապերը: Արհածախնդրական պարզապէս: Թերեւս ինք ալ կնոջ պէս կը սպասէր մեծին, անհասանելիին ու անկարելիին: Ու մինչ երիտասարդը գտած ըլլալ կը կարծէր իրը, կինը կը շարունակէր տարբեր բովանդակութիւն տալ յարաբերութեան: Տարբեր էր սակայն այս կնոջ հետ: Անոր պէս առանձին չէ՞ր ինք ալ: Կը սիրէ՞ր զայն: Սահմանումի չենթարկուող ապրում մը կը խլրտար մէջը: Ամուսնացած կիւն մը պիտի ըլլար իսկական սէրը: Ինչո՞ւ առաջին իսկ օրէն յայտնած չէր ամուսնացած ըլլալը: Ինչո՞ւ արտօնած էր, որ երիտասարդին մէջ ծնին ու աճին

տարբեր դպացումներ: Բայց մա՛նաւանդ ինչո՞ւ ոչ իսկ մէկ անգամ կրցած էր նորին կ երեւակայութեամբ մերկացնել կինը ու անոր հետ մտնել անկողին: Ինչո՞ւ չէր յաջողեր երեւակայել անոր մերկութիւնը: Կին մըն էր ան զգեստներով ծընած, ու պիտի շարունակէր ապրիլ ըզգեստներով, առանց բազմաթիւ, առանց անկողինի:

— Ի՞նչ փիեա է:

— «Նօ մէն՝ լեմտ»:

Արդէն ի՞նչ կարեւորութիւն կրնար ունենալ թատերախաղին անունը, ի՞նչ պիտի կարենային փոխել զայն խաղցողները երիտասարդին որոշումէն: Ժամադրութիւնը ծանօթ փողոցի մը անկիւնն էր: Նախ՝ պիտի ընթերցէին սակայն: Իսկ ճաշարաններէն մէկը շատ լուսաւոր էր, միւսը՝ չափազանց տխուր: Տեղ մը բաւարար թիւով մարդ չկար, ուրիշի մը փայլքը փանդակահար էր: Վերջապէս համեստ հացատուն մը կը հիւրասիրէր զիրենք:

— Բայց ինչո՞ւ տխուր ես նկարին մէջ:

— Որովհետեւ սիրահարուած եմ:

— Ի՞նչ լաւ...

— Եարաթ օր ալ հրաւերուած եմ...

Կնոջ աչքերը արտասովոր փայլք մը կը ստանային, բայց կը մթաղնէին շուտով: Ուրեմն բոլոր զգացումներն ալ առկայ էին անոր մէջ: Նախանձին ստուերն է, որ անցած էր, արագ, շատ արագ քայլերով: Ահա ինչ կը նշանակէր կտրուկ ըլլալ կնոջ մը հետ: Երբ կը դիտնար, թէ ինչ կը ներկայացնէր այդ մարդու մը համար, յանկարծ կը վերածուէր անդիտակիցի ու միամիտի: Պէտք էր գրգռել ու հարուածել: Ահա իսկական թատերախաղ մըն ալ կը խաղցուէր հոն, կնոջ դէմքին վրայ: Տրամութիւն մը իջած էր անոր արամադրութեան, Արդէն երիտասարդը նախաճաշակ մը ունեցած էր ուրիշ օր, երբ յայտնած էր, թէ ներկայ պիտի ըլլար պաշտօնակիցի մը ծննդեան տարեդարձին: Կինը ըսած էր, թէ պարել

չէր զիտեմ, չէր ալ սիրեր, բայց յաջորդ հանդիպումին, ուզած էր մանրամասնորէն գիտնալ, թէ ինչ պատահած էր հաւաքոյթին, ի՞նչ ըրած էին, մա՛նաւանդ որո՞ւ հետ պարած էր ու խօսած :

— Քանի անգամ ըսի քեզի, որ կրք միտոյին կ'ելլենք, չեմ ուզեր, որ այսքան չպարուիս :

— Այդ մէկը իմ գիտնալիքս է, յետոյ ամուսինս չեմ :

— Եթէ ամուսինդ չեմ, պատճառ մըն ալ աւելի : Իրաւունքներս ունիմ, կարծեմ :

— Ոչ մէկ իրաւունք :

Քիչ հաք զիտուելէ փիեմին անունը անպայմանօրէն կը վերաբերէր սա կնոջ : «Նո մէն'դ լինեալ» : Եթէ հոն կը խօսուէր ոչ ոքի պատկանող հողի մասին, գիմացը ունէր կին մը, որ ոչ ոքի պատկանած էր, ոչ ոքի կը պատկանէր ու ոչ ոքի պիտի պատկանէր : Կարելի էր տմտանալ, զուակ ունենալ, շարունակել ամուսնացած ըլլալ, բայց չպատկանիլ ոչ ոքի : Իսկ այդ կինը ոչ ոքի կը պատկանէր : Ոչ իսկ տարփածուի մը : Կը պատկանէր թե՛ բեւա բարեկամութեան զաջափարին : Բայց շատ օգային էր այդ մտածումը : Անրանկան բան մը կար այս բոլորին մէջ : Բարեկամութիւնը բաւարար չէր նման կապ փրկելու : Բարեկամութեան քովի լարը սիրոյ լարն էր, իսկ անոր քով պրկուած կը մնար ատելութեան, նողկանքի, խաղքութեան լարը : Եթէ երբևէ տառադրին աչքերուն մէջ ունճացող ըզզագոմը անտարբեր կը թողուր կինը, որ կ'ուտէր մեծ ախորժակով, նախընտրելի պիտի ըլլար օրինակ առնել անկէ ու ապրապրել երկրորդ պնակ մը :

— Գերկնզմաւոր ենք երկուքս ալ... Թատրոնի մուտքին խնդում կար, իսկ կնոջ մօտիկութիւնը կը գժուարացընէր երեսասարդին շնչառութիւնը : Անգիտակից այդ քաջալերանքը պէտք է անտարբեր թողուր զինք : Կնոջ բարեկամութեան դիմակին ետին բան մը կար կծկուած, առիթին նպաստող : Մարմնակապ խաբոյկով է, որ պիտի վերամետր սէրը

ու հասուննար : Երբ ոչ ոքի պատկանող հողով հետաքրքրուողները ներսն էին, վարագոյրը կը բարձրանար, լոյսը կը մարէր : Անհտնդարտ բաղուկ մը վերջապէս քաջութիւնը կ'ունենար իջնելու աթոռի մը քամակին, կը սահէր դէպի առաջ ու կը հանգչէր հոն : Չէր համարձակեր աւելի առաջ երթալու : Արդէն յաղթանակ մըն էր կատարուածը : Կեցութեան ամբողջական փոփոխութիւն մը : Երկար պահ մը ետք, բաղուկը կը վերադառնար փորձութենէն, երկու ձեռքեր կը ռեզմուէին սրունքներու միջեւ ու կը մնային այդպէս, կը շարունակէին մնալ այդպէս : Երկտասարդը դէմքը կը դարձնէր դէպի կինը ու կը ժպտէր : Բաղուկը, այս անգամ աւելի մեծ համարձակութեամբ դիմուած, կը վերադառնար երազուած գիւրջին ու կը մնար հոն, նոյնիսկ երբ սրահը կը լուսաւորուէր :

— Ելլենք բան մը խմենք, ծարաւ եմ, սոսկալիտօրէն...

Կինն էր : Ծարաւ էր, սոսկալիտօրէն ծարաւ...

— Բան մը պիտի ըսեմ, խօսք տուր, որ պիտի չխնդաս :

Հակառակ գիտակցութեան, թէ ոչ մէկ խոստովանանք պէտք է ընէր կնոջ, երկտասարդը չէր կրնար գիմագրել ու կը գոհէր սկզբունքը պահի պահանջէն :

— Ըսէ :

— Նախ խօսք տուր :

— Լաւ, ըսէ :

— Ամէն անգամ, որ հայելիին մէջ կը նայիմ դէմքս դիտելու, քու դէմքդ է, որ կը տեսնեմ...

Կինը չէր կրնար զսպել խնդուքը ու կը վարակէր նաեւ երկտասարդը :

— Խօսք տուր, որ պիտի չխնդաս :

— Բայց չար չէ խնդուք...

— Գիտեմ :

Դադարէն հաք լոյսերը կը մարէին կրկին, բայց կինը չէր արտօնէր, որ երկտասարդի բաղուկը կրկնէ փորձութիւնը : Քրտինքի կայլակներ կը կազմուէին ճակատին վրայ : Բեմը անվերջանալի փոխապաշտութիւններով խնդուած էր :

երկու քին ալ աչքերը բաց էին, բայց երկուքն ալ չէին հասկնար, թէ ինչ տեղի կ'ընենար հոն: Ի՞նչ հողի մասին էր խոսքը: Կրկին յուսախար էր երիտասարդը: Սակայն պէտք է այլեւս հասկնար: Մինչեւ ե՞րբ պիտի տաղնապէս ու տուայաէր խաբկանքի մէջ: «Ոչ ոքի պատկանող կիներ...»: Ահա խորագիրը ուրիշ թատերախաղի մը: Ինչո՞ւ չէր կրնար ըմբռնել, որ կին մը կրնար ոչ ոքի պատկանել: Կրնար ծնիւլ, մեծնալ, անցնիլ սովորական ու անսովոր բոլոր ճամբաներէն ու պատկանելի ոչ ոքի: Ինչո՞ւ հայելիի մասին ակնարկութիւն ըրաւ ու եղաւ Ծիծաղելի: Ի՞նչ հասկցաւ կինը ակնարկութենէն: Բայց կնոջ ոչ ոք կարենալ սիրելը գոնէ պէտք չէ վերաբերել երկասարդին: Ամբողջ կեանքէ մը հաճ' ո՞վ կրնար ըսել, թէ նման խոշոր քաղաքի մը մէջ, նոյն անհասկնալի կրցած էր հանդիպիլ չորս անգամ, պատահականօրէն: Անշուշտ որ բան մը կ'ենթադրէին պատահական այդ հանդիպումները:

— Գարեջուր մը անենք:

Առաջարկը կու գար երիտասարդէն, բայց կը մերժուէր: Ուշ էր: Պէտք է վերադառնար: Կինը պէտք է վերադառնար իր տունը, իսկ երիտասարդը սթիւտիոյի մը առանձնութեան, հոս-հոն ցանցնւած, Հանրապետականի պրոշտերներուն: Պիտի վերադառնար առանց յիշատակի, առանց հետքի, առանց ուղի: Բայց արդէն ի՞նչ կ'անկալէր կնոյմէ մը, որ յետադարձէն յայտնած էր հանգանակը: Իրը պիտի չըլլար այդ կինը: Կրնար օր մը պատկանել ուրիշի մը, բայց ոչ իրը: Մանաւանդ՝ օր անոր մէջ միտ, ոսկոր ու էութիւն տարբարակութեամբ էին բոլորովին անսովոր համեմատութեամբ: Ու այս բոլորէն ետք, երիտասարդը չէր կրնար մերժել մէկ նոր առաջարկ:

— Աղուոր ֆիլմ մը կայ: Կ'ուզեմ հետդ դիտել:

Պատասխանը անշուշտ որ դրական պէտք է ըլլար:

— Ինչո՞ւ...: Ձէ՞ որ...

— Հասկցիր այլեւս:

— Մտիկ ըրէ, անիմաստ է ըրածդ, Ծիծաղելի: Քանի՞ անգամ պիտի ըսեմ, որ...

— Լաւ, ո՞ր ֆիլմը:

Նախ պիտի ընթերցէի Լիմփրէյի, ապա դիտէի քննադատներուն յանձնարարած լեհական մէկ ֆիլմը: Օրուան գործառնութենէն դուրս եղած էր երիտասարդը: Կրցած էր չորս յաճախորդ ուղարկել ու նոր մրցանիչ հաստատել ինքն իրեն համար: Հանրապետականի հետաքրքրուողները առաւելաբար կիսուս մարդիկ էին: Փայլուն ցուցադրող թերեւս կարելի ըլլար ծածկել ներքի աղքատութիւնը:

Ու կը հասնէր ժամանակին: Կրկին խնդրուած էր հաջատունը: Նոյն յաճախորդներն էին, նոյն փողկապները: Նոյն հեղուկներն ու ջահերը: Ամէն ինչ սովորական էր: Բայց, բայց ո՞վ էր կնոջ հետ նստողը: Հետը նստող մը չկա՞ր: Կար: Ո՞վ էր ան: Նո՞ր Ծանօթութիւն մը: Ի՞նչ բեմադրութիւն էր սա: Իսկապէս ո՞վ կրնար ըլլալ փոքր մօրուքով այդ մարդը:

— Մանօթացի, ամուսին...

Երիտասարդը կ'անճրկէր: Շշմած էր պարզապէս: Անհանդուրժելի կատակերգութեան մը ժխտական հերոսը դարձուցած էր զինք կինը: Ո՞վ...: Ամուսինը...: Բայց ի՞նչ գործ ունէր ան երկուքին միջեւ: Ի՞նչ համարձակութիւն էր այս...: Ի՞նչ ոտնձգութիւն: Բայց ի՞նչ կ'ուզէր փաստել կինը: Որ բարեկամութիւնն է իրենց ունեցածը: Այո, երիտասարդը օր մը պահանջած էր, որ ամուսինն ալ բնկերանար իրենց, բայց գործնական կատակն ալ որոշ սահման մը անդին կը վերածուէր դաւադրութեան, խաբէութեան: Սաղրանքի պարզապէս: Ի՞նչ ընէր, երկարէ՞ր ձեռքը, ի՞նչ պատասխանէր: Ու հազիւ կը կազմէր:

— Կը ներէք, եկայ լսելու, որ այս դիշեր պիտի չկարենամ ընկերանալ ձեզի, անձնական, շատ յատուկ պատճառով...: Ուրախ եմ, շատ ուրախ ձեզի Ծանօթանալու...

Մինչև և՛ Երևան և՛ Կրեմլ այդ մեթոդներն և Անգլիայի մեջ սեղմված լինելով պիտի գտնվեն անոր վաղադրյալն, պիտի վերահասանար անիկա նույն ուղղությամբ ու անոր մայթերուն վրայ կրկին պիտի հանգրվեն ուրիշ մարդիկ, անոնք եւս պիտի ընթանային անհատական, թերահաւատութեան ու տարակուսանքի ուղիներէն: Իսկ այդ ամբողջութիւնն մէջէն պիտի գտնուէին ընտրեալներ, որոնք պիտի հասնէին նոր պոփոյի օրերուն, զորոք զային փապուղիի լուսաւոր վտանգներէն, այս անգամ մտնէին «Փորձութիւն» ճաշարանը ու, ինչպէս երկաթուղիի զոյգ վրիժիւր, կեանքը ընթանար իրենց վրայէն:

Յաջորդ առաւել, կանուխէն կը հնչէր հրիտաւարդին հեռաձայնը: Երկար ժամանակ պէտք կ'ըլլար աչքոյով ծանրացած մարմինը հանելու անկողինէն: Քիչ ետք, կրկին կը հնչէր անիկա:

Միայն կիներ կրնար ըլլալ այդ ժամուն:

— Կը ներեալ երկուան համար: Առաջարկեցի՝ վստահ ըլլալով, որ կը մերժէ, բայց, ինչպէս տեսար, չմերժեց ու ճկաւ... Վերջապէս, պէտք է մնայիր,

պէտք է այդպէս մեկնելը...: Անգամ մը եւս...:

Յուշամատի փոքրիկ հպում մը բաւարար կ'ըլլար չէզոքացնելու հաղորդակցութիւնը: Գիտէր ըսուելիքը...: Անգամ մը եւս փաստեցիր, որ չեա հաւատար այր ու կնոջ բարեկամութեան: Ուրիշ ի՞նչ կրնար ըսել...: Այր ու կնոջ բարեկամութիւնը, ա՛, այր ու կնոջ բարեկամութիւնը, մա՛նաւանդ ամուսնութեամբ մարդու եւ մեկուսութեան յուսնեցող կնոջ բարեկամութիւնը աշխարհի ամէնէն բնական բանն էր, անշուշտ ամէնէն նոքրաբան էր: Երբ կը հասնէր բազմիւր ու ջուրը կը ժայթքէր գլխուն, հրիտաւարդը գիտէր կ'ընէր: Ճաշարանին անունն էր, որ կը ցտակէր աչքերուն, անոր Աննախատեսելի ցուցանակը: Այս դէպքով ան կ'արդարացնէր անունը: Ուրեմն ամէն բան օրօրական չէր հոն: Երիտաւարդին կը մնար ճաշի համար յաջորդ ժամադրութիւնը ատենէլ հեռաւոր, շատ հեռաւոր տեղ մը, անշուշտ փողոցի մը մէջ խուլ անկիւնը գտնուող հրահարկատի խանութը, որ էլիկէ կը կոչուէր: Իսկ թէ կիներ վերջապէս պէտք է ըլլէր միայն աւելի...:

ՍՈՒՈՄ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ

Սագսմ ֆաղափի աւերակներէն
Կը շտապէր խռով մարդ մը անբարբառ .
Կարծես մտքին մէջ մագաղաթ մը կար
Ու աչքեր ունէր ջնջուած դէմքով :

Ականջներուն մէջ տարաբնակ հեւքեր
Ձիմք կ'ափսոսէին իր ներկայէն դուրս .
Ու ճամպարիին՝ իբրեւ կարճ դադար,
Արեւի շաւին տակ կը փնտրէր...

Անստուեր ծառի մենութեամբ արթում՝
Ան կը շօշափէր մութ տարածութիւնն
Իր ճակատագրին, ու ասան-ասան

Իր տեսողաշտի նիրհազ ակներուն
Կը վերագտնէր անցեալ մը տմբողջ՝
Բիւր բեկորներով մերկացած կնոջ :

Ա Ր Ց Ո Ւ Ն Ք Ն Ե Ր

Պզտուր ջուրերու մէջ խորասուզուած՝
Կը մեռնի լուսնակն օրերուդ դէմքին...
Գուցէ այս գիշեր,
Հայեացքիդ ներքին առանձնութեան մէջ
Աշխարհի բոլոր արցունքներն անձայն
Ի մի հաւաքած՝
Դուն պիտի լուսա
Փլած երկինքի պարիսպներուն տակ...-

ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ

Ժ. Խ. Ժ Պ Ր Ա Ն

Մ Ա Ր Գ Ա Ր Է Ն

Ե.— ՈՒՏԵԼՈՒ ԵՒ ԽՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Այն ատեն ծերունի պանդոկապան մը բսաւ .

— Խօսէ՛ մեզի Ռտելու եւ Խմելու մասին :

Եւ ինք պատասխանեց .

— Երանի՛ր քէ կարենայիք հողին բուրմունքովն ապրիլ, եւ սնանիլ լոյսով՝ բոյսի մը նման :

Բայց, քանի որ ապրելու համար պարտիք սպաննել եւ յափշտակել հորածինին կաթը իր մօրմէն՝ ձեր ծառան յագեցնելու համար, առումք թող ըլլան իրքեւ պաշտամունքի արարք :

Եւ թող ձեր սեղանը թագին մը ըլլայ, որուն վրայ անտառի աւ դաշտի անմեղն ու անարատը գոհուիմ, ի խնդիր ինչ որ աւելի անառատ է ու անմեղ՝ մարդուն մէջ :

Երբ կենդանի մը կը մորթէք, ըսէք անոր սրտովին .

«Այս նայն գորութիւնը, որ մեզ կը խօզխօզէ, պիտի սպաննէ զիս ալ . եւ ես ալ պիտի յօշոտուիմ :

«Որովհետեւ այն օրէնքը, որ մատնած է քեզ իմ ձեռքին, պիտի մատնէ զիս ալ ինձմէ աւելի գորաւորի մը ձեռքին :

«Արիւնդ եւ արիւնս ուրիշ բան չեմ, եթէ ոչ աւիշը, որ կը սնուցանէ երկնի ծառը» :

Եւ երբ խնձոր մը խածնէք ձեր ատամներով, ըսէք ձեր մտէն .

«Քու հումտերդ պիտի ապրին մարմնիս մէջ ,

«Եւ վաղորդայններուդ բողբոջները պիտի փթթին սրտիս մէջ ,

«Եւ բոյրդ իմ շունչս պիտի ըլլայ ,

«Եւ միասին պիտի հրնուինք բոլոր եղանակներուն» :

Եւ աշնան, երբ ձեր այգիներուն խաղողը կը կքէք հնձաններուն համար, ըսէք ձեր սրտն .

«Ես ալ այգի եմ եւ իմ պտուղն ալ պիտի փաղուի հնձանին համար ,

«Եւ ինչպէս թարմ գինի, պիտի պահուիմ յաւիտենական կարասներու մէջ» :

Եւ ձմրան, երբ գինի կ'առնէ՛ք, թող երգ մը շարձրանայ ձեր սրտէն՝
ամէն մէկ բաժակի համար.

Եւ այդ երգին մէջ յուշ մը թող ըլլայ աշնան օրերուն՝ ե՛ւ այգիին, ե՛ւ
հնձանին համար:

Զ.— ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ապա հոգաւործ մը ըսաւ.

— Խօսէ՛ մեզի Աշխատանքի մասին:

Եւ ինք պատասխան տուաւ, ըսելով.

— Կ'աշխատի՛ք, կարենալ ընթացք պահելու համար երկրին եւ երկրի
ագիին հետ:

Որովհետեւ անգործ մնալ՝ կը նշանակէ օտարանալ եղանակներում,
եւ շեղիլ կեանքի բափօրէն, որ վեհապանծօրէն եւ խրոխտ համակերպումով,
դէպի տեհունը կը յառաջանայ:

Երբ կ'աշխատի՛ք, կ'ըլլա՛ք որինց մը, որուն սրտին մէջէն ժամերուն
մրմունցը կը փոխուի նուագի:

Ձեզմէ ռ՝վ պիտի ռւզէր ըլլալ եղէգ մը, խնլ ռւ համր, երբ ամէն բան
կ'երգէ ժրձայն:

Ըսուած է ձեզի միշտ, թէ աշխատանքն անէծք է, եւ տհմանք՝ գրծ—
բախտաբիւն:

Բայց կ'ըսեմ ձեզի, թէ երբ աշխատի՛ք, կ'իրագործէ՛ք մաւ մը երկրի
այն հեռաւոր երազէն, վիճակուած ձեզի՝ այդ երազին ծնունդ առած ատեն:

Եւ փարելով աշխատանքին, իսկապէս կը օրէ՛ք կեանքը,

Եւ սիրել կեանքը աշխատանքին ընդմէջէն, կը նշանակէ հաղորդակից
ըլլալ կեանքի ամենախոր գաղտնիքին:

Իսկ երբ, թաղուած վիշտերու մէջ, ծնիլը կը մկատէ աղէտ, եւ մարմ—
նին ծանրութիւնը՝ տնէծք, գրուած ձեր նակտին, աթդ կը պատասխանեմ,
թէ միայն ձեր նակտին բրտինքը պիտի սրբէ ինչ որ գրուած է հոն:

Ըսուած է նաեւ ձեզի, թէ կեանքը աղջամուղջ է, եւ ձեր խոնջէնքի
պահերուն կը կրկնէ՛ ինչ որ ձանձրացածները ըսած են:

Եւ կ'ըսեմ ձեզի, թէ իսկապէս աղջամուղջ է կեանքը, բացի երբ կայ
խոյանք,

Եւ ամէն խոյանք կոյր է, եթէ չունի գիտակցութիւն,

Եւ ամէն գիտակցութիւն գուր է, եթէ չկայ աշխատանք,

Պւ թա՛ն աշխատանք դատարկ է, երբ չկայ սէր.

Եւ երբ կ'աշխատի՛ք, կը գողալի՛ք դուք ձեզի, իրարու եւ Աստուծոյ հետ:

Եւ ի՞նչ է սիրով աշխատիլը:

Կերպասը գործելն է այդ, թելերով՝ քաշուած ձեր սրտն, որպէս թէ ձեր սիրականը պիտի հագնէր այդ կերպասը:

Տուն մը շինելն է այդ՝ խանդավառութեամբ, որպէս թէ ձեր սիրականը պիտի բնակէր այդ տան մէջ:

Սերմ ցանկն է այդ՝ գարավով եւ հունձի քաղելը՝ խնդութեամբ, որպէս թէ ձեր սիրականը պիտի հաշակէր անոր պտուղը:

Ձեր իսկ հագնի շունչն է այդ, ամէն բանի մէջ, որ կը փոխակերպէ,

Եւ գիտակցիլը, թէ բոլոր երանելի համագոյցեալները կեցած ձեզ մօտ, կը հսկեն ձեր վրայ:

Լսած եմ յանայն, որ կ'ըսէ՛ք, իբրեւ թէ քունի մէջ խօսէիք. «Ան, որ մաքիմարը կը կոփէ, եւ քանի մէջ կը դնէ իր հագնի կերպարանքը, աւելի վսեմ է, քան ան, որ կը հերկէ հողը:

«Եւ ան, որ ծիածանը կը բռնէ ու գայն կը տարածէ պատշաճին վրայ՝ մարդու նմանադուքեամբ, աւելի՛ քան ան, որ տրեխ կը շինէ մեր ոտքերուն համար»:

Բայց իսկ ի՞նչ, ո՛չ թէ քունի մէջ, այլ միջօրէի կատարեալ արթնութեամբ, թէ հովն աւելի մեղմութեամբ չի խօսիր հսկայ կազմիին, քան ամէնէն ազգուն խոտի ծղօտին:

Եւ ան է միայն վեհ, որ իր սիրով կրնայ հովին սոյլը փոխակերպել աւելի քաղցրալուր երգի:

Աշխատանքը մարմնացած սէրն է:

Եւ եթէ չէ՛ք կրնար աշխատիլ սիրով, այլ միայն գգնամբով, նախընտրելի է լինի ձեր գործը եւ նստիլ տանարի դրան՝ ստանալու համար մուրացը(*) անոցմէ, որոնք կը դատին հրճանքով:

Որովհետեւ եթէ հաց եփէ՛ք անտարբերութեամբ, ձեր հացը կ'ըլլայ դառն եւ կ'իսով միայն կ'ամոքէ մարդուն քաղցը:

Եւ եթէ դժկամակի՛ք խաղողը ճգնելու, ձեր դժկամութիւնը թոյն պիտի թորէ գինիին մէջ:

Եւ եթէ երգէ՛ք ճոյնիսկ հրեշտակներու նման, բայց երգելը չե՛րէք, դուք կը խցէ՛ք մարդուն ականջները, թէ՛ ցերեկուայ եւ թէ գիշերուայ ձայներուն դէմ:

Է. ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ապա կ'ին մը ըսաւ.

— Խօսէ՛ մեզի Ռուսութեան եւ Տրամութեան մասին:

(*) Զուգելով գործածել ժողովութիւն քաղցը, կերակրիմ մուրացը, շատ աւելի նշանակաւոր է. Գ.

եւ ինք պատասխանեց.

— Ձեր ուրախութիւնը դիմակագրած տրտմութիւնն է՝ ձեր:

Եւ այն նոյն հարը, ուրկէ կը բխի ձեր խնդուքը, լեցուած էր յաճախ ձեր արցունքներով:

Եւ ինչպէ՞ս կրնար տարբեր ըլլալ:

Որքան աւելի խոր պեղէ վիշտը ձեր էութիւնը, այնքան աւելի ուրախութիւն կրնաք պարփակել:

Բաժակը, որ կը պարունակէ ձեր գինին, նոյնը չէ՞, որ թրծուած էր բրուտին հնոցին մէջ:

Երբ վիճը, որ կը զգուէ ձեր հոգին, նոյն փայտը չէ՞, որ փորուած էր դանակներով:

Երբ ուրախ էք՝ նայեցէ՛ք ձեր սրտին խորը եւ պիտի տեսնէք, թէ ինչ որ ձեզի ուրախութիւն կը պատճառէ, ուրիշ բան չէ, եթէ ոչ այն, որ ձեզ տխրութեամբ համակած էր:

Եւ երբ տխուր էք, դարձեալ նայեցէ՛ք ձեր սրտին մէջ, եւ պիտի տեսնէք, թէ իսկապէս կու լա՞ք այն բանին համար, որ ձեզի հրեմանք առքած էր:

Ձեզմէ ժամով կ'ըսեն. «Ուրախութիւնը աւելի մեծ է, քան տխրութիւնը», եւ ուրիշներ թէ՛ «Ո՛չ, տխրութիւնն է աւելի մեծ»:

Բայց եւ կ'ըսեմ ձեզի, որ անոնք անբաժան են:

Միասին կու գան անոնք, եւ երբ մին առանձին կը ճստի ձեր սեղանին, յիշեցէ՛ք, թէ միւսը քանցած է ձեր անկողինին վրայ:

Իրականութեան մէջ կշիռքի մը նժարներուն նման դուք կախուած էք ձեր տրտմութեան եւ ուրախութեան միջեւ:

Եւ երբ թափուր էք, այն առն է, որ կայուն եւ հաւասարակշռեալ էք: Երբ գանձապահը վերցնէ ձեզ՝ կշռելու համար իր արծաթն ու ոսկին, պէտք է՝ որ ձեր ուրախութիւնն ու տրտմութիւնը իջնեն ու ելլեն:

Ը.— ՏՈՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ապա արմատիք մը յառաջացաւ ու ըսաւ.

— Խօսէ՛ մեզի Տուներու մասին:

Եւ ինք պատասխանեց՝ ըսելով.

— Անապատին մէջ ապաստան մը կերտեցէ՛ք երեսակայութեամբ, քաղաքին պարիսպներէն ներս տուն մը կառուցանելէ առաջ:

Որովհետեւ, ինչպէս տուն կը վերադառնաք ամէն վերջալոյսի, նոյնը կ'ընէ թափառորդը ձեր մէջ՝ միշտ հեռուոր ու առանձին:

Ձեր տունը ձեր ամենամեծ մարմինն է:

Անիկա կ'անի արեւուն տակ եւ կը միրիկէ գիշերուան անդորրութեան մէջ. եւ առանց երազի չէ անիկա: Չ'երազեր ձեր տունն արդեօք, եւ երազելով չի՞ թողոր քաղաքը՝ երթալու համար պարակ կամ բլուր:

Պիտի ուզէի կարենալ հաւաքել ձեր տուները ափիս մէջ եւ տերմնացանի նման զանոնք ցանել անտառներու եւ դաշտերու վրայ:

Երանի՛ թէ հովիտները ձեր պաշտամունքն ենք ըլլալին եւ կամայ կա-

ծանցները՝ ձեր փողոցները, այնպես որ՝ կարենայի՜ գիրար փնտռել այգիներում մեջ եւ գայի՜՝ բերելով հողին բուրմունքը ձեր հագուստներում վրայ՝ Բայց այս բաները դեռ ըլլալի՜ չեն։

Ձեր նախնիները վախճալով՝ իրարու շատ մօտ համախմբեցին ձեզ։ Եւ այդ վախը դեռ պիտի տեսէ՜ քիչ մը։ Տակաւին քիչ մըն ալ քաղաքին պարիսպները ձեր բնակարանները պիտի բաժնեն ձեր գաշտերէն։

Եւ քեզ՜ ինծի, ժողովուրդ՝ Օրփալեզի, ի՞նչ ունի՜ այս տուններում մէջ։ Եւ ի՞նչ կը պահէ՜ ամրափակ դուռներում հոսին։

Ունի՜՜ խաղաղութիւն, մզումն այդ հանդարտ, որ կը յայտնաբերէ ձեր կարողութիւնը։

Ունի՜՜ յիշատակներ, կամարներն այդ շողշողում, որ կը կամրջեն մտքի ճաղագրերը։

Ունի՜՜ գեղեցկութիւն, որ փայլէ ու փայտէ առարկաներում սիրտը կ'առաջնորդէ դէպի սրբազան բարձունք։

Ըսէ՜ ինծի, ունի՜՜ աստի՜ ձեր տուններում մէջ։

Կամ ունի՜՜ միայն հանգստաւտութիւն, եւ ցանկութիւնը ոտար, փափաքն այդ խաբուսիկ, որ տուն կը մտնէ իրեն հիւր, յետոյ կ'ըլլայ հիւրընկալ եւ, վերջապէս՝ տանտէր։

Այո, եւ ան կը դառնայ քանակալ, եւ ձեռքին երկժամի ու խաբազան՝ ձեր ամենավսեմ իդօները կը դարձնէ խամահիկ։

Թեւեւ ձեռքերն իր մետաքսեայ են, բայց սիրտն է երկաթ։

Կ'օրօրէ ձեզ մինչեւ ֆուն միայն, կանգնելու համար ձեր սնանին եւ հեզնելու միտին արժանապատուութիւնը։

Կը ծաղրէ ձեր ողջ զգայարանները եւ գանձէ կը փաթէ դժմիկի դալար սերներն մէջ, իբրեւ դիւրարեկ անօթներ։

Իրակամութեան մէջ, հանգստաւտութեան ցանկութիւնը կը ուղարկէ հագին քոնի՜քը, եւ ապա՝ հեզնանքով կը հետեւի ամուր յուզարկաւորութեան։

Բայց դու՜, գաւակներ միջոցի, դու՜ անհանդարտներ հանգիստի մէջ, ո՛չ ծուղակ պիտի իյնա՜ք եւ ոչ ալ ընտելացալի՜ք։

Ձեր տունը խաբիսի մը պիտի չըլլայ, այլ՝ կայմ մը։

Անիկա պսպղան երիզ պիտի չըլլայ, որ վերէ ծածկէ, այլ՝ քարքիչ, որ աչիւ կը պաշտպանէ։

Ձեր քեւերը պիտի չծալէ՜՜ կարեմալ անցնելու համար դուռներէն, կամ խոնարհէ՜ գլուխը՝ չղպչելու ձեզանին, ոչ ալ վախճալ շնչելէ, որ մի գուցէ չհաբարտին սխաւերն ու փչչին։

Պիտի չբնակի՜ գերեզմաններում մէջ՝ կառուցուած մեռածին կազմէ ողջին համար։

Եւ նոյնիսկ շփե՜ք ու փառաւոր, ձեր տունը պիտի չկարենայ պահել ձեր գաղտնիքը, ոչ ալ պատասպարել ձեր իդօները։


Որովհետեւ այն՝ ինչ որ անում է ձեր մէջ, կը բնակի երկնային դըզ-հակին մէջ, որում դուռը մշուշն է այգաբացին, եւ պատուհանները՝ երգերն ու լուսիւնը գիշերին։


Քարգժ.

(Շար. 2)

digitised by A.R.A.R. Ե. ԳԱՐԱՆԻ

Առն իւրեւորացաւ





ՎԵՐՈՍԻՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Եղբարախա Մուշեղ Գալլոյանի նուիրումը ճիշդագիտական մէջ տեղ բացած էինք նաեւ մահուան առիթով հայրենի թերթերուն լոյս ընծայած գրութիւններէն մեզի հասանկերուն, մասնելով անուշա, որ ամբողջութիւնը շին ներկայացնէր անտէր, անպայման պէտք է ուրիշ դէմքեր եւս տեղ մը ստորագրած ըլլային յայտ մը, տպագրութիւն մը, կոտորակ մը կամ գրական նոր արժեւորումներու նոր փորձեր:

Այդպէս ալ եղաւ:

Հասաւ Սովետականի 28 Դեկտեմբեր 1980ի համարը, ուր Հրանտ Մաթևոսեան, Սանֆան Թոփչեան եւ Վիկտոր Բալայան թրթրուն ու օրտոտուել տողերով անդրագործած են մթնոլորտ շնչաւորելու շնորհով օժտեալ եւ գրական կենդանի ներգրաւման կատարած Գալլոյանի անձին ու ազդանշան բազմազանիչ դիմերուն, ուրիշներուն պէս մօրմօքնելով հայ գրականութեան կրօն այս վերջին հարուածին անդարձանելի անդրագործներէն:

Նշուած արժանիքներուն պատճառով էր, որ կսկիծը համբողջանալու եղաւ, ա՛յն պատճառով, որ բոլորը նոյն կշռոյթով կը շնչէին Գալլոյանի էջերուն մէջ, կ'աղբէին կամ կ'ըսէին Հրանտ Մաթևոսեանի պէտք՝ «Ես մի էիլ մա եմ եւ մա մի էիլ ես», ինչպէս յանախ կ'ըսենք մեր յայտ եւ անյայտ ապրումները իրաւութեամբ շնչաւորած ու հարցականներուն արձագանգող բոլոր անգանդներուն առիթով:

Գալլոյանի նուիրումը գրութիւններուն այս նոր շարքին մէջ, գրական վերլուծման առիթներ՝ տառնակի լահակներուն մը կը ներկայացնէ Սանֆան Թոփչեանի յօդուանին առաջին մասը, հոշակաւոր ֆետայի Գեալլո Մանուկի կենսագրութեան իրրեւ լրացուցիչ տարր: Մուշեղ Գալլոյան, արդէն դիտեն ընթերցողները, թոռն էր Գեալլո Մանուկի, որ ընդարձակ տեղ մը կը դրուէր Թուրքիի ճշայ յեղափոխականի մը յիշատակները շարքին մէջ, երկրորդը հատուկ միջնէն վերջերորդ հատոր՝ իր նախաֆեալայական ճախտուն արարքներով, ֆետայական քաղաքականութիւններով եւ արթնցուցած հեղափոխին յիշատակներով: Սահմանադրութեան հարց, Թուրքիի Վերջնականութեան մէջ կը հորսուի Գեալլո Մանուկի հետքը եւ յիշատակներու գրաւման առնին աչք տպագրութիւնը կը մղէ Թուրքի, որ մեն փոթորիկին զուգացած են Գեալլո Մանուկն ու իր երկու մտերիները: Վաղարշիկն եկաւ, ամենքն ալ տարաւ: (Որդ հատոր, էջ 411), մինչ, ըստ Սանֆան Թոփչեանի պատմանին, Գեալլո Մուշեղ կըրտն է խոյտ տալ փոթորիկին ու կրկին փոթորկած է Թուրքիուն գէտ, հետագայ քաղաքական ընդհարումներու ընթացքին:

Գեալլո Մանուկի եկար ջուանի մ'չ Թուրքիի հատորներուն եւ ոչ ալ ուրիշ որեւէ աւագործի մէջ, իսկ մինչեւ 1928 ապրած ըլլալու փառքը ենթադրել կու տայ, որ լուսանկարային յիշատակ մը կը գտնուի մերձաւորներուն մօտ, որոնք երախտաշատ անակնկալներէն մէկը կ'ընեն, եթէ հանրութեան տեղականութիւնը դարձնեն նման նման մը:

Մեն հար թէ Թոռան հայրենանուէր վաստակին բերումով, Գալլոյան աստիճանական պատմութիւնը խիստ մեն լահակներուն կը ներկայացնէ հայ մարդուն համար եւ այդ պատճառով, գրադէտին նուիրումը մեր բացատրիկն ու հետագայ էջերուն յանդիմաններն ենք, մեր յաջորդ թիւերէն մէկուն մէջ պիտի վերաթարմացնենք ֆետայիին կենդանագիրը, Թուրքիի գրողը:

digitised by A.R.A.R.®



ՄԱԽԵՆԴ ԳԱՎԵՌՆԵԱՆ

Հ Ր. Մ Ա Թ Ե Ի Ո Ս Ե Ա Ն

Ի Ր Ե Ր Կ Ր Ի

Զ Ա Ի Ա Կ Ը

Մահուան հարուածը, Սեւակից ու Մինասից յետոյ, մեր մշակոյթի դարձեալ ճիշդ սրտին էր եւ դարձեալ 47ամեայ հասակում: Երեխաներն այդ տարիքի մարդկանց պապիկ են աւում: Երիտասարդների համար դա հեռու հեռաւոր գալիք է, բայց մենք գիտենք՝ դա գրականութեան մարդկանց սկիզբն է, երիտասարդութիւնը, այդ տարիքում մենք նոր միայն գրիչ բռնել ենք սովորում, կամ այլ բառերով՝ այն երկիրը, այն աշխարհը, որի յայտնագործման ու բնակեցման, ճիշդ խօսքով՝ ստեղծման յոյսը կապւում է մեզանից ամենաշնորհալիների հետ, այդ աշխարհն ահա այնպէս խորհրդաւոր, գեղեցիկ, մեծ ու

անսպառ է երեւում, որ թւում է մէկ հոգու ջանքն ու նոյնիսկ երկար կեանքը չեն գործի հնարաւոր մեծութեամբ մինչեւ վերջին սահմանները բացել այդ աշխարհը: Իր խոստման ու ստեղծելիքի առաջ Մուշեղի կեանքն իրօք դաժանօրէն փչեց հոգաւ, նրանից խլուեց գրականութեան մարդու կեանքի լաւագոյն կէտը, մեզանից նրա կորստով խլուեց շիտակութեան, սիրոյ, զաղտնիքի, վրէժի, պատմութեան, ցասման, յուսահատութեան ու յոյսի անտրոհելի այն կոփումովը, որ մեզանում մարմնաւորուած էր նրանով:

Ես նրա ծննդավայրը տեսել եմ. դա Արագածի հարաւային լայն լանջերն են՝ Թալինը. միւսը՝ հօր

ու պապերի երկիրը՝ Սասունը չեմ տեսել. արմատախիլ մացառների մեան, ջրատուելով, արմատը հին երկրի դժուար ծերայերում թողնելով եկել կառչել է այս լանջերին՝ որ մղձաւանջ է ու ոչ թէ հող. քար է, դժուար են կտրուում, չեն կտրուում ե՛ւ տան, ե՛ւ ծառի, ե՛ւ գերեզմանի տեղը: Գարնան կարն՝ տասներկնգորեայ նուազ ծաղկումից յետոյ անասունը մինչեւ արմատը խժուում է ինչ որ ծամւում է, յետոյ քար ու հող է կրծում. այգտեղ անենար է ապրել, բայց ժողովուրդը այս երկրի ուրիշ ոչ մի կիրճում ու լանջի այդպէս կրպած չէ երկրին, մօր հազի շերտը այսօր է՝ երկու մատ: Չափարի պատերը այնպէս խնամքով ու պինդ են կապուած, ինչպէս ուրիշ տեղերում տները չեն կապուած, չափարապատերից դէնը քարէ մի շինութիւն է՝ գուտ այդ փոքրիկ տեղամասից հանուած ու հաւաքուած քարի ամբար, ուրիշ տեղերում իրենց օջախի ու երեխաների համար չեն այգպիսի պատեր կապում. քարն ուրեմն՝ պիտի կառոյցի մէջ առնել ու պահել, այլապէս ցրիւ կը գայ ու կ'ամայացնի այդ փոքրիկ եղեմները, որ ոչ բոստան կարելի է կոչել, ոչ այգի: Այդ ամբողջ դառը, ծանր, հաւատաւոր աշխատանք է, եւ ուրեմն ինչ դիւային ուժ է եղել, որ կարողացել է այս ժողովուրդին տեղահանել: Եւ փոքրիկ՝ երկու կուց — ասիի չափ փոքրիկ գոգեր կան այդ քարէ մղձաւանջի մէջ — կարմիր գրօշի պէս կարմիր, փարթամ կալաչներ են բռնկւում այդ փոքրիկ

գոգերին, ագրքանց արուն խառն ծաղիկը ոչ մի տեղ այնքան մուգ չի, ինչպէս այդտեղ: Մուշեղն ահա այդ դաժան ու գեղեցիկ լանջերը եւ այդ լանջերի աննկուն երազող, յաղթուած — չպարտուած մարդկանց էր բերում մեր գրականութիւն: Այդ մարդկանց յուշերն ու յոյսերը:

Եթէ ես մի քիչ նա եմ եւ նա մի քիչ ես՝ վատաւորէն գիտեմ, նա քնում էր թշնամուն գրկած եւ արթնանում էր թշնամու հետ. նա չէր հաւատում եղածին, բայց եւ ստիպուած էր հաւատալ. նա ապագայի մէջ կառչուելիք ելուստ էր փնտռում եւ ստիպուած էր հրճարել:

Լեւոնը այգի կը լինի թէ ճանապարհ, բնակավայր թէ գերեզման՝ լեւոնութեան հանդիպելիս թախծը մեր կոկորդը բռնում է: Սարսափելի է հաշտուել այն մտքի հետ, թէ Մուշեղեան նանապարհը, որ մեզ տանում էր Սասունցի Դաւթի ու մանկւկների, ծիրանի փողի ու հայդուկ տղամարդկանց երկիր, այնու լեւոն է: Իւրաքանչիւր ոք է անփոխարինելի, առաւել եւս՝ գունագեղ իւրաքանչիւր տաղանդ, եւ յիմարութիւն է նրան հիմա ուրիշների մէջ փրկուել, բայց եւ սարսափելի է անյոյս մնալը. չի կարելի չսպասել, որ դաժան ու գեղեցիկ այդ լանջերի ժողովուրդը իր հերոսական անցեալից ու նոյնքան հերոսական, մաքառմամբ ու հաւատով լեցուն ներկայից պատմող գաւակ չուզարկի հայրենի գրականութիւն:

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ

ՍԿՋԲՈՒՆՔ ԵՒ ԵԼԱԿԷՏ

Գրական սկզբունքների ու ելակետների տեղադրում:

Այս է, իմ կարծիքով, ավելի քան գրականության վերջին մի քանի տարիների կարևոր տեղադրում:

Եթե խօսքը մասնաւորեմք արձակին, ապա այդ տեղադրումն բնորոշը ժամանակակից մտածողությունն է, սրբափ հայեացք՝ կեանքին, ժողովրդի անցեալին, ներկային ու ապագային, գիտակից հայրենասիրությունն է, ազնիւ համարակությունը, ձգտում՝ խորը քեմաների ընտրությանն եւ մարդկային նուրբ հոգեբանություններ բացելու ուղղությամբ: Զեմ ուզում է՝ *հոնկրեա* մի գործ վկայակոչել խօսքի հաստատելու համար, առաջն ընդհանուր տրամադրությունն է, իսկ այդ սկզբունքով ու մտածողությամբ ստեղծագործություններ կան, ուր մեր կեանքի լուսն ու բարին անհարկի չի գումարադրուել (մանաւանդ), բացերը չեն դրուել խոշորացոյցի տակ, դիտուել է երեւոյթների էությունը, եւ մտեցումը եղել է ազնուօրէն շիտակ: Վերջին տարիներին հայ արձակում փորձեր են արւում մեկնելու ժողովրդի նախադրերը: Կայ նպատակաւորաւորաւորաւոր ժողովրդի պատմական կարեւոր իրադարձությունների *սեւ* գնահատում. նշելով աշխարհի եւ սեփական մեղքի սահմանները: Ուրեմն, պահանջ՝ հեռու սնապարծութիւնից. որովհետեւ ուժեղները ուժի մասին քիչ են խօսում, իսկ ժողովրդի մեծ կորուստը փաստ է: Ուրեմն, հարցադրում՝ սրբափ հայեացք ներկային ու ապագային, որովհետեւ ձմրանը հա՛ սայթափողները, ամրանը ոտները քայլերին են խփում:

Գրականության արդիականության խնդիրը...

Օր օրի մեծանում է ժամանակի միաւորի տարողութիւնը: Հիմա վայրկեանը օր է կտրում, օրը՝ տարի: Աշխարհի այսօրուայ քափի մէջ ժամանակի միաւորը դարձել է իւրայատուկ չափի (տարածութեան) միաւոր, ամէն օր երկիւնքը անելի մտեցում է երկրին. պատում է լուսնի շուրջը: Լուսինը դարձել է ապար ու փոշի, պատահանից երեւում են երկիր մոլորակի տեմաները, չկայ անշատակ ավիանոս, ընդերքի ցուլի հզօր պոզերից վազուց են ծլել *սէյսմիկ* կայաններ, հեփաքները շիրմաքարերի տակ են... Ժամանակի միաւորը դարձել է իւրայատուկ արագության միաւոր, հաշուիչ մեքենաները մարգարէ են, *չափաւորաւորողները* գրոսմայրստերների հետ ոչ ոքի չեն համաձայնում, ամէն վայրկեան աշխարհում խտանում է մարդկանց թիւը, խորանում մեծակութիւնը, ասֆալտը այս քա-

զաճակիրք աշխարհի կօշկատակն է՝ առիւծի քաթի պէս գօրեղ, «ասփալտը» իրատեսակ միջնորմ է մարդու եւ հողի միջեւ եւ այդ «ասփալտի» վրայ երիտանդանի մանկութիւնը կիսատ է մնում. որովհետեւ անժամանակ վրայ է հասնում պատանեկութիւնը, պատանեկութիւնն է կիսատ մնում՝ անժամանակ գալիս է երիտասարդութիւնը, իսկ երիտասարդները... 20րդ դարի 70ական թուականների երիտասարդները, թոււմ է, թէ չպէտք է ծերանան: Երկու պատճառով: Առաջինը՝ մարդկութիւնը կորցնում է թնական մահը՝ ֆէնը դուրս կը գամ «ժամանակակից» հիւանդութիւնների թնկուկից եւ ապա՝ այդ ֆէնից ֆէնը, թէ հասնեն 70-80 տարու, դա կը լինի պարզապէս տարիք, տարիքի թուաբանական գումար, այլ ոչ թէ ծերանական հասակ, ծերութիւն, երբ մարդ դեռ երէկ կրկնում էր իր հասակի սկիզբը՝ մտնկանում էր, միամտանում: Թոււմ է, թէ վաղուայ տարեցները չեն մանկանայ, չեն անմեղանայ (որովհետեւ այսօրուայ երեխաները կիսատ են թողնում մանկութիւնը): Օր օրի ժամանակի գոյներն աւելցնող դառնում է օդի քիւ շարժում, մարդիկ օդի հետ շնչում են նաեւ ժամանակի մտածողութիւնը, եւ ձորապանկի գիւղում ամէն առաւօտ աղօթող մայրս (տառաճանայ էլ չէ) նայում է արեւին եւ որոշում, — արեգակը մեզանից շատ հեռու է: — Ինչից գիտես: — Թէ բարձր չլինէր՝ ամբողջ աշխարհը չէր տեսնի:

Մայրս աղօթում է եւ խառնում արարչի «գործերին»: Հակասութիւն՝ մտքի եւ հոգու, ուղեղի եւ գգացմունքների: Երկիր մոլորակը թեմիսի գնդակի պէս մտնոյն խաղացնող մարդու մտքի եւ հոգու հակասութիւնը անլի խորն է: Հրթիռը տիեզերք ուղարկողը ամենաշատը կարիք ունի՝ սիրոյ, մտերմութեան, լուսութեան, միասնութեան, տաքութեան... Չբուարարուած գգացմունքների մի մեծ կոմպլեքս: Եւ երկիր վերադարձող հրթիռը դարձնալ նրա մտքին է թերում գոհութիւն, ոչ գգացմունքներին: Իսկ մարդը նոյն մարդն է՝ նախամարդու նոյն միս ու արիւնով, նախամարդու արեան յիշողութեամբ, որոշ գգացմունքներին գոհացում տալու համար՝ նախամարդու չափ անգոր: Ուրեմն՝ որտե՞ղ որոնել մարդու երջանկութիւնը: Տիեզերքում: Մարդու կողմից յայտնագործուած լուսնի հանդարտութեան ծովում: Հաշիւ մեքենաների խելօք ուղեգններում...

Այս երեւում մոլորակի՝ վրայ:

Դարձնալ մնում է մի բառ հողի խորհուրդը եւ երեք միլիադից միայն մէկ մարդու ներքնաշխարհը, նրա ուրախութիւնն ու ցար: — Ահա գրականութեան արդիականութեան խնդիրը:

Աշխարհը շատ բան է կորցրել (եւ իր կորուստների կարօտն ունի) եւ շատ բան գտել է: Գտնել աշխարհի գտածը եւ մասնագիտ պէս բաշխել: Եւ պէտք է որոնել աշխարհի կարօտը, — սա նոյնայ չէ, ժամանակավրէպում չէ, այլ՝ արդի հարցերի շարքին նշանակետ:

Եւ կարծում եմ, այնուամենայնիւ, չպէտք է մոռանալ, որ երկինքը բոլորինն է, իսկ երկրի վրայ սահմաններ կան եւ մարդկանց ցեղակցութիւն...

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԵԱՆ


Ս Տ. Թ Ո Փ Ջ Ե Ա Ն

ԿԱՊՈՑՏ ԱԺԽԱՐՀ

Հայրենի գրական մամուլին վերջին տասնը-հինգամեակի կարգ մը համարներուն մէջ լոյս տեսած Մուշեղ Գալուշեանի պատմութիւնները խմբող այս հատորը՝ «Մարութայ օտարի ամօղի-րը», մամուլի տակ էր արգէն, երբ պատահեցաւ անժամանակ մահը:

Հատորին վերջաւորութեան անգուորումն է Ստեփան Թոփչեանի վերլուծումը, որուն որաթերթային տարբերակը նախապէս լոյս տեսաւ «Ազատագրութիւն» մէջ:

Հոս ներկայացուածը վերլուծման ամբողջութիւնն է:

ՄՈՒԾԵՂ
ԳԱԼՈՑԱՆՄԱՐՈՒԹԱ ՍԱՐԻ
ԱՄՊԵՐԸ

«Բարաբիռն ծաղիկ արմուղը» խօսք չէ միայն Դաշտենցի հիանալի վիպապոէմի մասին: Այն շերտ առ շերտ ճշգրտօրէն բացում է նաեւ իրեն՝ խօսքի հեղինակի ստեղծագործութեան բնութիւնը: Այդպէս կը գրի ո՛չ միայն սոսկ երկրակիցը, այլեւ՝ հոգեհարազատ արուեստագէտը. չէ՞ որ Դաշտենցը ու Գալուշեանը նոյն արժանեցերից են զայլիս, նոյն ռդին ու արիւնն են ժառանգել:

Խաչիկ Դաշտենցի «Թանգարանների կամուրջ» ստացաւ մի մեկնաբանութիւն, որը կարող էր հեղինակել միայն նա, ով էր հոգու խորքում զգացել էր էպոսաշունչ այդ պատմութեան գեղարուեստական արժանապատեանը՝ լսել յատուկ եւ ապա տեսել էր հոգու աշխարհ, շռայլեւ նուիրական մասունքները, շնչել խենթացնող բոյրերը, տարել ու վերստեղծել նոյն աշխարհը իր բնութեամբ ու մարդկանցով, իր դժոխքով ու հերոսականութեամբ: Մուշեղ Գալուշեանն էր դա. «Առասպելը յայտնուում է որպէս իրականութիւն, իրականութիւնը դառնում է առասպել, գծուար է նաեւ զատել սահմանները... Եւ այդ իրականը ո՛ր ժամանակում է... ժամանակները խառնուում են՝ հազար տարի առաջ անցած, օրը դալիս-մուլում է ներկայ օրուան, զարեւր ծուլում են վայրկեանին, վայրկեանը՝ յաւերժութեան, եւ ազօրիքի անկոտան քարերը շարունակում են պտտել Մասնայ տան հին ու նոր հեթիաթը»:

Հայ ժողովրդի ազատագրական շարժման բազում նուիրեալներից մէկի՝ իր պապի՝ Գալուշի Մանուկի առունը Մուշեղը դարձրեց գրական անուն, 1880ին ծնունդը Յովհաննէսը (Յովէն) հինգ-վեց տարեկան էր, երբ Գալուշի Մանուկը գինուորազրուեց հայդուկային շարժմանը, մասնակցեց 1892-94 թվականներին Ստանոյ ապստամբութեանը, Բերդալի, Ղարսի, Խաչաթուղի, Ա-

digitised by A.R.A.R.@

ռաքելոց վանքի եւ այլ կոիւններէ: Մուշեղի եղբայր Մարգարէսը վերջիշում է ծնողներէ պատժածը, ա՛յն՝ թէ ինչպէս հայրը մեծ եղեռնի օրերին կորցրեց կնոջը, չորս երեխաներին, Մուշեղ եղբորը, ինչպէս ամուսնացաւ իր մօր՝ տասնչորսամեայ Հոռմէի հետ: Մայրն էլ էր կորցրել չօրը՝ քաջ եւ յաղթանդամ Գրիգորին, իսկ զաղթի ճանապարհին մահացել էին երկու եղբայրներն ու մայրը: 1917ին Յոմէին Հոռմէին վերցրած, նահանջող զօրքի հետ անցաւ Արեւելեան Հայաստան: Կաղզուանում հանդիպեցին չօրը՝ Գալշոյի Մանուկին, որին վաղուց չէին տեսել: Հայր եւ որդի մտան Փեթարայ Մանուկի «Ստառուղիներէ պոլիք», մասնակցեցին Բաշ Ապարանի, Կողբի, Ներքին Քալինի մարտերին, ինչպէս եւ Սարգսրապատի Հերոսամարտին: Սոյիստական կարգերի հաստատումից յետոյ Գալշոյի Մանուկն ու Յոմէն Հրաժեշտ տուեցին զէնքին, վերջապէս հնարաւորութիւն ստացան ապրել խաղաղ աշխատանքով: 1928ին Վախճանեաց Գալշոյի Մանուկը, 1972ին՝ Հոռմէն, 1977ին՝ Յոմէն: Մուշեղի մայրը՝ Հոռմէն, օժտուած էր ժողովրդական բանասացի մէքօքով: Նա անեցաւ վեց աղջիկ եւ երկու տղայ. անուր տառապանքի, անհաւասար, Հերոսական մարտման, մահուան միջով անցած արտակարգ մարդկանց անկողնում կամքի եւս մի վկայութիւն: Սա մի տոհմի պատմութիւնն է: Այս պատմութեան շատ դրուագներ կրկնուել են քաղաքի անգամներ: Եւ ամէն անգամ տեսն արմատից կտրուած տոհմածառի վերբնակումը պատմութեան հրաշքն է, վերածնութեան խորհուրդը: Դրա համար էլ այս պատմութեան տրամաբանութեանը չի ենթարկուած Յոմէի որդի Մուշեղի զոհուելը:

Մուշեղ Յոմէի Գալշոյեանը վախճանեաց 1980 թուականի Հոկտեմբերի 15ին, առաւօտեան եօթն անց Հինգին, մի զարից քիչ պակաս ապրած իր չօրից երեք տարի յետոյ, քառասունեօթը չլրացրած:

«Պատրանք» պատմութեամբ ուղեւոր Առաքելը զոհուած է զրեթէ նոյն պիտի պատահական կրակոցով, երկիրոցանի հրացանում մնացած վերջին փամփուշտով: «Յենուեց հրացանին եւ, այն է պէտք է ելնէր, հրացանը ուրտաց»: Եթէ սա անբացատրելի մի յառակատեսութիւն էր, ապա կան հանրայայտ փաստեր, որք նկարագրելով իր հերոսի զոհուելու հանգամանքները՝ դրողը ասեա կանխատեսել է այն, ինչ իր հետ պէտք է կտտարուէր: Բազէ Առաքելը Աստուծոց բանաստեղծի հոգի էր ստացել. իր պարանքի զոհը աշխարհից հեռացաւ բարի ու խաղաղ ժպտով, քանզի կարողացաւ իրական տեսք տալ այդ դիւթական պատրանքին:

Ամերիկեան գրականութեան պատմութիւնում Ռեյլեամ Սարոյեանի «Իմ սիրտը լեռներում է», «Ձեր կեանքի ցամաքարիք» պիեսների մասին նշուում է. ով մտածում է քաղաքական եւ սոցիալական կառնգործներով, հաստատում է, որ նման երկերը ոչ միայն չեն պատկերում իրականութիւնը, այլեւ ասեա երազում ապրող եւ հեղինակի անհատականութիւնը միայն արտայայտող մտացածին դէմքերով բնակեցուած դատարկ փանտազիաներ են:

Այսպէս մտածողները չէին կարող իմանալ, որ Սարոյեանի այդ ֆանտազիաները նրա հայկական ոգու ծնունդն են: «Մտացածին» են նաեւ Մուշեղ Գալշոյեանի «Մարութայ սարի ամպերը» դրքի կերպարները: Երեւակայականի ու իրականի, ներկայի եւ անցեալի ուսմանապծերում պատուարւած, ուրիշ մի աշխարհից յայտնուած տարօրինակ մարդիկ՝ լի բնութեան ու զեղեցիկ անհատականւոր սիրով, հեռուոր եզերքի տեսլիներով, մանկան նման պարզ ու անմիջական, անսահման բարի ու բնութեան տարերքի նման

մուկելին, փափուկ ու յամառ, մեղմ ու խոտաբարոյ, փխրուն ու կարծր: Այո՛, նրանք տարօրինակ կարող են թուալ օտարականին, բայց ինչպիսի կատեգորիաներով էլ դատի հայոց պատմութիւնն ու մշակոյթն իր խորքով ապրած մարդը, կը կապուի նրանց, կասկած չունենալով, որ Նեալութիւնների մարմնաւորումներ են:

Մարմնացնել պատրանքը. սա մի՞թէ արուեստագէտի խնդիրը չէ: Այդ մարմնացման տառապանքի մի խտացում է Թումանեանի «Պատրանք» բանաստեղծութիւնը, որը, թերեւս, մտայղացում է տուել Մուշեղ Գալշոյեանին իր «Պատրանք» ստեղծելու համար: Պատրանք, որն այլ լոյսով ու գոյնով վերստեղծուած իրականութիւն է, տեսլալին իրականութիւն: Գեղարուեստը եւ պատմութիւնը միաձուլում են, բանաստեղծական երեւակայութիւնը դառնում է իրականութիւն, իսկ այն պարտադրում է անցեալի վերադարձի, հերոսի հոգեւոր յաղթանակի դադափարը: Ընթերցողը կարող է տարակուսել. յաղթանակ, երբ գոհւում է հերոսը: Մինչդեռ համոզիչ է դա, քանզի հերոսը գոհւում է յանուն պատրանքի հաստատման. քարերը շունչ են առնում: Հայրը, Բագէ Առաքելը, շունը, ոչխարի հօտը պէտք է քարանային որպէս տոռապէսալ քանդակներ՝ անցած-դարձածի յաւերժական վրկտներ: Յաւերժական, ինչպէս գեղարուեստական բարձրաթոյլ երեւակայութեան բոլոր ազնիւ պտուղներն են: Բայց գեղարուեստը ժամանակը պարտում է հակառակ ուղղութեամբ, կենդանացնում է անցեալը, վերադարձնում է կորցրածը: Զբոսած աշխարհը, ստուերները դարձած մարդիկ նորից լցւում են կեանքով: Գեղարուեստը, ինչպէս ժամանակի հրաշալիք մեքենա, ետ ու առաջ է տանում իրականութեան պատկերները՝ գոյութեան խորհուրդը պարելու, իմացութեան դժուարին ուղին լուսաւորելու համար: Պատրանքի մէջ խառնուած են գեղեցկութիւնն ու մղձաւանջը: Հեռաւոր ու մշուշուած պատկերի յանկարծակիս յատկացումը հերոսի գիտակցութեան մէջ ուրուագծում է ոչ թէ սովորական մի հովուերգութիւն, ինչպէս երբեմն լինում են անցեալի յուշերը՝ կեցութեան մանրուքներից կենսապայքարի տհաճութիւններից մաքրուած, այլ աւելի ցցուն դարձրած ահաւոր ողբերգութիւնը: «Գրողի ծոցն այն կեանքը, որ այդ օրն իր հետ ապրեց հայրը, ապրեց հօտը, ապրեց շունը, որ յետոյ գալիների բաժին դարձաւ...»:

Պատրանքը ո՛չ միայն պատմական որոշակի արժատներ ունի, այլեւ՝ գեղարուեստական ընթացքի որոշակի հուն. ակունքը կորսուող հայրենիքի տեսիլքի մորմոքող յայտնութիւնն էր հայ դրականութեան մէջ Դանիէլ Վարուժանի «Հացիմ երգը»՝ հայկական Անտառաճառի վերջին երազը: Համաստեղի, Մեծուրու բանաստեղծական աշխարհում տեսիլքը դարձաւ գերիշխող, պոետիկական սկզբունքի վերածուելով Ակսել Բակունցի մօտ: Այս վարպետների արուեստի ժառանգորդն է Մուշեղ Գալշոյեանը՝ նոյնպիսի մի վարպետ:

Ի տարբերութիւն իր նախորդների, որոնք կեանքի մի հատուածն անց էին կացրել Արաքսից այն կողմ կամ տեսել էին ի մօտոյ, Գալշոյեանը այն սերնդից է, որոնք կորուսեալ երկիրը պատկերացրել են կա՛մ երեւակայութեան մէջ, կամ տեսել հեռուից, զրկուած իր բազում գոյներից, ներկուած միայն կապոյտով: Բայց նա օժտուած էր արտակարգ երեւակայութեամբ, ինչ որ նրան պատմում էին ականատեսները, կարողանում էր գեղարուեստական խօսքով կեանքի կոչել: Իր շտեմած միջավայրը, դէպքերը, մարդկանց նա նկարագրում է այնպիսի անմիջական կոնկրետութեամբ, այնքան կենդանա-

նի, որ թւում է գնացել է նախնեաց երկիր, անցել տասնամեակների բովով, թրծուել իրադարձութիւնների հնոցում եւ վերադարձել անցեալի մասունքներին թանկազին բեռով, վերակառուցել այն ո՛չ թէ կարտուած, պատուականերով, այլ՝ համակողմանի ուժովութեամբ: Նրա պատմութեան քննարկէն աչքին են ընկնում ո՛չ միայն անցեալի վառ ու անմոռաց մանրամասների դրուագումով, այլեւ՝ ընդհանրացուած-բովանդակուից վրձնաւարտածներով: Սա ասում ենք ուղիղ իմաստով: արձակագիրը նկարչօրէն պատկերելու, կամ աւելի ճիշդ՝ ներկայացուող շրջադրութեան նկարչական ցայտուն մտապատկերներ առաջացնելու հնարներին է դիմել: Դա ծանր եւ աղնիւ պայքար է կապույտ աշխարհի բազմազանութիւնը բացելու, պատրանքին իրական տեսք տալու, կատարուածը էութեամբ ըմբռնելու համար: Ճեղքել մշուշը, հասնել ժամանակի ու իրադրութեան հիմքերին: «Մեղապարտը» պատմութեամբ չէր ստացրել որոնում է պատճառների պատճառը: Արձակագիրը հմտօրէն առաջ է տանում պատմութեան, հարցաքննութիւնը դարձնելով հնար հերոսի ներքին քննութեան, ինքնազննութեան, ժողովրդի հակառակորդ կենտոտ հարցերի խորապիշ քննութեան: Երբեք նա չի մնում մակերեսի վրայ, որքան էլ այն դրաւիչ լինի:

Եթէ դրականութիւնը բնորոշելիս կարելի է օգտագործել խորք բառը, ապա աներկրայօրէն կարելի է ասել, որ Մուշեղ Գալշեանի խորքի արձակագիրն է: Աւելի՛ն. նա ձգտում է թափանցել խորքերի խորքը:

«Մարութայ տարի ամպերը» պատմութեամբ ասալին տպագրութեամբ կարող է սարքեր կերպարների մի պատկերասրահ թուալ: Բայց տղի կերպարները ո՛չ միայն կապուած են իրենց բախտով, հոգեւոր անդադարձումներով, այլեւ բոլորը արարում են ժողովրդի պատմութիւնը, կենսափոխափայլութիւնը, գործն ու ոգին: Սա մի իշխող դադարափոխ ու նպատակի, մի միջնայրի ու պատմութեան ճշմարիտ զեղարուեստական համապատկեր է, հեղինակի հոգում մարմնացած մի համապարփակ կերպարի ձեւափոխութեան անհատական սարքեր կաղապարների մէջ: Բոլոր այդ կերպարները լիարժեք են, յոյժ ինքնատիպ անհատականութիւններ են, միաժամանակ միասին ստեղծում են անսահման մարդկային էութեան, հիմքի մէջ զարմանալի միասնական, հպուստի մի ոգի: Այդ ծերունի, կեանքից հեռացող կերպարների ուժը հենց դրա մէջ է, այդ ոգու. նրանց արարքները պատմական նշանակալի իմաստներ են ստանում, խորհրդանշական արժէք: Մարդ եւ քնութիւն, հայրենիք եւ պատմութիւն՝ ահա դրքի էութեանն առընչուող մի քանի խնդիրներ: Սրանք մարտած օթնամեակներ չեն, ուր մի կերպ պատասպարում են հեղինակի գուր ջանքերով. իմաստունի դեր ստանձնող ծերունիները, վերածուելով յետահայեաց զանազան վտիտ մտքերի ու խրատների տոպրակի: Գալշեանի ծերունիները քանդում են ժամանակների շղթան, յարակցելով ներկան ու անցեալը կենդանի միասնութեան մէջ: Նրանք մի տեսակ խտացում են յարատեւութեան այն պայծառ զաղափարը, որ հանճարեղօրէն դրուած է հայ ժողովրդի հերոսական էպոսի հիմքում: Նրանք երկրի ուժը կրողներն են, դրա համար էլ ներդաշնակ մուլուածքով հանդէս են գալիս մի կողմից բնութեան, միւս կողմից՝ ժամանակների հետ, մի աշխարհից անցնելով միւսը, տեսիլքից իրականութիւն, անցեալից ներկայ, գոյութեան մի ձեւից միւսը: Նրանց համար կարծես նոյնիսկ մահ չկայ:

Մովսեսի Օհանը լսում է թուրքերի ձեռքով սպանուած, հօր ձայնը եւ պատրաստուած մեկնել հօր մօտ, Մովսեսը, խառնում է մահացած կնոջ հետ. «Պառաւ, էրդիբ կ'երթամ... կը գարմանա՞ս...»: «Պատուհանից ներս

փրթած լուռ է մի թել եկել է Դաւոյին երկինք տանելու», — ասում է հեղինակը, «Դաւոն ճամբորդ է», — մտածում են Դաւոյի զէնքի ընկերները, իսկ ինքը՝ Դաւոն, «— Դաւօ, ո՞ւր է կ'երթաս» հարցին մտքում, որովհետեւ հողեվարքի մէջ խօսել չի կարողանում, պատասխանում է. «— Կոխ է կ'երթում, Պոլի...»։ Խնդիրն այն չէ, Օհանը, Դաւոն, նրանց ընկերները հաւատում են հողիների անմահութեանը թէ ոչ (զույգ է եւ հաւատում են), այլ հին երազի իրականացման բաղձանքը, որը ժողովրդական իմաստութեան հողեղէն բովանդակութեան բաղկացուցիչ մասն է կազմում։ Խնդիրն այն է, որ նրանք հաւատում են արգար գործի անմահութեանը։ Այսպէս են նրանք ըմբռնում կեանքի ու մահուան առեղծուածքը։

«Հողեվարք» բառն այս իրափնճակին չի համապատասխանում, կորուսեալ հայրենիքում արիւն տեսած ու արիւն թափած հերոսները մահ չունեն, ինչպէս մահ չունի փոքր Մհերը։ Ահա այստեղ է, որ աւելորդ են դառնում հարցերը, թէ ինչու անբնական յիշել անցեալը, ո՞ւմ է պէտք այն, ի՞նչ է մնում այդ անցեալից։ Աւելորդ են, որովհետեւ անցեալից մնում է ներկան, առանց անցեալի ճշգրտան հնարաւոր չէ ապագայ կառուցել։ Մոնոլոգն Մաւոն եւ միւսները զրա փաներն են։

Այդ հերոսները շնչաւորում են ողջ արտաշխարհը (դա յիշեցնում է դիցարանական այն ժամանակները, երբ բնութեան ուժերը, գոյը ընկալւում էր որպէս կենդանի արարչութիւն), զրուցում են անցեալի, հարադատ մեղեանքների, կենդանիների, իրերի, բոյսերի, անկենդան աշխարհի հետ։ Փարը, եղը, ամբարը, ծառը, ամէն ինչ, որ շրջապատում է մարդուն, նրա զործունէութեան յղորտն է կազմում, ամէն ինչ, որ իմացութեան ու յիշողութեան ամենաթանկ բաժինն է՝ իր մէջ կենսւոյ ու հողի է կրում։ Այս առիթով մերթ յիշում եւ «Գիւնարի ծաղիկ» պատմութեանը, ուր ծերունի Բարսեղը «Ձեռնափայտը քիթիկացրեց քարին ու լսեց ծանօթ պատասխանը», «Աղօրիքը», ուր Խաչի բարձրաձայն ասում է՝ «Առ ու ալախութիւն տուր», որ ամբարը լսի, «Միայնակ ծառը», ուր Հազրոն կանչում է «արի», իսկ ծառը չի ուզում լսել նրան, որովհետեւ կացնահարուած է, «Երաշտապահը», ուր Մոսէն ջնջում է քարի վերքը՝ դանակով գրուած անունը։

Սրանք սոսկ դեղատուեւտական հնարի՝ բնութեան անձնաւորման արգիւնք չեն, այլ՝ հայրենիքի հանդէպ այրող սիրոյ արտայայտութիւն։ Իր գործերում էլ առ էլ, դրուազ առ դրուազ, զգացմունքային մեծ լարուածութեամբ, բանաստեղծական մեծ չիկացումով արձակագիրը բացում է հայրենասիրութեան էութիւնը։ Հերոսների գիտակցութեան ամէն պահը լցուած է այդ էութեան անթիւ մարմնացումներով, որ յաճախում են մերթ որպէս երազ, մերթ որպէս չափափելի իրողութիւն։

«Տեսնե՞ս այնտե՞ղ էլ, հրդրո՞ւմ էլ նոյն եղանակն է այսօր... Հիմա, այս պահին հայրենի գիւղո՞ւմ էլ թոն է ու մշու... Մուժը մտնում էր դիւղը, թաւալում ձորում, մոլորում ծառերի մէջ...»

«— Ելի վերցրու հրացան, ելի վերցրու հրացան... Աղբիւր Սերոբը մեռնելու իրաւունք էլ չունէր, նենգութեամբ սպանեցին... առասպելական Հեթաթային հերոսութիւն... մէկը հազարի դէմ՝ կռիւ... գերութիւնից դուրս գալու հաւատ... յոյս, սերնդէ սերունդ փոխանցուող յոյս... յոյս... եւ այդ ամէնի արգիւնքը եւ արգիւնքը՝ մշուշով լցուած աւերակներ...։ Որքան խորհրդաւոր է աշխարհի բնութիւնը՝ մուժ, խորհրդաւոր, եւ որքան անստույգ է մարդու ճակատագիրը...»։

Արձակագիրը նիւթը թրծում է իր հողու բոցերով, այնպիսի ջերմու-

Թեմք ու լոյսով է ողողում խորհրդաւոր աշխարհի ու անստոյգ ճակատադրի պատկերները, որ թւում է արձակի գեղարուեստական բնութիւնը պէտք է խարխուլի լիբրիկանութեան առաջ, յատկապէս որ տեսիլքի գրականութեանը յատուկ է հեռաւոր, կորուսեալ իրականութեան բանաստեղծացումը, ոչ թէ սոսկապէս կերտումը, այլ՝ գեղակերտումը, բառիս ուղիղ իմաստով: Երբեմն զարդարուն է թւում այդ արձակը իր տարբեր վարպետների մօտ: Դա սխալ տպաւորութիւն չէ, սակայն նրանք կատարեալ մի մոգութեամբ մնում են օրինկտիւ, հաւասարակշիւ, անհրաժեշտութեան դէպքում զուսպ պատկերման դիրքերում, բանաստեղծութեան կրակը բորբոքելով ներսից: Գալչոյեանը նոյնպէս «չի խոնհում» իր հերոսների գործերին, պարտադրելով «իւր կարծիքը», գէշքերը չի շարադրում բաց էմփիլոնալ յօդուր՝ տակութեամբ: Ամէն ինչ նա դիտում է «կողքից», «թափ», բայց ոչ անտարբեր հայեացքով, երբեմն չափազանց դրաւիչ, նուրբ ու խոնավ հումորով ներկայացնելով իր հերոսների արարքները, բայց խորապէս մտահոգուած նրանց իսխտով: Արուեստագէտի անհանգստութիւնն ու պատասխանատուութեան զգացումը կենդանի, շարժուն ընթացք, յարաճուն ուժով է հաղորդում էպիկական անկաշկանդ պատումին, ստեղծագործութեան տարրերի ամբողջութեանը: Այդ տարրերի եւ առանձին-առանձին, եւ ամբողջական համակցութեան զննումներն ի յայտ են բերում ներդաշնակութեան, չափի էսթետիկական ճշգրիտ զգացումը, բարձր ճաշակը, ամէն ինչ գեղեցիկ ու բարու պլորիվալով անցկացնելու, ժամանակներն ու արարքները իդէալի բարձրութիւնից զննատեսու յատկութիւնը. գծեր, որ պատիւ կը բերէին ամէն մի ճշմարիտ արուեստագէտի: Շարադրանքը նա տանում է նիւթի պահանջած լեզւով ու ոճով, որպէսզի այն իրեն յատուկ եւ յարմար ձեւն ունենայ: Ոտքը յղկուած ու կենսաբային է, անբռնադրու ու ճկուն, սեղմ ու ծանրակշիւ: Կարելի է յիշել բազմաթիւ օրինակներից մէկը՝ շուկան «Դաւան» պատմութեամբ. որքան հոծ եւ ցցուն է այն, թէեւ շուկայի արտաքին գծերի ոչ մի ներառադրութիւն չկայ: Մի քանի տողով արձակագիրը ստեղծում է անողոք իրականութեան ցնցող պատկեր: «Մարութայ սարի ամպերը» այդպէս ցնցող են սկզբից մինչեւ վերջ թէ՛ բովանդակութեամբ, թէ՛ հմուտ, անբասիր կատարումով:

Շատ գեղեցիկ պործ է ընդհանուր առմամբ նաեւ «Մուշ Բալաֆի վերին քաղի տղան», բայց մասամբ, խախտուած է չափը հեքիաթի հատուածներում:

Գրքի առաջին՝ «Կամնը» եւ վերջին՝ «Մամբրէ արքան» գործերում ընդգծւում են հայոց պատմութեան երկու գոյնը: Առաջինը երազի գոյնն է. «...Այսպիսի կապոյտ ու փափուկ մի առաւօտ կար, կապոյտ աշխարհ, Մարութայ սարը կապոյտ քողն ի դէմքին, ժողերն ու կիրճերը կապոյտ երկրներով լցուած, ծերպերին ու ձորաբերաններին թառած գիւղերի շուշը կապոյտ էր, սանձը կտրած Տալուրիկի հեղեց ձորը լցուած կապոյտ թըլթըլթութեամբ էր...»: Միւսը արեան եւ պայծառի գոյնն է. «Հայոց տառերը կարմիր են... քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել լոյս: Եւ կարմիր են, քանզի թրծուել են արդար Արեգակով: Եւ կարմիր են, քանզի սրբազան կրօնիկներն են մասնակից եղել»:

Հայոց այբուբենի եւ նրա ստեղծողի մասին գեղարուեստական գանձերից է «Մամբրէ արքան»: Այս երկում հեղինակը ամփոփում է, ի մի է բերում այն, ինչ ասել է ամբողջ գրքում եւ որպէս գրչի գինուր, Մաշտոցի իսկական աշակերտի իրաւունքով հրդուում է. «...Մի օրուայ կենք էլ ունեւ»:

նաև, այդ մէկ օրն էլ հարկ է, որ կոռւեալ արդարութեան համար, ճշմարտութեան ու գեղեցկի համար: «Մամբրէ արքան» ձեւակերպումն է նաեւ գրողի գերազոյն ինդըի. գրելը զործածել ախպէս, որ հերոսանան, սըրբազործուն, որ շարոյթալըունն զառնան զուղ, զաւանան, ստոր, ստրկամիտ, ինչպիսին գրեում յայտնուող որոշ ախպէրն են: Այդ ախպէրը կարեւոր տեղ չեն գրաւում, երբեմն ուրուագծւում են, սոսկ յիշատակում կամ երեւում ու անցնում: Բայց մէկը միւսից ցայտուն հետք են թողնում: Ահա գրանցից մի փախուր. շրջկոտակի նախագահ Վիրար Եղորիշը («Ներսէն»), նախագահը, փողոց-մեղր ժպիտով հովիւր («Խաշտապանը»), Վասիլեանը («Ձեռնեալ Հերոն»), քննիշը («Մեղապարտը»), ոչխար գնող երիտասարդները («Շուկան»): Վերջին պատմութեամբ կարծառօտ մի ուրուագծով արծակադիրը ներկայացնում է հասարակական մի ողջ շերտի կերպարը՝ դէր, կրկնակցակով, անգոյն, անտարբեր երիտասարդի միջոցով, որը ծերունու երեսին է շարտում դժբաժ, զոգացած փողը. «—Առ, դնա՛ ապրի»: Երեք բառ, որ ամբողջովին մերկացնում են այլտեղակ մի էութիւն. դրա բերած մնասնէրը չեն շափում միայն կողոպտուած գումարի մեծութեամբ, բարոյական միտքները անհամեմատ մեծ, երբեմն էլ անզանալի են:

Իր հերոսներից ամէն մէկի մէջ արուեստագէտը դնում է իր հոգու մի մասնիկը: Մական այդ հերոսները որքան էլ օժտուած են էպոսային ոգու բնական ու անկեղծ յատկանիշներով, նոյնքան իրական են: Աւելի՛ն. ուէալ ճակատագրով, անցեալով ու ներկայով իրենց նախատիպերն ունեն, որոնց շրջանում է ծնուել ու ձեւաւորուել գրողի մարդկային ու ստեղծագործական նկարագիրը: Իր հերոսներին նա մերտադարձել է նրանց նախատիպերից ըստացածը:

«Փոզփուշ Մերոն» պատմութեամբ նկարագրուած է Յովէի հորայր Իւրոն: Մուշեղի հարցին, թէ «Իսթրիմ մմանութիւն ունե՞մ: Հայրս մտածեց-մտածեց... Եւ առանց ինձ մայելու ասաց. Իսթրի աշէրն մմանապէս կապոյտ են»: Այս նուր ինքնահեղանքը, որ պէտք է ընդգծէր իր եւ խիզախ հայդուկի խոր տարբերութիւնը, լոկ ընդգծում է Մուշեղի համեստութիւնը, քանզի նրա ստեղծագործութիւնը ո՛չ միայն վաւերացումն է նախնիների հեռականութեան, այլեւ՝ կատարեալ սխառնք:

ՍՏԵՓԱՆ ԹՈՓՁԵԱՆ

ԶԱՐԹԻՐ, ԼԱՕ, ՄԵՌՆԻՄ ՔԸԶԻ



Եկաւ անարատ ու զնաց անարատ: Աւա՛ղ, շատ շուտ զնաց: Անարատ էր անձնական կեանքում, անարատ էր զբանասիրական մէջ, աշխատանքի մէջ: Այդպիսի անարատութիւնը չեն դատարարակում, չեն սերմանում մարդու մէջ: Այդպիսին նմանում են:

Կրակած առաջին քայլերն արեց «Ավանգարդ» թերթում: Իր ջիւղ, կապոյտ աչքերով մի պայծառ լուսայ լույս բերեց «Ավանգարդ»: Առանց կողմից պարզեւում իր մեծ, զգայուն սրտով շտապորէն նախանձելի բարութիւն ու ջերմութիւն պարզեւեց մեզ՝ իր աշխատանքային ընկերներին:

Փոքրիկ ակնարկներ էր դրում գիւղի աշխատողներին մասին ու հրէ թուացիականութեան դուրսի խօսքեր էին տուում՝ հեղուկ էր, կարճատև: Երբ արդէն անուանի արժանազիր էր, անպարտում էր արքեր լեզուներով ու շորս կողմից զովհատի արժանանում՝ նեղում էր, կործանում: Փառքը երբեք չլուսեցեց նրան: Մուշեղը մնաց նոյն Մուշեղը: Նուրբ, փխրուն սիրտ

ունէր ու շահագնաց ուշադիր էր, յարգալից գէպի ներմակ մարդը, դէպի մայրերը: Աւա՛ղ, նրա արժանէր մէկ անգամ, ուժ մօր հետ էլ նախաճաշար՝ դառնում էր այդ մօր որդին: Իմ մօր որդին էլ էր նա: Մայրս յանախ էր ասում. «Բաւա, Մուշեղս ինչո՞ւ վերջերս չի երևում. կարտակ էմ նրա «Զարթի՛ր, լաւ, մընմիմ էրգի» երգին:

Երբ միասին աշխատում էինք «Արմենական» գրողը հրատարակութիւնում, մի Ծեր մարդու բերեց իմ մօտ:

— Քննուս պիտի օղնես, ինչ զնով էլ լինի, պիտի օղնես:

Մտածեցի, թէ քեան յանցանք է գործել, բայց պարզեւեց, որ այդ մարդը ո՛չ Մուշեղի քեան է, ոչ էլ հարազատը: Պատահում էր հանդիպել, իմացել, որ արտասահմանից իր եօթ երեխաների հետ եկել է որպէս զբոսաշրջիկ ու չի ուզում ես վերադառնալ, ուզում է մնալ հայրենիքում:

Մուշեղն այնպէս էր յուզուել, կարծես զգաւ էր ասորիներ առաջ Մասունի լեռներում կորցրած իր հարազատին: Նրա ջանքերով «Զարթի՛ր» եօթ երեխաներով բնակութիւն հաստատեց Թալինի շրջանում:

Այդպէս էր նա. ուշադիր, հոգատար, արտաքուս դէպի իր ընկերները, դէպի օտար մարդիկ, մարդիկ, սրտեց կարեք անէկին օգնութեան ու ջերմութեան: Այդ ջերմութեան անսպաս էր Մուշեղի մօտ ու զարմանալիորէն բաւականացընում էր բոլորին:

Շիտակ էր ու անդիմում:

Իր կեանքի ճակատագրին երբեք չկորցրեց այդ արժանիքներից եւ ոչ մէկը, արժանիքներ, որոնց յատուկ են միայն մեծատաղով Մարդուն:

Եւստ, շատ շուտ հեռացաւ նա մեզից՝ մեր սրտերում թողնելով կորուսած մի քան, որը երբեք չի բուժւում ու չի սպիտանում: Չարաւոր չի մոռանալ այն մեծ սիրտը, ուր այնքան հրապառախութեան կային ու այնքան փլուտակներ:

Մուշեղ Գալլոյանը շատ երիտասարդներին բարեկամն էր ու քաղում մայրերի որդին, որոնք այսօր տուած են. «Զարթի՛ր, լաւ, մընմիմ էրգի»...»:

ՎԻԿՏՈՐ ԲԱՆԱՅԵԱՆ

Ծ. Տ Ա Ս Ն Ա Պ Ե Տ Ե Ա Ն

Զ Ա Պ Ե Լ Ե Ս Ա Յ Ե Ա Ն Ի «ԱՐԳԵԼՔԸ»⁽¹⁾

Հոս կ'ուզենք անդրադառնալ «Արգելք» խորագրեալ այն գործին, որ 1922 թուականին, սաղմնային ձևի մը ներքեւ, նսայեան կը հրատարակէ Վիեննա եւ ապա Պերլին ապուող «Արեգ»ին մէջ: Այս առաջին մակարդակին, յէպը կը կրէ «Հանգրուանը» խորագիրը:

«Արգելք», քիչ ծանօթ եւ քիչ կարդացուած, հոգեբանական պատկերումն է հետաքրքրական ու կենդանի կին տիպարի մը՝ Սաթիկին: Վէպը Սաթիկի հոգեկանի փոփոխման պատմութիւնն է առաւել: Նսայեան Սաթիկի գիւտը կ'ընէր իր իսկ հոգիին ամէնէն զաղանի ծաւերէն ներս: Եւ սէրը, կըրկին, կը թուի ըլլալ հեղինակի վիպական կառոյց-միջավայրին սկզբնատարրը, հէնքը: Սէրը, անընդհատ ընկալուող իրր գերազոյնը արժէքներէն, բարոյականներուն ամէնէն ցանկալին ու զեղեցիկն է, որուն կը ձգտի ունէ ապրող, շնորհ էակ:

«Արգելք» կը պատմէ Սաթիկի սէրերը: Զուգահեռաբար, եւ ըստ մեր անձնական ընկալման, անիկա կը քծէ վիպական կարելի ստեղծագործութեան մը ուղին, Նսայեանի համաձայն եւ հասլանական շէշտ հասկացողութեամբ: Սաթիկ (թէ՞ Նսայեան Զապէլ), իր իսկ պատմութեով, կ'ապրի հոգե-քնազանցական յեղաշրջում մը: Հերոսուհին, 228 վիպային էջերու ընթացքին, ցատուի եւ երջանկութեան խառն ու զօրաւոր զգացմամբ մը, պիտի՝ յամառօրէն փնտէ, իր ընդերքէն ու նաեւ դուրսի իրականութենէն զոգնայ, իսկ, ստանձնէ՝ իր անհատականութիւնը, պատկէ՛րը⁽²⁾:

Միաժամանակ, Սաթիկ չի կրնար ապրիլ սէրը ու չվերագառնալ իր գոյութեան այն քաջատիկ եղբին, որ է ըլլալ կին-գրող Զապէլ Նսայեանի բազմազան ու հարուստ պատկերի մէկ ցանկացուած, իրաւ, խօսուն կարելիութեան նոյնքան բացառիկ արտայայտչութիւնը, ձեւը:



Ի՞նչ կ'ըսէ «Արգելք»: Հերոսուհին, ճշողցր եւ սիրելի կին, հոմանունին է Բաբուցի երկտասարդ երկրաչափ Դարեգիին, ամուսնացած եւ փոքրիկ Արմիկի մը հայր: Սաթիկ ճամբայ կ'ելլէ Թիֆլիսէն, Բաբուցի մէջ հան-

(1) «Արգելք» (վեպ՝ Անգրկավկասի կեանքէն), Պէրլուք, «Զարթօնք»ի քերթօմ, քիւ 50:

(2) Քիչ ամց, Նսայեան իր հոգեբանական վէպը պիտի վերածէ քստերգութեան եւ որ կը ներկայացուի Փարիզի, Պրիստիի եւ Անվերսի մէջ, հայ քառերսուշներու կողմէ:

դիպելու իր բարեկամին (3) : Ստեփան, երիտասարդ յեղափոխական, կը գլուխդ տեսնէր զնոյն զնապէս մէջ : Ստեփան զաղտնի կը սիրէր սղիկը, Գարեգինի կիներ, մեծահարուստ Նաթալիան, արդէլք կը հանդիսանայ սիրահարներու միացման, ցանկութեան : Վէպի առեւտրական զարգացումը պիտի մղէ հեռուստահին գտնելու իսկական սէրը, յանձնին Ստեփանի : Բայց Ստեփան կը նահատակուի, յեղափոխական գործի ընթացքին, առանց երբեք հասնելու իր պաշտած կնոջ սիրոյն : Սաթիկ վերջնականապէս կը մերժէ Գարեգինը, որ դարձած է արդէլքը ինք (4) :

«Արգելք» ունի հոգեվերլուծական հասու ըմբռնողութիւն : Ամբողջ վէպը կարելի է կարդալ իբր Եսայեան-Սաթիկ տիպարի կողմէ ներքնապէս ապրուած զգացման արարչի մը լեզուական մէկ բեմադրութիւնը : Վէպի բեմադրած եւ իրենց ուժականութեամբ յատկանշուող երկաթաստիճանները, չեղորէն զրակա՛ն սցենարով մը ֆիսիոկոմիք, հոգեբանական psychiatrique ընթերցման մը տարածքը կը կազմեն անխորհրդ : Գրողի տուհին, անգամ մը եւս, եւ որքան պարծանքով, լայն կը բանայ ու կը պնդէ անծայրածիր ներշնչանքներու ներմտացական ու ինքնագոյ զգիտութիւնը (5) : Բնականաբար, գրութեան մղողը միշտ ալ ֆանթազմէ է, դրամատիկ ու ապրող այս կենդանի տարրը, որ զրեթէ կրօնական գունաւորում մը կ'ունենայ հոս, իտէալականի ու սեռայինի հանդիպման դժուար, չըսելու համար անկարելի, կէտերի (6) :

Վէպի վիճակը հերոսներուն բաշխումը մէջտեղ կը բերէ ա՛յն՝ որ կարելի է կոչել «ցանկութեան եռանկիւն մը» (triangle du désir) : Եռանկիւնի ստեղծած խաղը պիտի յարաբերաբար զարդանայ, հոգեկոն թէ ընկերա-քաղաքական առեւտրներու յաղթանակի աղբեղութեան ներքեւ : Գարեգին, սկզբնա-

(3) Ինչպէ՞ս լսել Թամարի մը այս վէպին (1923) Շանթեան «Հոգեբանական ծարաւ» վէպին հետ (1941) :

(4) «Այդտեղ ամբարշտորի մի արգելք կայ... ու այդ արգելքը պիտի լինի քե՛զի, քե՛զի վազը եւ քե՛զի մամուսակ, երբ կեանքը իրեն ընծայէ ուրիշ իսկեր, աւելի քալող իսկեր, ինչպէս տեր, փառասիրտներ, անձնագործներ, պայծառ :

«Բայց եւ առանց այդ արգելքի, խաղը զոյալութիւն չունի... առանց այդ արգելքի խաղը ինչ սկզբնաւորութեան մէջ կը հասնի իր վախճանին ու երկիւմ իր խաղը ստեղծած պահուն ստեղծեր է նման բնագոյնով հարկ եղած արգելքը...» («Արքայական թերթ», 1941, էջ 151-152) :

(5) Dostoievskij-ի եւ, մասնաւորաբար՝ Proust-ի աղբեղութիւնները Եսայեանի գրական կերպին վրայ ակնյայտ են հոս : Հարկ է հաւանաբար յիշել «A la recherche du Temps Perdu»-ի երկրորդ հատորի խօսքը. — «J'étais arrivé à cette conclusion que nous sommes nullement libres devant l'œuvre d'art, que nous ne la faisons pas à notre gré, mais que, préexistant à nous, nous devons, à la fois parce qu'elle est nécessaire et cachée, et comme nous ferions pour une loi de la nature, la découvrir (A la recherche du Temps perdu, La Pléiade tome III, p. 880)» :

(6) Տեղին է յիշել, որ «Արգելք» վէպի երկրորդ բաժինը իբր յարաբեր կը կրէ Յուսէփ Խոսէփ Զաքարի «Մեծահարուստ չէ եւս այլ հեղինակ», եւ որ հոս կը վերաբերի մարդու հոգիին :

Այսպէս՝ «Հանգիստ ու անդորր, անհրաժեշտ եւ ցնորական կենսիկի տեսիլքը կը ցնդի ինչպէս միտքային մը լոյս առաւելում... ահա նաեւ անիջ քաղցրեղանք կենսիկի մը մէջ մոլորած իր հոգին բաց ճանապարհը կ'ընդհատէ անհասկանալի եւ անվերջ, ինչպէս ճանապարհը մահուան, ինչպէս ճանապարհը յաւիտենականութեան» («Արքայական թերթ», 1941, էջ 150-151) :

կան շրջանին, դրական առումով դերակատար է(7), ապա՝ դանդաղ կը վերածուի «արդեւոր»ի, այսինքն՝ ժխտական իրականութեան: «...Բայց եւ առանց այս արգելիքի խաղը գոյութիւն չունի...» («Արգելիք», էջ 152): Կարելի է այս գծով արդէն անդրադառնալ վէպի առաջարկած հետաքրքրական, իր ժամանակաշրջանին համար նոր, կառույցին, որ կը զարգանայ յետադարձ-ակնարկի (flash-back) վիպական թեքելին համեմատ ու հոյակապօրէն կը բեմադրէ հերոսներու հոգե-բնագոյնական խաղընթաց-յեղաշրջումը: Վէպը, իբր կառույց նաեւ, չի կրնար գոյութիւն ունենալ առանց այդ «արգելք»ին, որ մղիչ ազդակ է, ուժական այն հանգոյցն է (նստայեան կը խօսի Սաթիկի «կենդիւն»ի մասին), որուն շուրջ, բաղձաձայն խօսակցութեան մը ձեւով, անիկա կ'ընթանայ ու կը զարգանայ:



Փորձենք խորանալ մեր վերլուծման մէջ: Սաթիկ այստեղ ցանկացող-ենթական է, որ միշտ մէկու մը կը ձգտի: Այս ձգտում-ցանկութիւնը կը ստեղծէ, ինչպէս կ'ըսէինք, եռանկիւն մը՝ քանի որ հոն ցանկութիւնը միշտ կ'ենթադրէ երրորդ մը: Ցանկացումն առարկան իսկ անկարեւոր է վերջի վերջոյ՝ անիկա արժէք ունի այն չափով միայն, որ բացակայ է, արգելադրած: Հերոսուհին՝ Սաթիկ, անդադար կը ձգտի հաճոյքին, բայց չի կրնար խուլ մնալ իրականութեան սկզբունքի մոյսին: Արգելքը չի դադարէ ըլլալէ ետք, որովհետեւ հաճոյքն իսկ, իսկական վայելքի մը կարելի երազը, կառուած է ուղղակիօրէն առաջինի գոյութեան: Այս մակարդակին վրայ, լեզուն, վիպական խօսքը միայն, կը ստանձնէ երեւակայութեամբ, ցանկացումով, որ առաջին ֆանթազմն էր: Սոսկ հոգեվերլուծական գետնի վրայ, Սաթիկ իր սէրն ու իդէալոնութիւնը կը տանձնէ այն վայրկեանին, երբ կը յաջողի քանդել Գարեգինի հետ նախապէս ապրուած իր հոգեբանական նոյնացումը (identification)(8):

Ստեփան, իբր եռանկիւնի դրական կերպար, շատ լաւ գիտէ, թէ Սաթիկի եւ Գարեգինի միջեւ եղածն իսկ «մի դժբախտ քիւրիմացութիւն է... եթէ այդ արգելիքը չլիներ, նրանք վաղուց կ'անդրադառնային. յամենայնդէպս Սաթիկի կը հասկնար: Նա իր ցանկութեամբ համեմատ մի քայքայեալ փոփոխութեան կը կազմել Գարեգինից եւ նա սիրում է իր ստեղծած մարդուն: Եթէ այդ արգելիքը չլիներ, նա շատով կը հասկնար տարբերութիւնը իր երեւակայած մարդուն եւ իրականին... բայց ամէն անգամ, որ իր հոգին էր վիրաւորում,

(7) S^u René Girard, «Mensonge romantique et vérité romanesque», Editions Grasset, Paris, 1961.

(8) Հետաքրքրական է նշել, որ իզականաբան ստանձնումը հոս կ'ըլլայ տնային որեւէ կազմեցում (Ստեփանի հետ ապրուած անդրադարձումներ): Ստեփան, իր մահով, յախտահար կը տեղափոխի Սաթիկի հոգիէն ներս... «...Ձեռ կարող... եւ չեմ կարող դընշալ իր հետ հոգւոյ մէջ կրելով մի այնպիսի ներկայութիւն. սա մի այնպիսի արգելք է, որի չի կարելի յաղթել... սա մարդկային օրէնքներով յառաջ եկած արգելքն է... ես կը շահաւորուեմ, եթէ նոյնիսկ մտքովս անցկացնեմ յաղթել այս արգելքին: Ըստ այդ անհրաժեշտ պէտք է յուսամ, որ նա երկրորդ անգամ մեռնէ իմ հոգւոյ մէջ: Գրիբ նրան, Սոսնիս, ամէն ինչ...» («Արգելիք», «Արգելիք» թերթ, Թիւ 50, էջ 220):

ամեն անգամ, որ մրան զգում էր օտար բոլոր մեղքը քարզում էր արգելիքի դեմ, մրանն արդարև էին արգելիքի համար եւ այդ մի տեսակ նպատակ եւ հաստատութիւն տալիս էր իրենց զգացումներին: Բայց Գարեգին երբեք չի յարգի յաղթել» (Հնարքօճի թերթօն Թիւ 50, էջ 161-162):

Վերադառնալով ցանկութեան մեր եռանկիւնին, որ կը բանայ Սաթիկի Հաղտման իւր հիւսկէնին բոլոր վէրքերը: Ցանկութիւնը երբեք չէ՝ տուեալ, ան ոչխարէի ամէնէն յարափոփոխ ու եռուն հիւսկէն է, յարտուեալ բաց ու չարտուեալ: Այն վայրն է, աւելի տեղի տալով անհատական շարժումներ, իր փնտառումներ ընթացքին: Սաթիկ կը փնտռէր սէրը, որ արժէքն է, եւ իր հէնքը բնականացան է, կրօնա-բարոյական: Կարծես, ցանկութեան մը պարտաւորութիւն, արգելքի վերացումը կը խանգարէ, կ'աղօտէ, բնական յառաջիկա-վացքը անոր: Արգելքի վերացումը, իբրեւ հոգեվերլուծական տուեալ, Սաթիկի համար մահը լոկ կ'ենթադրէ (Հ... Սա մարդկային օրէնքներով յառաջ եկած արգելք չէ...): Եւ կը շանթահարուի, եթէ մայնիսի մտքով անցկացնել յաղթել այն արգելքին...» (9): Ցանկութիւնը կ'ըլլայ բարոյական մտքորոնումներն տանող զարտուղի, բայց փախաւոր ճամբայ: Վէպի տարածքին, աշխարհագրական իմաստով, այս ճամբան կը համապատասխանէ ա՛յն երթուղիին, որ Թիֆլիսը կը բաժնէ Բաքուն, եւ, մանաւանդ՝ Բաքուն կը միացնէ (վերադարձի ճամբով) Թիֆլիսին:

Չարմանալի չէ եթէ Սաթիկ յաճախ իր ընթերցողին ներկայանայ mäsöchistի մը նկարագրային տիպին ներքեւ: Հերոսուհիի փնտառումներն ելքը որքա՞ն կարելի է իսկապէս: Սաթիկ, ճշմարտութեան մը առնչութիւն, անպայման կը փնտռէ զանհրաժեշտ արտաքին ուժ մը, որ զինքը խլէր այդ կնճիռէն եւ անէր հեռուն՝ առանց ետեւ դառնալու...», իշխող մը, մէկ խօսքով, որուն անպայման պէտք է հպատակել (կը զգայ), որ ան է տէրը ու իմքը պիտի հնազանդի անոր ելու եւ խոնարհ ամէն քանի մէջ եւ ամէնուրեք՝ կը զգայ նաեւ, որ գիտակցարար թէ ընդհանրացարար իր քաղաքային իրաւունքները պիտի կայտնայ այլեւս գուշակելու եւ իրականացնելու մայնիսի անոր չարտու-յայտած քաղաքականութիւն...» (էջ 154): Այդ իշխողը միայն Ստեփանը կրնար ըլլալ, քանի որ ան է ամէնէն մօտիկը ու ներկայացուցիչը դէմքը Իտէլիին:

Բնական է, որ Սաթիկի համար, իրականութեան զգացողութիւնը առ-տիճանաբար տկարանայ եւ իյնայ, տեղ տալով երեւակայականին: Երեւա-կայականը կը յաղթանակէ մանաւանդ վէպի վերջուտրութեան, ո՛չ միայն հոգեբանական ներքին մակարդակին վրայ, այլեւ՝ զաղափարական ուղղու-թեամբ, երբ Իտէլիի մը կը փառաբանուի յանձին յեղափոխական Ստեփա-նի(10): Գարեգինի հետ կը խորհարարէ ու կ'ընկղմի քաղքենի կեղծքի աշ-խարհը, թէեւ նոյնպէս ասակ սիրոյ ուժեղ ընկալման: Սաթիկ-Գարեգին-Ստեփան յարաբերութիւններու մէջ կարելի էր ուղեմի կարգաւ իշխողի եւ իշխուողի հեղինակութեան տրամաբանութիւնը:

Վերջացնելու համար, Սաթիկի ցանկութիւնը չի սրբեր հանգիստը:

(9) «A mesure que le rôle du METAPHYSIQUE grandit, dans le désir, le rôle du PHYSIQUE diminue», René Girard.

(10) «La vérité est partout agissante dans l'œuvre romanesque mais elle habite plus particulièrement la conclusion. La conclusion est le temple de cette vérité. Lieu de présence pour la vérité, la conclusion est un lieu dont l'erreur se détourne». René Girard, Mensonge romanesque et vérité ro- manesque, page 344.

ան հմայուած է միշտ աւելիով մը, որ փոփոխութիւնը իր մէջ կը կրէ: Հե-
րոսուհիի անձկոտ ճանապարհը մագլցում է սակայն զէպի կատարեալն ու
բացարձակը, կամ՝ կիրքերէ զերծ այն նուրբ ու բազմաձևարդակ վիճակը,
որ ուղղակի կը վերաբերի «Արգելք» վէպի վերջին յայտնութեան. «Այն ա-
տեն Սաթենիկ զգաց, չը ուժովը իր տառապանքին եւ զօրութիւնովը իր սի-
րոյն, գերագոյն սարսուռով մը հաղորդակցութեան կը մտնէր տիեզերական
խորհուրդի մը հետ. խաղաղութիւնը համակնց իր հոգին լռեցնելով իր ճեր-
քին էութեան բոլոր ձայները եւ մարելով բոլոր փայլատակող լոյսերը...»
(«Արգելք», էջ 221): Ահա թէ ինչու, «խանդարել զայն իր հոգեզմայլութե-
նէն», կը թուի ըլլալ «մի տեսակ սրբապղծութիւն» (եռյն):

Այստեղ միայն Սաթիկ կը հազնի ցանկացուած տարազը զինք ոտեղ-
ծողին, վիպասանուհի Զապէյ Եսայեանին: Վէպի եզրափակումը, փաստա-
րէն, կը վերաջնէ «արդեւք»ը, քանի որ կու տայ այնքան մօտիկ պատկերը
վիպասանուհիին կողմէ իսկ անդադար երեւակայուած, կորսուած ու գտնե-
լած կեոբական իտէալ իղձ-պատկերին: Հերոսուհին ա՛լ կը մեռնի, որպէսզի
միւսը ծնի խօսքը եւ ստանձնէ՝ իր ճակատի գիրը:

ՇՈՒՇԻԿ ՏԱՄԱՊԵՏԵԱՆ

18 Մարտ 1981

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

Գ Ր Ք Ի Վ Ե Ր Ա Պ Ա Ր Ա Ր

Մի երկիր չի կարող քաղաքակիրթ համարուել, երբ ասելի շատ դրամ է ծախսում ծամոնի վրայ, քան զրբի:

ԷԼ. ՀՈՐԻՐԸՐԴ

Ըստ երեւոյթին, մարդը երբեք կապը չի կարում արուեստի անցեալի ձեռք բերումներէ: Եւ եթէ լինում է այդ, այդ տեղի է սեննում քաղաքակրթութեան ազդեցութեան տակ, այն էլ՝ ոչ ամբողջովին եւ ժամանակաւորապէս:

Երբ 19րդ դարի վերջերին հրապարակ իջաւ շարժապատկերը, հասարակագէտները շտապեցին կանխագուշակել, որ շարժապատկերը կը կշանի թատրոնին եւ ղերջ կը տայ դարաւոր այդ արուեստին: Սակայն ճիշդ է, որ թատրոնը ընկերէց շարժապատկերի առջեւ, բայց շարունակեց իր գոյութիւնը եւ այժմ ծաղկման մի նոր շրջան է ապրում:

Շարժապատկերը քաղաքակրթութիւն է, հետեւապէս՝ մտքի արդասիք: Կենդանի թատրոնը արուեստ է, հետեւապէս՝ հողու արդասիք: Թատրոնը չպարտուեց, որովհետեւ մարդը չազդեց, որ այն պարտուէր: Պարզ մարդը կառչած է մնում հոգեկանութեանը, որը նա չի գտնում շարժապատկերում, բայց գրտնում է կենդանի թատրոնում:

Սակայն քաղաքակրթութիւնը հիմնուած լինելով իր նիւթական հղորութեան եւ անցեալի փորձի վրայ, շարունակում է իր յաղթական արշաւները, ազդելով արուեստների եւ ընդհանրապէս մշակոյթ

թի վրայ: Մարդը իր թնոյթով միշտ էլ մատչելին եւ դիրին ճանապարհն է փնտրում, եւ քաղաքակրթութիւնը օդորոշում մարդու այդ բնոյթից, աւելի է մօտենում մարդուն, քան արուեստները: Արուեստները չեն կարող այդ անել, որովհետեւ արուեստները չեն ուսուցում, տեխնիկա չունեն եւ երբեք անցեալի փորձը չեն օգտագործում, եթէ օգտագործեն՝ կը դառնան արհեստ եւ ոչ՝ արուեստ: Արուեստները չեն յառաջադիւմում: Արուեստների ասպարէզում միակ յառաջադիւմութիւնը, որ կատարուել է, այդ ասպարէութեան դիւտն է: Բայց ասպարէութեան դիւտն էլ արուեստ չէ, այլ՝ տեխնիկա: Քաղաքակրթութիւն:

Գրեցի բացի արուեստները չեն կարող զանդաւածային դառնալ:

Այս դարի կէսերին քաղաքակրթութիւնը հրապարակ հանեց հետաւատանստութիւնը: Մարդկային պատմութեան ամբողջ ընթացքում, մարդու ժամանցի ասպարէզում, քաղաքակրթութիւնը դեռ այդպիսի մի նուաճում չէր ձեռք բերել, ինչպիսին է հեռուստատեսութիւնը: Բայց այն այսօր միայն ժամանց չէ, այլ՝ առօրեայ մի ուժ, որի հետ ազդեցութիւն գործելու, մտքերի վրայ ազդելու եւ մտքեր ստեղծելու ասպարէզում ոչ մի այլ ուժ չի կարող համեմատուել: Միացեալ Նահանգներում գոնէ հեռուստատեսութիւնը պետութիւն է պետութեան մէջ:

Հեռուստատեսութեան մասին կարելի է հատորներ գրել եւ դեռ չսպառել նիւթը: Միայն ասենք, որ հեռուստատես-

սը անանկութեան դրանք հասցրեց շարժապատկերին, մտաւ ինչ, ձայնասփիւռին եւ մեր մտահոգութեան առարկայ հանդիսացող զրբին:

Ինչպէս երեւում է՝ մարդը ժամանցի յետեւից է տնջան, ինչքան հացի: Ժամանցի առարկայէն չուր հեռուանալ: Թիւնը իւզոտ հաց է մարդու համար:

Հեռուստատեսութիւնից սկսած այլեւս զիրք չէին կարողում կամ համարեալ թէ չէին կարգում Ամերիկայում: Իրար յետեւից սկսուեցին փակուել դրական-զեղարուեստական պարբերականները: Սկսեցին փակուել կամ կծկուել, փոքրուել եւ մութ անկիւնները քաշուել գրախանութիւնները: Գիրքն սկսեց ամաչել իր զէմքը ցոյց տալու:

Հրատարակչական տները համարեալ թէ դադարեցին զեղարուեստական բովանդակութեան զրբեր հրատարակել:

Հրապարակ եկան վէպի ամբողջովին անհետացման տխուր գուշակութիւնները:

Բայց մարդուն, այդ իմացական առարածին ճանաչելու շատ դժուար է:

Մօտ քսանհինգ տարի է, ինչ իշխում է հեռուստատեսութիւնը, բայց ահա մի քանի տարի է, ինչ սկսել է իր գլուխը բարձրացնել նաեւ զիրքը: Գիրքը վերադառնում է:

Այդ երեւոյթի պատճառները շատ շատ են: Ամէնից զլիաւորն այն է, որ մարդը սկսել է յուսախաբութիւն ցուցաբերել հեռուստատեսի նկատմամբ:

Մեր նպատակը չէ խօսել հեռուստատեսութեան բացասական զեքի մասին՝ մասազ սերունդների դաստիարակութեան հարցում: Բայց ասեմք անմիջապէս, որ հեռուստատեսութիւնը հրաշալի է լուրերը լսելու եւ հին շարժապատկերներ դիտելու մէջ: Այդքան միայն:



Մարդը հոգեկան կենդանի է:

Մեզ համար շատ տաղակալի է, երբ մենք միայն ճարակում ենք, աշխատում, քնում, միւս օրը կրկնելու համար նորնը: Ո՛հ: Այդ մարդկային կեանք չէ:

Դրա համար էլ մենք ձգտում ենք հոգեկան հաղորդակցութեան եւ ժամանցի: Բայց հեռուստատեսութեան ստեղծած ժամանցը մեզ չի բաւարարում, որովհետեւ այդ տեղ հոգեկան հաղորդակցութիւն չկայ: Կենդանութիւն չկայ, ջերմութիւն չկայ: Հեռուստատեսութիւնը քաղաքակրթութիւն է: Քաղաքակրթութիւն նաեւ հակում է ամէն ինչի մեքենայացում մեր կեանքում: Քաղաքակրթութիւնը ձգտում է մարդուն ռոքստ դարձնել: Վերջերս էք, որ անգլիացի գիտնականներին յաջողւեց քիմիական արհեստանոցի մը ապակեայ սրուակում երեխայ ստեղծել: Բայց ցարդ ոչ մի ամուսնական զոյգ իր համար երեխայ չի պատուիրել այդ գիտնականներին: Մարդը, օգտուելով քաղաքակրթութեան բարիքներից, միաժամանակ ձգտում է հեռու մնալ այդ բարիքներից: Այս դրութեան հեղինակը գերադասում է քարիւղի լամպի տակ աշխատել, քան էլ լեկտրական լոյսի:

Հեռուստատեսութիւնը ընտրում է զեղարուեստական մի նիւթ եւ խաղում է մեքենայօրէն: Այդ արդէն կենդանի թատրոն չէ, եւ ոչ էլ զեղարուեստական այն երկը, որ զբիւլ է զրոյը:

Գրողը իր գրքում ներկայացրել է կենդանի կեանքը, հետեւապէս՝ կենդանի մարդը: Մարդն իր հոգերով, իր վրէտով, տառապանքներով եւ թերեւս, ո՛վ գիտէ, իր ուրախութիւնով: Գրողը տուել է մարդու հոգեկան ապրումները, նրա մտածումները, նրա մեղակութիւնը, նրա յուսախաբութիւնը եւ յուսահատութիւնը:

Հեռուստատեսն էլ ձգտում է տալ այդ բոլորը, բայց չի կարողանում: Ժապաչենի վրայ անհնար է ցոյց տալ զուր-զուրանք, վիշտ, տառապանք եւ հոգեկան այլ ապրումներ: Որպէսզի սէր ցոյց տայ, հեռուստատեսն անվերջօրէն համարում է տալիս իր գործող անձանց եւ կամ նրանց անկողին առաջնորդում: Այդ արդէն սիրոյ դոնհկացումն է, որովհետեւ մի իսկական սէրը համարում է չէ միայն եւ ոչ էլ անկողին:

Հեռուստատեսութիւնը կեանքի ուր-

ւազինն է։ Այդտեղ հողի չկայ։ Գիրքը հողեկանութիւն է հենց այն պարզ պատճառով, որ այդ գրքում հեղինակն իր հողին է քամել։

Ես գերադասում եմ ձեռքով գրել, եւ ոչ՝ դրամեքենայով, որովհետեւ դրամեքենայով գրածս արհեստական է թւում ինձ եւ իմ գրութիւնները մնասում են հողեպէս։ Մեզնից ոչ ոք նամակի տակ մեքենայով չի ստորագրում, որովհետեւ այդ նման կը լինէր գրածատնից ստացւած մի Ծանուցման։ Գիրքն այդ մեռադէր ստորագրութիւնն է, որի մէջ մի բան կայ մեր հողիներէց, եւ այն վաւերական է մեր հողիներէ պէս...

Մարդը սիրում է դիրքինը եւ մատչելին, բայց մարդուց անհնար է դատել եւ նրա հողին։ Մարդուն կարելի է խաբել ժամանակաւորապէս եւ երբեք միշտ, եւ հենց այդ պատճառով էլ մարդը չը խաբուեց շարժապատկերից եւ չլքեց կենդանի թատրոնը։ Եւ հենց այդ պատճառով էլ մարդն այսօր չի խաբում հողիներէ կործանելի հեռուստատեսութիւնից եւ վերադառնում գրքին, մեզ միշտ Հաւատարիմ, մեր սրտերին մօտիկ գրքին։

Հեռուստատեսութիւնը, կամ քաղա-

քակրթութիւնը ինչքան էլ ճշնելու լինեն, բայց մեզ չեն կարող հասկանալի դարձնել հանճարեղ Յակոբ Պարոնեանի «Պալատասար աղբար» ողբերգութիւնը։

Պաղտասար աղբարը խաբուած մարդ է եւ նա արդարութիւն է խնդրում։

«Տեարժ եւ տիկնայժ, կի՞նս ամեաւատայիմ գտնուելով իր պաշտօնին մէջ...»,- աղերսում է Պաղտասար աղբարը։ Բայց որու հողը։ Պաղտասար աղբարը մենակ է մնում։ Խաբուած մի մարդ։

Արդ, հեռուստատեսը կարող է տայ Պաղտասար աղբոր հողեկան ապրումները, նրա Ծուռուած հողին։

Ո՛չ։ Անկարելի է։

Բայց միայն «Պալատասար աղբար» չէ։ Հապա միջազգային դասական գրողների դործերը, ինձ վերականգնել է շարժապատկերով եւ հեռուստատեսութեամբ տեսնել Ստենդալի անգլուդական «Կարտիք եւ սնէր», Ֆլորբերի «Մադամ Բուվար», Վիկտոր Հիւկոյի «Թշուառները» եւ բազմաթիւ այլ գրողների դործեր եւ միշտ էլ ամաչել եմ տեսածիս համար։

Եւ գիրքը սկսել է վերադառնալ։

ՍՈՒՐԷՆ ՍԱՆՆԵԱՆ



ԱՆԽՈՐՀՈՒՐԴ ԹԻՒՆԵՐ...

Նորութիւն մը յայտնուած չ'ըլլար, երբ ըսուի, որ արձանագրուած իրադարձութիւններու, բառերու, թիւերու կամ թուականներու հետ գործունեցող անձը միշտ ենթակայ եղած է բուրրովին տարբեր օրինաչափութեան մը, որ բնաւ աղբիւր չունի բանաստեղծական ճախրանքներուն, նոյնիսկ հրապարակագրական զեղումներուն հետ: Այդ թնազաւաններուն մէջ միւրճուելու համար մարդոց առաջնորդը ի հնուց անտի եղած է կասկածը եւ ոչ երբեք ինքնավստահութիւնը:

Իր «Խնամկար»ը կազմելու համար՝ Սիւլիա Կապուտիկեան, ընդհակառակն, առհասարակ իրեն առաջնորդ ընտրած է «Ինքնավստահութիւնը» եւ ճիշդ այդ պատճառով յաճախ ինկած է թիւրիմացութիւններու մէջ:

Ահա ուրիշ օրինակ մը.

«Երբ Ամերիկայում գործող Ազգային պաշտպանութեան միութիւնը կը Է անուր կազմակերպել կամաւորական խմբեր, հայրեմակցական միութիւնների ցանադիր մասնակցութեամբ՝ Կիլիկիա մեկնող ճշմարտը Հայկական լեզուների մէջ ընդգրկուելու են հինգ հազարից աւելի ամերիկահայ երիտասարդներ» (էջ 252):

Ճիշդ չէ նաեւ Հայկական Լեզուներն մէջ ընդգրկուած լեզուականներուն այս թուահամարը: Եւրոյ 500 մուսալիւնցի երիտասարդներով կազմուած լեզուական այդ կորիզին միացան աշխարհի չորս կողմերէն փութացած հայ երիտասարդներ, որոնց ընդհանուր գումարը հազիւ վեր էր հինգ հազարէն եւ, հետեւաբար, զհինգ հազարից աւելի ամերիկահայ երիտասարդներ» չէին կրնար մաս կազմած ըլլալ անոր: Արեւելեան Լեզուներ հիմնուեցաւ 15 Նոյեմբեր 1916ին եւ «գորախաւմիւն թիւը բարձրացաւ 5662 հոգիի, մէկ ու կէս տարուան ընթացքին», ինչպէս կը հաստատէ անոր պատմիչներէն մէկը, Պրնուա տ'Ազի, իսկ մէկուկէս տարի ետք, Նոր կամաւորներ ընդունող էջը դրոշմուած էր արդէն եւ հնչած զրուհի ժամը, Արարայի ճակատամարտին վրայ:

Կը մնայ զարմանալ միայն, որ Նշանաւոր չարժուէին Նշանաւորութիւնը ընդունելէ ետք անդամ Սիւլիա Կապուտիկեան յանձն չէ առած անոր չոր կենսագրականը ճանչնալու ձանձրոյթը:

Արեւելեան Լեզուների կորիզին առնչութեամբ յիշատակուած մուսալիւնցիներու հետ յիշենք նաեւ 1946-47 ներգաղթած մուսալիւնցիները, որոնք, վաթսուհական թուականներուն Հայաստանի մէջ կեանքի կոչուած կարգ մը սրբազան տօներու կարգին՝ սկսան տօնել Մուսա-Լեւան հերոսամարտին յիշատակը: Անդրադառնալով այդ տօնակատարութեան, Սիւլիա Կապուտիկեան կը գրէ.

«Պատմում եմ Յան, քե ինչպէս ամէն տարի Սեպտեմբեր 15ին Հայաստանում ապրող մուսալիմները տօնում են իրենց հերոսամարտի տարեդարձը, եւ քե ինչպէս այս տարի տարեդարձը տօնեց Մուսա-լեւ մեր անունով, ու ես մերից հաճոյքն ունեցայ մերկայ լինելու այս սրտագրու տօնակատարութեանը, երբ անցի այդիմերում հաւաքուել էր մի քանի հազարի հասնող բազմութիւն, երբ անս ողջ Արարատեան զաշտը քնդում էր Մուսա-լեւ-իւրեմ անուական զափ ու գունդանով, հազը դարչացնող շուրջալերով, իսկ քիչ անդին 85 հսկայ կաթսաների մէջ քիչ-քիչում էր խմկագոյն հարկան, արդար ցորենի ու արդար իւրի ուժը իր մէջ ամբարած հոյս այն հարկան, որով զեւ Սասնայ Դանիթն էր սնուել ու մկանակալի՝ Մարայ Մելիքի յէմ կանգնելու համար» (էջ 26) :

Այս տպագրութիւնը կազմուած է 1973ի տօնակատարութեան ազդեցութեան տակ եւ այդ իսկ պատճառով չի կրնար Հերիտայ քլէթացնող կաթսաներուն համար տրուած 85 թիւը ճիշդ ըլլալ: Յայտնապէս միաւորները տեղափոխուած են հոս եւ 58ը եղած է 85: Վրէպ է, կը պատահի: Բայց աւելի լաւ չէ՞ր ըլլար արդեօք, եթէ Սիւլիա Կապուտիկեան թիւերու մասին խօսելէ առաջ՝ խօսէր թիւերու խորհուրդին մասին:

Հոն, Մուսա-Լեւան վրայ սկսաւ ու Այնճարի մէջ կը շարունակուէր թիւերու խորհուրդը, հակառակմարտին մէջ ինկած 18 նահատակներուն յուշատակին տարին 18 կաթսայ Հերիտայ պատրաստելու անդուութիւնը, որուն տարրեր երանգ մը հազորդեցին ներգաղթած հուսա-լիմները, նահատակներու թիւին փոխարէն Հերոսամարտի տարիներուն թիւով կաթսաներ քլէթ-թացնելով, տարին մէկ կաթսայ անելի, եւ այսպէս՝ ամէն տարի:

Առանց խորհրդանշական այդ թիւերուն, պարզ է, հարկան պիտի մընար հարկայ, որուն կաթսաներուն թիւը եւ ինկագոյն հրապոյրը կ'արժեն այնքան միայն, որքան արժեքին ու կ'արժեն անցիլիստական իրադարձութեան անխորհուրդ կուտակումները:

ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ ԹՈՅՈՒԲՈՅ...

Լսովի բաներուն շատ կշիռ տալու, տեսածը առաջին անհարկով թուութիւն յանձնելու եւ յիշողութեան վստահելու անվստահելի դործօնին տուրք տալու մտորութիւններուն հետեւանքով, Սիւլիա Կապուտիկեան ո'չ միայն անճիշդ բաներ կը հազորդէ ընթերցողին, այլեւ հաւատարիմ չի կրնար մընալ նոյնիսկ երէկուան իր ճիշդին:

«Նմանակարձին մէջ ան կը գրէ:

«1921 Բուսկանի Յունիսի 2 եւ 3ին Բեռլինում՝ մահանգայիմ դատարանում տեղի ունեցաւ Սոզանոն Թեռլիլեանի դատարարութիւնը» (էջ 324) :

Ճիշդ է անուշա, որ Սոզանոն Թեռլիլեանի դատարարութիւնը տեղի ունեցաւ այդ թուականին եւ ամսաթիւերուն, բայց «Նմանակարձին չորս տարի հոգ յոյս ընծայուած «Իմ ժամանակը» հատորին մէջ, Թեռլիլեանի հորեղբորորդուին մասին խօսած տեւն, նոյն Սիւլիա Կապուտիկեանը տարբեր թուական մը կը հազորդէ ընթերցողին:

«...Իսկ երբ գիտես, որ հորեղբոր տղան է եւ հագնից ընկնը Սոզանոն Թեռլիլեանի, որս, որ 1922 Բուսկանիմ Բեռլինի փողոցում գնդակահար

սպանեց մեծ եղիւմի կազմակերպիչ Թալաթ փաշայիմ, ծերունու ամէն մի խօսքը մի առանձին հնչեղութիւն է ստանում:

Այս պատմութեան մէջ, ցեղասպան ուղեղը շանթաւար ընող փաստին չափ կարեւոր է ժամանակային տուեալը, մէկ տարուան վաղեմութիւնը նշանակութիւն ունի հաս, նշանակութիւն ունեցու վատութեամբ ընդարմացած հոգիները հենախայտ հպարտութեամբ լեցնելու հոգեբանական առումով մանաւանդ եւ, կը կարծենք, եւէ մէկը իրաւունք չունի անկիւնադարձային այնքան մեծ նշանակութիւն ունեցող թուականի մը հանդէպ այսօրան անփոյթ ըլլալու:

Կայ եւ հարցին միւս երեսը: Թարգմանական նրբին խեղդի մը: Հայրենի մեր գրականութեան մէջ Սիւլա Կապուտիկեան այն դէմքերէն է, որ գրողական իր շնորհներուն եւ ինչ-ինչ կապերուն շնորհիւ ամէնէն աւելի թարգմանուած հեղինակներէն կը համարուի. ցարդ իրմէ լոյս տեսած են ուսերէնի վերածուած տառնակ մը հատորներ, եւ առանձին գործեր՝ ագրիգէններէն, ուսեկերէն, ասլիկերէն, զապիներէն, էստոններէն ու պուլկարերէն լեզուներով:

Յիշեցինք այս հանգամանքը, աւելցնելու համար, որ Թարգմանուելու նման բախտի մը տէր գրողէն մարդ թնականորէն կը սպասէ, որ աւելի նախնախնորքի ըլլայ փաստերուն նկատմամբ, աւելի զգոտ ըլլայ իր դատարաններուն մէջ, եւ աւելի չափաւոր՝ կիրքերու մոլեգնութեան պահերուն: Բայց Սիւլա Կապուտիկեան բնաւ հաշուի չէ առած Թարգմանուելու բոխտին պարտաւորեցնող երեսը, եւ կամ, ա՛յլ գիտէ, այդ բախտին ուղիղ դժոյժ արձագանքելու համար հարկ տեսած է իր էջերուն փոքիւ ու բորբոքել առկամ մեր մոռցուած վէճերը...

ԴԻՌԱՅԱՔ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ

Քիչ մը դժուար է կազմել Սիւլա Կապուտիկեանի տակնաւորայ ջրածրաւորուն, թուականներուն եւ թիւերուն րնդհանուր հաշուեկէիտը, որուած նմոյշներէն ետք անհրաժեշտ ալ չէ բոլորին թուարկումը, անբարեխիղճ այդ վերաբերումին մատնանումէն աւելի կարեւոր է թերեւս մի քանի էջ յատկացնել անխոհեմ դրսեւորումներու, որոնք թիւով քիչ չեն դարձնալ ու ծաւալով ահազին զտեղ կը գրադեցնեն ուղեգրութիւններու խնդրոյ առարկայ հատորին մէջ:

Ռուսերէն կամ այլ լեզուներու թարգմանուելու հաւանականութիւնը, որ, ինչպէս անգամ մը ըսուեցաւ վերը, պէտք է շատ խոհեմ ու փափկանկաւ դարձնել Սիւլա Կապուտիկեանը, կը թուի, թէ շատ քիչ մտահոգութիւն պատճառած է իրեն: Այլապէս, կ'ենթադրենք, լսուած ամէն խօսք, իմացած ամէն տպաւորութիւն ու տեսած ամէն բան հապենապօրէն թուղթին յանձնելէ առաջ, պարտաւորուած պիտի գտար ինքզինք ծանր ու թեթեւ ընել նիւթ դարձած իրադարձութիւնները եւ ընտրական խտութիւններ բանեցնել իր գրչին վրայ: Խոհական նման վերաբերում մը, անշուշտ, պիտի արգելէր իրեն ընթացք տալ բազմազոյն բանաստեղծութիւններուն եւ հետեւ պահէր զնոսնկարձը պատահական անձերէ քաղուած, անդէմ ընդհանրացումներու ճշումէն:

Աւելի պարզ ըլլալու համար՝ դիմենք փաստերէն մէկուն: Մեր կողմ

մերեն մեկնած անձ մըն է խոսողը, հեռանկար՝ էջերէն դարձեալ:

«...Արեւելիի երկիրներուն մէջ այդպէս եղաւ, հայերը այդ շրջագաւտէն կողմացան: Սա ատոր գոհերէն մէկն եմ, այլապէս հիմա լաւ արարքերէն կրնայի գիտնալ: Անրեղեալ կ'ըսէի՝ մի սիրեր արարը, մօտ մի երթար աւրաքի՜ն, անիկա մահմետական է»... Իսկ ինչո՞ւ չսիրել, ինչո՞ւ մօտ չերթալ. եթէ մէկը կայ, որ մեզի օգնութեամբ ձեռք մեկնած է մեր սեւ օրերուն՝ արարման եմ... Այս տեսակէտէն շատ կը հաւմիմ Հայաստանին հաստատած յայտարարութիւնները այլ ազգերու հետ: Յուսով եմ, որ Հայաստանն ալ իր հերթին կը յարգուի ուրիշներու կողմէ: Հշմարիտը աս է, ժողովուրդներու փոխըմբռնումը» (էջ 168) :

Արարներու մասին նման բաներ «ըսած» մարդերը չեն ճշդուած, բայց պէտք է ենթադրել, որ մանուկներու կազմաւորման մէջ վճռական դեր ունեցող գործունէրն են անոնք, ուսուցիչները, խմբագիրները, գրողներն ու գործիչները: Բայց իրապէս եղա՞ծ են մեր մէջ նման վարքագիծով գործած անձեր, կա՞ծ: Մենք կը ճանչնանք այդ մարդերուն վրայ դեր ստանձնած թէ՛ աջ ճակատի, թէ՛ ահակի բոլոր տարրերը, բայց չենք յիշեր մէկը, որ իր մտերմութեան մէջ, հրապարակային ելոյթի մը ընթացքին թէ մամուլի բերումն վրայ նման մտայնութիւն մը դրսեւորած ըլլայ: Ընդհակառակն, դեր ու խօսք ունեցող մէկն գործն անընդհատ ընդգծած է արարերէն լեզուին կարեւորութիւնը՝ թէ՛ մշակութային փոխազդեցութիւններու եւ թէ առօրեայ յարաբերութիւններու կենսական հիմունքներով:

Ըսուածը հաստատող արձանագրութիւններ չունինք այս վայրկեանին ձեռքի տակ, մեր պարզին մէջ կայ լեզուական տարբեր հետաքրքրութեան մը համար «կրօնատուած պաշտօնական խօսք մը միայն, 1 Դեկտեմբեր 1958ին լուս տեսած «Յուսարեւր» օրաթերթի մէկ խմբագրականը, «Արարելէն ստիպմէն», ուր Միլիա Կապուտիկեանի լսածէն բոլորովին տարբեր բան կ'ըսուի:

Ներքերէն շատեր պատեհութիւն ունեցած են իրենց քարձապոյն ուսումը ստանալու տեղումը վրայ. ամենք մայրիսկ յաճախած են համալսարան, ուր տիրող լեզուն արարելէն է:

«Անարդարանալի անհագութիւն պիտի ըլլայ, եթէ ներքեր չուզեն կամ չկարենան օգտուիլ իրենց ընտանեացի պատեհութիւններէն եւ հետամուտ չըլլան հիմնովի ստիպել լեզու մը, որ ա՛յ միայն պետական ու պաշտօնական լեզու է բովանդակ Միջին Արեւելի, այլեւ լուսագոյն միջոցն է ծանօթանալու արարական ելին ու նոր գրականութեան, միւս կողմէ՝ արար ժողովուրդներուն ծանօթացնելու նաեւ մեր գրականութիւնը»:

Այս բաղձանքները, առաջարկները կամ պնդումները նոր չեն մեր մէջ, գոյութիւն ունին առնուազն յիշեմունկէ մը ի վեր, մեր բոլոր դպրոցներուն ծրագիրներուն, թերթերու էջերուն:

Ամէնուն մտածողութեան առարկայ եւ ամէնուն ծանօթ այս իրողութեամբ Միլիա Կապուտիկեանի իմացածը հերքելու կարելիութիւնը այնքան հետաքրքրական չէ, որքան զարմանալի է իր դիւրահաճութիւնը, նաեւ մեր կեանքին անտեղեկութիւնը, ու նաեւ թիւրիմացութիւնները իրենց ընդհանուր մտայնութիւն հայրենի իր ընթերցողին եւ օտարներուն անխոհմտաբար ներկայացնելու փութկոտութիւնը:

Արարերէն լեզուին մասին տրուած այս պզտիկ ծանօթութենէն ետք, քնաւ «միտք չունի» գրադիւ արարներուն մասին ըսուածով, որ իր անընդուն-թեամբ կը գերազանցէ Միլիա Կապուտիկեանի լսած ու հիւրընկալած միւս բոլոր թեթեւութիւնները:

Պետութիւն ունինք, կ'ըսեն, պետական մտածողութիւն սկսած ենք ունենալ, կը դրեն, Հայաստանի պետութիւնը ուշադրութեամբ կը հետեւի սփիւռքահայութեան բախտին, կը պնդեն, պետական քանաստեղծները սակայն կը շարունակեն ականջ տալ ու արձագանգել այնպիսի՝ զրոյցներու, որոնք բաւական հեռու են պետութիւն ունեցող ժողովուրդի մը մտաւորականութեան հասունութիւնը հաստատող երաշխիքներէն եւ շահագործելի իրենց բնոյթով լաւ տուեալներ չեն սփիւռքահայութեան հաշտին...

«ԱՆԴՐԱՆԻՎԸ, ՆՈՐԻՑ ԱՆԴՐԱՆԻՎԸ...»

«Խնամկար»ի էջերուն արծարծուած Հիմնական հարցերէն մէկը վերջին տարիներուն Հայաստանէն սկսած արտագաղթի հոսքն է, որուն յաճախ կ'անդրադառնայ Սիրլա Կապուտիկեան, եւ միտ ցաւով, արդար զայրոյթով, այսօր հազիւ տեսնելի այդ աղէտին վաղուան ահաբհու հետեւանքներուն մասին արձանագրելով այնպիսի՝ այրող խոհեր, որոնց մասին մէկ կարծիք ունին մեր ժողովուրդին բախտով տալանաւոր բոլոր հայերը, Հայաստանի մէջ հայ մը աւելի հաշուելու եւ հայրենիքը աւելի զօրաւոր տեսնելու բաղձանքներով եռելեփող բոլոր հոգիները:

Այս մայր պաշտօնարանի հաւատացող ու ծառայող մարդոց համար ըմբռնելի չեն ու ներելի՝ չեն հայրենաթողութեան շարժառիթներէն որեւէ՝ մէկը, ո՛չ հասցուած վերադարձները, ո՛չ ազրուած նուաստութիւնները եւ ոչ ալ հին զրկանքները դարձանելու օգտին տրուած, պատճառարանութիւնները: Այդ մասին է հայրենիքէն անդրովկիանոսեան ամբար սաւառած մարդու մը եւ Սիրլա Կապուտիկեանի միջեւ տեղի ունեցած սա երկախօսութիւնը.

— ... Ես տանջեցիմ մեզ, տիկիմ Կապուտիկեան... Մի չնչին պատճառով քաղաքին լիագործ հօրս այնքան ցեղեց, որ հիւանդացաւ... Մեզ «ախպար» էին տալիս...

— Մեզ էլ երկար ժամանակ «զաղթական» էին ասում... Ամէն մէկս էլ դառնաւաւ բաներ ձեռնէմ, քոզնէմ գանձ այտնող...

Ըստ Կապուտիկեանի, նաեւ ըստ մեզի եւ ըստ ամենայնի՝ վերի տողին մէջ ուրուացող արտագաղթած հայուն եւ նոյնաման շարժառիթներով մայր զանգուածէն անկատարած միւսներուն հին կամ նոր ցաւերը չեն կրնար հիմք ծառայել այնքան ճակատագրական քայլի մը, ընթացիկ զրկանքներով ու վերադարձներու պատճառով հայրենիքը լքելու արարքը ներելի չէ ոչ ոքի: Խնամկար»ին բազմաթիւ էջերուն վրայ խօսք եղած է այս կեցուածքին մասին, բայց յանկարծ, նոյն հատորին մէջ.

«... Անդրանիկը, մորից Անդրանիկը... Թողած իր պաշտելի Հայաստանը, նրա անխորհուրդ վարիչներից խռոված, նա քափառեց աշխարհում՝ վիրաւոր ու հիասթափ, քրպէս մի Լիւ արքայ...» (էջ 318):

Հայաստանի «անխորհուրդ վարիչներից խռոված» Անդրանիկի խռովութեան պատճառը չէ նշուած ու ճիշդ այդ պատճառով, հայրենաթողութեան մասին սկսուած վերի խորհրդածութիւնը շարունակելէ առաջ, Թերեւս անհրաժեշտ է փակագիծ մը բանալ հոս:

Սասնոյ աշխարհին մէջ Փետրական անկշռելի սխրագործութիւններ արձանագրելէ ետք, կամաւորական շարժման ամբողջ ընթացքին եւ մեծ նա-

Հանքի բարդ օրերուն, այսինքն՝ մինչև 1 Մայիս 1918, մարտական հակա դործունեություն ունեցած հակա էր Անգլիանի, բայց այդ աշխատանքն էլ Արեւելեան Հայաստանի սահմաններուն տեղի ունեցող ամենէն բախտորոշ ընդհարումներուն ատեն այնպիսի կեցուածք մը որդեգրեց ան եւ ձեռնարկեց այնպիսի շարժումներու, որոնք բնաւ իր օգտին չեն վկայեր եւ բոլորովին իրեն դէմ կը հանեն խոռոխու պատճառները։ «Անդրամիկին, — կ'ըսէ պատմութիւնը, — որ Մայիս 1ից ի վեր գրաւում էր Գիւլի Քոզազը, Կրամայունց պահպանել Ախալքալաք եւ Վրաստանի տաճաղ ճանապարհները, սակայն, ճաշմանց այնուհետեւ Բաշուկ Զալալ-Օղլին։ Ու շարունակութեամբ պատմութեան. «Սակայն, թշնամիս սպառնում էր մեր այ քեւին. Անդրամիկը հեռացել էր Զալալ-Օղլիից դէպի Դսեղ, բաճալով անագին տարածութիւն թիւրքերի առջեւ»։

Աւելի պարզացնելով ըստի, որ ընդհանուր հրամանատարութենէն կտրուած Անդրամիկի այս ինքնագլուխ տեղափոխութիւնները տեղի կ'ունենանային ա'յն պահուն, երբ մարտական իր ընկերներուն ղեկավարութեամբ Հայ ժողովուրդը կը մղէր իր ամենէն բախտորոշ ճակատամարտները՝ Մարզաբազարի, Բաշ-Աբարանի եւ Ղարաքիլիսայի դիրքերուն վրայ։ Կենաց եւ մահու այդ անկող օրերուն իր ամբողջ գունդին հետ սառնասրտօրէն Դսեղ դիւղին մէջ ձեռնածայ նստած Անդրամիկը կեցուածքը զեռ բոլորովին չէ պարզաբանուած ու անբժրոնելի կը մնայ ո'չ միայն մեզի, այլեւ՝ Հայաստանի այժմու քննակութեան մէկ մեծ տոկոսին։ Անոր, Անդրամիկի կեանքին այդ հաստատած վէպի նիւթ զարմաւ նոյնիսկ Հայրենի մեր դրոշմներուն, որոնցմէ մէկուն համաձայն, Ղարաքիլիսայի ընդհարման ճգնաժամային պահուն պատգամաւոր սպայ մը կը ներկայանայ իրեն եւ կը խնդրէ.

— «Ղարաքիլիսայում յամա մարտեր եմ գնում, գնեմքա՛լ, — անվստահ սկսեց սպան, — ռազմաբախտի Կրամայունցութիւնը ինձ ուզարկել է խնդիրով Ձեր օգնութիւնը»։

Գնեմքա՛լ Անդրամիկ փոխանակ թուրքին դէմ իր վրէժը վերանորոգելով օգնութեան փութալու օրհասական վայրկեաններ ապրող իր արեւնակիցներուն, կը թորթոքէ, յայտնի չէ, թէ ե'րբ եւ որ'ն դէմ սկսած իր ատելութիւնը եւ ա'յդ հիմամբ կը դժկամակի ընդառաջել խնդրուած, օգնութեան, եւ՝

«Երիտասարդ սպան զգաց, որ զրոյցն աւարտուեց, զգաց, որ Անդրամիկը մերժեց օգնութիւնը, արիւնը յարդեց Կրակմերի մէջ, իր կամքից անկախ աւաց»։

— «Գնեմքա՛լ, Դուք մեծ մեղք էք գործում։ Ձեր անուանով եւ Ձեր յայտով այնուհետ սպասում են իսկապէս իսկ զինուորներ։ Դուք... Դուք իրաւունք չունեք այդպէս վարուելու»։

Վէպէ մը քաղուած տողեր են ասոնք, բայց անյարբի չեն պատմութեան, Անդրամիկ այնպէս ալ չմասնակցեցաւ ներկայ Հայաստանի հիմնադրութեան ճակատման մայրիսեան այդ դիւցազնամարտերուն ու, Պաթումի հաշտութեան դաշնագրէն ետք, եւ այս անգամ այդ դաշնագրերը պատրուակ բռնելով՝ ճամբայ ելաւ դէպի թոյ՝ Քանդակեան բանակի հետ միանալու յոյսով, հետը ունենալով՝

«Մօտ 3000 հետեւակ, 700 ձիաւոր, 150 թնդանօթաձիգներ, 80 զնդա-ցիրաւորներ, 1 գաշտային եւ 3 լեռնային թնդանօթ, 40 ուլա, 15 սայլ եւ մի քանի տասնեակ իսկապէս զաքաւաններ»։

Այդ օրերու պայմաններուն մէջ, այսքան մեծ ուժով մը Հայաստանէն դուրս դալու Անդրամիկի ընթացքը մեկնաբանութեան չի կարօտիր։

digitised by A.R.A.R.®

Պատմութիւնը կ'ըսէ, որ ինչ չհասած, խալիլ փաշայի բանակներուն հետ Զուլֆայի մէջ կռիւի կը բռնուի Անդրանիկ եւ կը ստիպուի նահանջել դէպի հայրենի Ղարաբաղ եւ Զոնգեզուր։ Ակամայ այս վերադարձին յաջորդող առաւ ամիսներուն կրկին կ'անդրանկանայ ան եւ յիշեալ շրջաններուն մէջ կը կատարէ հերոսական ու հայրենասիրական ահագին գործեր եւ, 1919 Ապրիլին՝ կը մտնէ Երեւանի գաւառը։ Հոս կը գրեւորուի ոգի մը, որ մարդկօրէն պիտի հայեցնէր Անդրանիկի սրտին սառույցները, բայց գրեւորուած այդ ոգին որեւէ արձագանգ չի գտներ իր մէջ։ Այսպէս, ի լուր իր վերադարձին՝

«Հայաստանի կառավարութիւնը մըսն ընդառաջ աղարկեց ներքին գործոց նախարարի օգնական Ս. Միմախանին եւ Երեւանի գործադիր պետ Դրոյին՝ բարի գալուստ մաղթելու եւ Երեւան հրաւիրելու համար»։

Միմախան եւ Դրո կ'արժանանան սակայն անոր լուսանկերուն եւ կը մերժէ անոնց երեսնեան հրաւերը, որմէ անմիջապէս ետք նոր պատմութիւն։ Ղարաբաղիսայի ճակատին վրայ թուրքերու դէմ կռուելու խնդրանքը մերժած Անդրանիկ, ընդամէնը «Մի քանի հարրածների ոչ ճիշդ, յերկրածոյ յարերը հիմք ընդունելով»՝ կը ձեռնարկէ Երեւանի վրայ արշաւելու սրբազորութեան, «ըլուրներուն վրայ դաշնակիցներուն զօշակները տնկելով», դէպք մը, որ նիւթ դարձաւ հայրենի ուրիշ վիպասանի մը, Քաջիկ Դաշտակցին, «Թեմշայարների կանչը» գործին հերոսներէն մէկուն բերնին գրած կ'ուսմարանքով։

«— Ի՞նչ ես անում, գորավար, — գոռաց Փարեգին Խախակապուր իրեն վայր նետելով Անդրանիկի ստիւնի մօտ։ Մի տարի առաջ մեր ամբողջ ժողովուրդը կ'աշխատէր զարկեց եւ մէկ մտրդու պէս խառն օսման գաթիչներին դէմ եւ ի՞նչդ ես այժմ քայլում եմդ մայրաքաղաքի վրայ։ ...Ձգաւտացիք, գորավար։ Ի՞նչ պիտի պատմեմ այս երկու փառահեղ գագաթները ապագայ սերունդներին»...

Այս խիստ ամփոփ երազարձութիւններուն մէջ պարզ կ'երեւին Անդրանիկի իր անդրանկութեան մէջ պահելու համար թափուած ջանքերը, Ղարաբաղիսայի հրամանատարութեան խնդրանքները, Հայաստանի կառավարութեան բարի գալուստի ծեսը եւ ինքնաշնորհ ժառանգութեան ուղղած զգաւտութեան հրաւերները, բայց զուր անցան բոլոր ճիղերը եւ Անդրանիկ կառչած մտաց պատճառը անյայտ իր անդրադուլիութեան, որուն տիրու պսակը հղու աղ պայմաններուն մէջ հայրենաթողութեան փաստը։ Խաչիկ Դաշտակցի խօսած է նաեւ անըմբռնելի այս հայրենաթողութեան մասին, այս անգամ Դրոյի բերնով։

«— Իրական Հայաստանը քաղած, անիրականի յետեւի՞ց կը վազես։ Հայաստանը այնտեղ է, ուր Մասիսներն են, — ասաց Դրոն եւ աւելացրեց, — դու գնա՛, քոզ գործը մնայ»։

Սօսուորապէս ասոնք են 1918 Մայիսէն մինչեւ 1919 Ապրիլ Անդրանիկի անունին կապուած իրադարձութեանց մայր դիմերը եւ նոյնն են այդ իրադարձութեանց քիչ թէ շատ տեղեակ բոլոր դէմքերուն տպաւորութիւնները, մինչ Սիւլիս Կապուտիկեանի «Նմանկարքին մէջ»՝

«...Անդրանիկը, նորի՛ց Անդրանիկը... Թողած իր պաշտելի Հայաստանը, նրա անխորհուրդ վարիչներից խռոված, նա թափառեց աշխարհում՝ վիրտուր ու հիասթափ, որպէս մի Լիր արքայ...»։

Պիտի բռնինք պարզապէս, որ հայրենաթողութիւնը տեւաբար դատապարտող դիրքի մը մէջ հայրենաթող Անդրանիկին շնորհուած այս թողութեամբ

Թիւնը առողջ տրամադրութեան մը նշան չէ նորէն ու շատ բան կը պահանջընէ միւս էջերուն արժանագրութեան խոհերուն հնչեղութենէն, մանաւանդ՝ երբ հայրենաթողութեան համար արուած պատճառը այս է միայն, ունի զնրա անխորհուրդ վարիչներին խռոված» ըլլալու ինդուկտիւզ շարժառիթ մը, մինչդեռ ամէնքս ալ զիտենք, ու սովորական հայրենաթողի մը առիթով Սիւլիա Կապուտիկեանէ՛ն ալ իմացանք, որ նման թեթեւ պատճառներով հայ մարդը չի կրնար լքել հայրենիքը, իր բառերով՝ «Ամէն մէկը էլ դառնամայութեամբ ունեմք, քողմեմք զանգ արտն»:

Եւ այդպէս, սովորական հայրենաթողին աններելի պատճառը՝ անսովոր հայրենաթողին համար կը դառնայ ներքին, երբ արամաբանութիւնը կը պահանջէր դրուածքին ճիշդ հակառակը:

Կ'ըսեն, թէ իր պաշտպանութեան յանձնուած Սարգիսի վարտութիւնը մոռցած՝ Անդրանիկ մտասեւեռում դարձուցած էր Կարսի յանձնումը եւ ասով Կը հիմնաւորէր իր «խռովութիւնը»:

Աւելի ուշ՝ Պաթումի դաշնագիրը անձնատուութիւն համարեց եւ աւելի խորացուց խռովութիւնը:

Մէկուն կամ միւսին դաժան պատճառներէն հեռու ապրած ըլլալով հոնգերէ, պահ մը արդար համարենք իր խռովութիւնը, բայց 1919 Ապրիլին, Երեւանի գաւառը մտած եւ ընդհուպ Երեւանի վրայ արշաւանքի ձեռնարկած օրերուն միանգամայն ջնջուած էին իր տրտունջներուն աղբիւրները, վերստացուած էր Կարսը եւ Պաթումի դաշնագիրը կորսնցուցած իր ուժը: Այլ հազար պատճառ կար հայրենի հողին վրայ մնալու, իր երեսնամեայ ոգորումներուն պսակը կար՝ Հայաստանի անկախութիւնը, որ դեռ պէտք ունէր գործիւ արծիւ իր սլացքին, սահմանին վրայ թէ սահմանէն ներս, սահմանին վրայ՝ փայտներու զօրակոյն թուրքերուն վտանգաւոր շարժումները հակակշիռու համար, իսկ սահմանէն ներս՝ թուրք ու թաթար խուժաններուն անընդմէջ շարժումներէն խռովութիւնները սանձելու: Ասոնք, Հայաստանի օրերիմ թշնամիները, երբ լսէին իր անունը, «օձերալ պէս կը սողային իրենց քայլեր», բայց ինք, այդ մէծ հեղինակութիւնը, փոխանակ օձերը դէպի իրենց բոյնը ողջացնող իր ուխտն ու հակառակորդ շարունակելու, ինք հեռացաւ իր արծուերոյնէն ու համազգային վրէժխնդրութեան կոնակ դարձուած՝ հետեւեցաւ ընդամէնը անհատական քինախնդրութեան մը ուղեցոյցին, նախընտրեց արտասահմանը, ո՛չ իսկ արտասահմանին մօտը, Վրաստանը կամ Բուսաստանը, այլ՝ հեռաւոր Ամերիկան, ուր... եւ այլն:

Թողատրուած է մտածել, որ Հանրապետական Հայաստանի զանազան հուրդ վարիչներից խռոված» Անդրանիկը, Ռոբերտային Հայաստանի խորհրդային վարիչներուն օրօք պիտի փութար Հայրենիք, բայց այդպիսի քայլ մը չառաւ ան: Հոս արդէն կը սկսի նոր պատմութիւն մը, որ դուրս կ'իյնայ այս էջին ծիրէն:

Ըսենք միայն, որ այս պայմաններուն մէջ հայրենաթող Անդրանիկին շնորհած Սիւլիա Կապուտիկեանի թողութիւնը, որ սովորաբար իր անհատական կարգով Գաշապետի թեմի անկախութիւն մը ընելու ախապէս մոլութեան շկարներէն զիմագրելու փորձութենէն կու գայ նորէն, կրնայ խորհրդային վարիչներէն խռոված պարզ մարդոց համար ըլլալ արդարացուցիչ օրինակ մը, որ արտահոսքը պատապարտող ուղիին խտրեց կը համեմատի եւ լաւ բաներ չի խոստանար Հայաստանին...

Պ Ա Տ Ե Ր Ը...

Կապուտիկեան յաճախ իօսք կը բանայ նաեւ մեր կեանքին մէջ վաղուց անտի հաստատուած հակադրութիւններուն, քաղաքական տարբեր կեցողածքներուն ու հումանկցական գունաւորումներուն մասին եւ կու տայ անոննեւորը թէ՛ հակադրութեանց ներկայացուցիչներուն եւ թէ պատճառներուն, — Դաշնակցութիւն, Համայնավարութիւն, անկախութեան իդձ, կախումաժութեան իմաստութիւն, «ժամանակավրէպ միբրաժապաշտի եւ իրաւես հայրենասէր»ի տիպարներ, էջմիածին, Անթիլիաս, մենք, դուք, եւայլն, եւայլն։ Եւ անոնց միջեւ կը տեսնէ արժատական տարբերութիւններ եւ բարձրացած պատեր, եւ տարբերութիւն ու պոտ շեղած տեղը՝ կը ջանայ ի՞նք տարբերութիւն մը ստեղծել եւ բարձրացնել պատեր, յենելով մէկ կողմէ իր դարը ապրած ծանօթ կուսակցամոլութեան, եւ միւս կողմէ՝ անվաւեր արարածներու թեթեւութիւններուն վրայ։

Այս է պատճառը, որ իր յուղած հարցերէն շատերը զժուար կը մերււին դարերուն վաւերացումը ունեցող մեր հոգեբանութեան եւ փուլ կու գան անգամ նախնական տրամաբանութեան դէմ։

Ահա իր եզրակացութիւններէն մէկը.

«... Ապա այստեղից, տեսակէտներու այս արմատական տարբերութիւնից սկսած, պատ է բարձրանում, — իրենց տեսմանարարութեամբ տեսլով, — «իրաւ դաշնակցականի» եւ իրաւ սովետական մարդու միջեւ, ժամանակավրէպ միբրաժապաշտի եւ իբրտեսն հայրենասէրի միջեւ, եւ ամէն մէկը շարունակում է ընթացել ի՞ր ճանապարհով. մէկը գնում է կրկին ու երկին երգելու «Մեր հայրենիք քշաւառ, անտէր», միւսը, որ տէրն է հայրենիքի, գնում է կառուցելու այդ հայրենիքը» (էջ 192)։

Վերջապա գնաց։

Արժատական տարբերութիւն, պատ եւ ուրիշ ոչինչ, հայրենիքի հասկացողութեան մէջ հաշտութեան ոչ մէկ եզր, տիրութեան մէջ՝ ներդաշնակութեան ոչ մէկ տուեալ, վիճակը ձգուած է վերջնականօրէն, ամէն մէկը իր ճամբով, մէկը հայրենիքին տէր եւ միւսը ընդամէնը տէր «Թշուառ, անտէր» երգի մը։

Մինչ ամէն ոք ժամանակը հասած կը նկատէ, որ հայրենիքին «տէրերը» պզտիկ բաժին մըն ալ հանեն «անտէրին» տէ՛ր հատուածներուն եւ քիչ մըն ալ իրենք տէր կանգնին «անտէրին», ժողովուրդին խղճմանքը թարգմանելու ու իր արտայայտութիւնները հաշտութեան վէմեր դարձնելու կոչւած բանաստեղծ մը, ահաւասիկ, չես գիտեր որո՞ւ հաշտին եւ ճամբարտութեան ո՞ր հրամայականէն մղուած՝ ամենապատկան բանն՝ անգամ բաժանբաժան կ'ընէ ու բաժիններէն մէկը «իրատեսներուն» բացարձակ կալուածը դառննելով՝ կը գոցէ պատմութեան բաց մնացած տոմարը։

Մենք, ի հարկէ, ընաւ չենք մերժել մեզի շուայրուած «ժամանակավրէպ միբրաժապաշտի» տիպոսը, որովհետեւ ոչ մէր միբրաժմեքէն ամշնալու պատճառ ունինք եւ ոչ ալ մասնաւոր պատճառ մը կայ նախանձելու «իրատես» հայրենասէրներուն, որոնք շարունակ խոյս կու տան իրենց անմիրաժանցեալէն եւ ներքին ամայութեան նոյն դիրքերէն կը ճգնին հեզնել «Մեր հայրենիք», քշաւառ, անտէր»ը։

Ձենք գիտեր ինչու, Միլվա Կապուտիկեան կը կարծէ, որ մարգիկ թշուառութեան ճաշակի մը ի յագուրդ կ'երգեն «Մեր հայրենիք»ը, կամ

զայն երգողներուն մտքին մէջ անպայման թշուառ բանի մը եւ անտէր բաներու պատկերներ կ'աւելանային։

Իր ծնունդ առած վարկեանին զոյութիւն ունեցող իրականութիւնը եւ այդ իրականութեան հանդէպ հաւաքականութեան մը զգայնութիւնը թանձրացնելով հանդերձ, երգ մը, երգերուն բախտաւորը անշուշտ, կը տեւէ մարդոց հոգիին ու շրթներուն ա'յն տտեն միայն, երբ միաժամանակ կ'ընծայէ ու կ'ընկուծի նոր մղումներ, նոր շարժումներն նոր տւիւն, իր ոգիին հաշտ մարդերուն մէջ թափուած արիւնին նոր արիւն, զոհարեցողութեան նոր որակ, ինչպէս եղաւ քանի մը սերունդներու հայրենական սպրումներուն ի միջի ալլոց կշռոյթ տուած եւ անոնց խոյանքներուն մասնակից ու վկայ նախանդանի այդ երգը, որ կ'երգուէր «թշուառն ու անտէր» բոլորովին հերքող թափով մը, այնպէս՝ ինչպէս երբ Փրանսացիները իրենց քայլերգը կ'երգեն՝ իրենց աչքերուն քնա'ւ չի պատկերանար Ռոսէ տը Լիլի օրօք Ֆըրանսայի խիստ առաջնոր արշուող քիթանին, բռնակալութիւնը։

Առ այդ, եւ անգամ մը եւս ընթերցողը մեծախորհուրդ ապրումներու մասնակից դարձնելու համար, Ս. Վրացեանի «կեանքի ուղիներով» եւ «Հայաստանի եանրապետութիւն» անուն հատորներէն յաջորդ էջին կ'արտագրենք «Մեր հայրենիք» մթնոլորտին մէջ պարզուած հարեւաւոր իրադարձութիւններէն երեքը, Անդրանիկի, Դրոյի եւ Արամի հմայքները կրկնապատկած ու անոնց խոռովէ երթին մէջ ու յանձնառութեամբ կրկնապէս քաղցրացած «Մեր հայրենիք» համընդհանուր պոռթկումները, որոնք Սիւրիւս Կապուտիկեանի քմահաճօրէն թշուառացուցած «անտէր»էն բոլորովին հակառակ որակի մը մասին կը վկայեն ու կը հաստատեն վերը ուրուանկարւած երգային տպաւորութիւնը։

Մենք չենք կարծեր, որ նման պահերու մասնակցած եւ մարգերը մեծագործութիւններու առաջնորդած երգի մը հետ կարելի է աշուշտ վարւիլ ու առաջ անոր օր մը զործածուած եւ ուրիշ օր մը մէկզկի շարատուած հազուադէպ մը ժամանակաւոր պաշտօնը։

Այնուամենայնիւ, հետաքրքրական է դիտել, թէ Սիւրիւս Կապուտիկեանի միշտ ա'յս ձեւով ընկալած է «Մեր հայրենիք» եւ արդեօք զայն ազապակած բոլոր մարդերը «ժամանակավրէյ միաժամպալտ» համարած է։

Ո՛չ։ Ըստ իրեն՝ «Մեր հայրենիք» տոմարին մեղքի բաժինին մէջ կը գտնուէի, երբ զայն երգողները դաշնակցական մարդիկ են եւ «անտէր» ու «թշուառ» կողմերէն մաքրուած սրբութիւն է ու սո'ւրբ է անիկա, երբ կը կարծէ կամ կարծել կու տայ, որ ուրիշներ կը հնչեցնեն անոր «թշուառ, անտէր» եւ «շղթաներով կապկապուած» բառերը։

Այսպէս, 1929-էջէն վրայ «Մեր հայրենիք»ն ու զայն երգողները հեղինէ հաք, «Մեր հայրենիք»ով Երեւանէն ճամբայ հլած, եւ «Մեր հայրենիք»ով Վանի մէջ դիմաւորուած Դրոյի եւ Անդրանիկի գունդերուն ազնարկելով՝ նոյն հատորին 336-րդ էջին մէջ կը գրէ։

«... Եկաւորմանի ազգ ճանապարհը ողորում է մայիսեան երկնքին ծաղիկներով։ Նեղ օրերին ամէնքին աւիւն ու ոգի մերշնչող՝ վարձապետանցի «Փանփար» շնորհում է մեծագոյն յաղթանակը, ու մեծօրինակ ոգեւորութեամբ հնչեցնում է մեծ Նախանդեանի սուրբ սողերը։

Մեր հայրենիք շաքանքով
Այսօր տարի կապկապուած.
Իւր քաղք քաղք սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած։

digitised by A.R.A.R.®

Մենքին զրեթէ պղծութեան համազօր արարք էր բերան առնել այդ տողերը եւ երգողները «ժամանակավրէյ միութապաշտներ» էին, մինչդեռ հոս նոյն տողերը դարձած ու հղած են Վեմ Նալբանդեանի սուրբ տողերը։

Ինչպէս «Մեր հայրենիք» պարագային, նաեւ «Իրատես հայրենասէր-ներուն» եւ «ժամանակավրէյ միութապաշտներուն» հանդէպ երկուութիւնը տիրական է Սիւլա Կապուտիկեանի մօտ, եւ մեծ բաւարարութեամբ ինքզինք «հայրենիքի տէր» հռակելով հանդերձ, տիրութեան նոյն սպրուսին կապակցութեամբ ինք եւս, եւ զեռ կարճ ժամանակ մը թուաջ, կը կրէր չքաւարտուած հոգի մը եւ զուրա զալով «Իրատես հայրենասէրներուն» անձուկ սահմաններէն, յաճախ կը նայէր «ժամանակավրէյ միութապաշտներուն» հեռուններուն, միեւնոյն տապալակներով ու ճիշդորով։ Թիւով քիչ չեն միբաժային իր բոնկումները, արտասահմանեան իր մարձահատոյց սաւառնումներէն առաջ կրուած բանաստեղծութիւններուն մէկ զգալի առկոտը այդ մասին կը լիկայէ, միութապաշտին մասին։ Նմոյշ մը.

Այժ եմք քացել քեզից հեռու, հու կարօտով ծերացել,
Մի՞թ է պիտի մեռնեմք մի օր, քեզից անմաս, Արարատ։

Մի՞թէ...

Մենք չենք կարծեր, որ Սիւլա Կապուտիկեան յանուն «Իրատես հայրենասիրութեան» հրաժարի իր մերժէն, ինչպէս չենք կարծեր, որ կրնայ օր մը բուժուիլ իր հոգին արդէն դասական դարձած երկուութիւններէն։

Այս երկուութիւնն է դարձեալ պատճառը, որ տեսակէտներու արժատական տարբերութիւնները նշելէ, իրարու միջեւ պատեր բարձրացնելէ, «Իրաւորները դասակարգելէ, իրատեսներն ու միութապաշտները իրարու դէմ հանելէ ետք, ան նոյն դիւրութեամբ կ'ողորայ.

«... Այստեղ, այս սրահում ամէն ինչ գլխիվայր է, ամբակակամ։ Նոյն ազգից ենք ու նոյնը չենք, հայրենակից ենք, սակայն ամէն մէկն իր մէջ իր հայրենիքն ունի։ Հայ ենք, սակայն հայերէնով իրար չենք հասկանում։ Եւ տոհմասարակ, իրար չենք հասկանում, չենք հասկանում, չենք հասկանում...» (Էջ 371)։

Ամենահազնալի բաներն անգամ պառակտելէ ետք, հոս արժատական տարբերութիւններու խրամատներ բանալէ եւ հոն իրարու միջեւ պատեր բարձրացնելէ յետոյ, իրերահասկացողութեան մեր անընդունակութիւնը դատապարտող Սիւլա Կապուտիկեանի այս ողբը յուզիչ է արդարեւ, եւ շատ՝ «Զենք հասկանում, չենք հասկանում, չենք հասկանում...»։

Հասկնալու մեր կարողութիւնը միշտ եւ ամէն տեղ խոցելի չէ սակայն։ Քիչ անգին տուած ենք հասցէները քանի մը էջերու, որոնց խորքը, խոռվը, նպատակասլացութիւնը, արդարութիւնն ու անկեղծութիւնը անմիջապէս կը մարակեն մեզ, կը հասնանք ա'նգամ անոնց ետին թաքնուած լռութիւնները, բայց թէ Սիւլա Կապուտիկեան ինչ կը հետապնդէ կանխող էջերուն արդէն մատենանշուած «խոհերով» եւ անոնց հարկւրաւոր նմանակներով, իրարպէս՝ «չենք հասկանում, չենք հասկանում, չենք հասկանում»։

Զե՛նք հասկանում...



ԱՄԵՆԱՅՆ ՏԵՂ

Անդրանիկը վազրի կերպարանքով եւ խրոխտ քայլերով անցու խն-
լայեղօրէն ծափահարող եւ կեցցէ պտուղող բազմութեան միջեց զէպի գը-
նացքը, ուր նոյնպէս խոնուած էր խոյարդէտ բազմութիւնը: Վազոնի դի-
մաց, բուռն ծափերի եւ ուռաների տակ, առաջ անցան Օրիորդաց Միութեան
անդամները եւ Անդրանիկին նուիրեցին զեղեւիկ մի զրօշակ: Հազարաւոր
բերաններէց հնչեց.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի ամգամ պիտ մեռնի,
Բայց երանի որ իւր ազգի
Ազատութեան կը գոհուի:

(Գ. Խատոր, էջ 36)

digitised by A.R.A.R.@



Օրուան Հերոսը Դրոն էր: Երեւանի օրիորդները այդ օրը դրօշակ պիտի նուիրէին Երկրորդ խմբին:

Ճաշից յետոյ Երկրորդ խումբը վաշտ-վաշտ շարունց դաշտում, վարչապետների գլխաւորութեամբ: Դրոն իր նժոյգի վրայ՝ խմբի առջեւ: Օրիորդաց Միութեան կողմի յուզուած ճառ խօսեց Վիմադիայի տեսչուհի օրիորդ Եւդենիա Նիկիտչեւա Տէր Սարգսեանը եւ խումբին ընծայեց ասեղնադրօնուած դրօշակ: Հազարաւոր բերաններ երգեցին.

Գնա, եղբայր, Աստուած քեզ հետ,
Ազգի յոյսը քաջալեր.
Գնա, քէեւ չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր:

Դրոն դարձրեց անհանդիստ նժոյգի գլուխը դէպի կամաւորները եւ մի կարճ, բայց կրակոտ ճառ արաստանեց, որ վերջացրեց զրոյական խօսքերով...

(Գ. Խատար, էջ 74)

digitised by A.R.A.R.®



Դրութիւնը դառնում էր սպառնական: Անհրաժեշտ էր ուժեղ եւ արագ գործող, մծոտիտն ու միակամ իշխանութիւն: Այդ իշխանութիւնը Արաբատեան դաշտը ունեցաւ յանձին Արամին:

Այս պահանջի գիտակցութեամբ, Երեւանի ազդարհակութիւնն ու զինւորականութիւնը, էրդրուժի անկման լուրի տպաւորութեան տակ, ժի բազմամարդ ժողովում որոշեցին Արամին յայտարարել զիկտատոր եւ ամբողջ իշխանութիւնը կենտրոնացնել նրա ձեռքը: «Մեր հայրենիք» երգելով հազարաւոր բաղժութիւնը շարժուեց զէպի Արամի բնակարանը եւ յուզիչ հանդիսաւորութեամբ հռչակեց նրան զիկտատոր: Վրայ հասան քաղաքի զօրամասերը եւ Երդուեցին հնազանդ լինել նորընտիր զիկտատորին: Այդ քայլին իր անվերապահ հաւանութիւնը տուեց եւ Ազգ. Խորհուրդը: Այսպիսով, Մարտի առաջին օրերից սկսած՝ Երեւանի բոլանդակ իշխանութեան մարմնացումը դարձաւ Արամը, որ իր պաժանեկի նրբամտութեան ու տակաւի շնորհիւ կարողացաւ շաղկապել շրջանի բոլոր գործօն տարրերը, աշխատանքի լծել ամէնքին:

(Հայաստանի Հանրապետութեան, էջ 136)

digitised by A.R.A.R.®

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ...

«...Այլապէս՝ իրենց խիզճն ու հայրենիքի գոյութեամբ հիմքերը, սըրբութիւնները, էջմիածինն ու Երազանկալի պատիւը լկտիօրէմ աճուրդի համած, իմպերիալիստական Արեւմուտքի փորձուած զնորգներից պահ առ պահ աւելի քարձր գիմ ակնկալող զաղափարի փերեզակների հետ վէճի բոնըւելը շէ միայն անօգուտ է, այլիւ արժանապատուութիւնից ցածր մի գրադում»:

Ձակերտուած այս տողերը կարգացող մարդը անպայման պիտի տարւի մտածել, որ անոնք քաղուած են ստալինեան երեսնամեայ մոռային օրօք անհողի թուղթեր մոտտող Հրաշեայ Գրիգորեանի մը կամ անոր ժամանակակից ժամանակուոր ունէ դժբախտի Հերթական մէկ էլոյթէն:

Բայց մէջրերտուած հատուածը ո՛չ Հրաշեայ Գրիգորեանին կը պատկանի եւ ոչ ալ հանդուցեալ ունէ գրպարտիչի կամ իր գրիչին հանդէպ յարգալի վերաբերումէ դուրի անցեալի մէկ ուրուականին: Անկա պարզապէս առնուած է գէտ հնգամեակ մը առաջ լոյս տեսած Սիւլա Կապուտիկեանի այն միւնտի հատորէն, որ կը կոչուի «Խնամակար հոգու եւ քարտէսի գոյներից»:

Գիտի ըսենք իսկոյն, որ «արժանապատուութիւնից ցածր գրադում» ներով գրադուիլը, ի հարկէ, յանձնարարելի չէ ունէ մէկուն, առաւել եւս՝ բանաստեղծներուն, բայց կը կարծենք, որ օգին մէջ նետուած նման յայտնութիւններով ու նման բառերով («լկտիօրէ՛ն») հանդէս գալը կրնայ շատ ազերս շօնենալ իր արժանապատուութեան հանդէպ նախանձտխնդիր մէկուն մը վարքին հետ:

Եթէ ուրիշին հաճոյ դառնալու համար նման բաներ կը գրէ Սիւլա Կապուտիկեան, հապնալի է իր օգայնութիւնը եւ այդ յանձնառութիւնը արդէն ունի իր անունը, իսկ եթէ համագումով կը գրէ՝ ցաւալի է պարզապէս:

Վերը պարզուած ոգիին օրինակով գրուած օրինակները հազուադէպ չեն Կապուտիկեանի գրչին տակ եւ անոնց մերձաւոր նմանակները կը վերադառնան «Խնամակար»ին մէջ, բայց... տեսէք թէ ի՞նչ:

«Հայրենիքի ու խիզճի» 14 փետրուար 1981ի թիւին մէջ երեւցաւ յօդւած մը, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ շոյալարանութեան նմոյշ ուղերձային գրութիւն մը, ուր, ի միջի այլոց, թոյլ տրուած է սա գիպումը. «Her superb book, Khjangan»:

«Her superb book», որ թարգմանի՝ «Իր հոյակապ գիրքը»:

«Հոյակապ»՝ ա՛յս գիրքը, «Խնամակար»ը:

Միակ միթիթարականը այն է, որ յօդուածագիրը, Հովիկ Օ. Էթեան, թերթերուն մէջ երեւցող պատահական անուն մըն է եւ գիրքերուն հոյակապն ու անկապը իրարմէ գանադանող հանգամանք մը չունի:

Անորոշ մարդերու, սխալ տեղեկութիւններու, խառնաշփոթ ապրումներու, անճիշդ թիւերու, թուականներու, թուցիկ ակնարկներով հաւաքուած անկշիռ ապաւորութիւններու, անտանելի հանգիպումներու ու խտօրէն կոզմակալ վերաբերումներու այդ լարելիութիւնն մէջ, որ «Խնամակար» կը կոչուի, կան իրապէս ուշադրաւ հատուածներ եւ երբեմն էջեր, — վերջին 50 էջերը, Մարտ 22, Ապրիլ 24, 2 Մայիս թուագրութիւն կէսէն անդին, Մայիս 10, 24, Յունիս 26 թուակիրները եւ քանի մը ուրիշներ, ընդամէնը 100 էջ, մէկ հինգերորդը, բայց ամբողջութիւնը «հոյակապ» յորջորջել՝ կը նշանակէ պարզապէս մոխուած չորս հարիւր էջերուն հետ մտխել նաեւ հոյակապ վերադիրին բոլոր անգիպութիւնը:

digitised by A.R.A.R.®

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Յ. ՀԱՀՐԻԿԵԱՆ (ԱՏՈՄ)

ՄԵՐ ՀԱՒԱՏԱՄՔԸ

• Պեյրուք, 1981, Համագգայինի վահե՛ Սեթեան տպարան, 94 էջ,
գիծ՝ 7 լ.սսկի, այլ երկիրներ՝ 2-5 տուլար:



ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿ

ԽՆՁ Է ԴԱՍԱԿԱՐԳԸ

• Պեյրուք, 1981, Համագգայինի վահե՛ Սեթեան տպարան, 374 էջ,
գիծ՝ 12 լ. սսկի:




ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ

ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ

ԿԵԱՆՔԸ ԳԵՂԵՑԻԿ Է

(Պատմութեան ֆեկեր)



digitised by

A. Գ. Բ. Գ.

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ	50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	27 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	5 Լ. ՈՍԿԻ

بَاكِينُ
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 المدير المسؤول
 السيد اربن كارنيك قزانيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITERAIRE & ARTISTIQUE

Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

ԲԱԿԻՆ
 ԱՐՏԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԵԱՏԻ

Խմբագիր
 ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրությունը տեղադրված է
 ՅԱՐՈՒԹԻՆ ԳԵՐԳԵՐԵԱՆ
 ԱՄԲԻԱ ԿԻՐԱՆՈՒԹԵԱՆ

B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN
 Tel. 296898